

9/47.925)

Է-Կ

Երգանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԵՏՈՒԵՖՈՐՄՅԱՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայպետհրատ Երևան 1964

9/47.925/

225

Ե-13

Եզանյան Մ.

Հայաստանի հեռու-

Վյան ազրարային հարաբեր

զինը 19 կոպ

9(47.925)

6 - 13

Մ. ԵԳԱՆՅԱՆ

13

ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԵՏՈՒԵՖՈՐՄՅԱՆ
 ԱԳՐԱՐԱՅԻՆ
 ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

295

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏՈՒԵՖՈՐՄՅԱՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
 ԵՐԵՎԱՆ



9 (С 43) 1
b 18

МИХАИЛ НИКОЛАЕВИЧ ЕГАНЯН
ПОРЕФОРМЕННЫЕ АГРАРНЫЕ ОТНОШЕНИЯ
АРМЕНИИ

(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1964

Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն Ի Փ Ո Խ Ա Ր Ե Ն

Այս աշխատության մեջ շարադրել ենք ագրարային հարաբերությունները և կապիտալիզմի ձևավորումն ու զարգացումը հետոսոցիալիստական Արևելյան Հայաստանում: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ հարցերի ուսումնասիրումը կարող է լիարժեք լինել միայն այն դեպքում, երբ հետազոտողը աչքաթող չի անում երկրամասի գաղութային ենթակայությունը և, միաժամանակ, հաշվի է առնում տիրող հարաբերությունների առանձնահատկությունները: Ցավոք, սովետական պատմաբանները և տնտեսագետները մինչև այժմ ոչ բոլոր դեպքերում են պատշաճ կերպով պահպանել այդ պահանջները:

Պրոֆ. Վ. Ռշտունին առաջինն է ձեռնարկել գյուղացիական ուսումնասիրությունը Հայաստանում:

«Գյուղացիական ուսումնասիրությունը Հայաստանում» իր մենագրության մեջ նա բազմակողմանիորեն վերլուծում է հողային ուսումնասիրության վերաբերյալ ցարական կառավարության օրինադրությունները, հետազոտում է գյուղացիական հողաբաժինների վիճակը, պարհակները, փրկագնման պայմանները, ուսումնասիրում է հետ կապված հասարակական հոսանքները և, վերջապես, ուսումնասիրում է հետևանքները: Չժխտելով այդ հարցերի ուսումնասիրության խիստ կարևորությունը, մենք չենք կարող շարձանագրել, որ հարգելի պրոֆեսորը այդ հարցերն ուսումնասիրել է՝ պատշաճ ուշադրություն չդարձնելով նրանց ներքին կապի վրա և այդ պատճառով էլ չի թափանցել արտաքինապես հանդես եկող երևույթների ներքին էության մեջ: Դրա համար էլ ընթերցողը լիակատար պատկերացում չի կազմում ինչպես ուսումնասիրության կապակցությամբ երկրում ստեղծված դրություն, այնպես էլ նրա իրագործման մասին:

Պրոֆ. Ռշտունին իրավացի կերպով նկատում է, որ ցարիզմը Հայաստանը դիտում էր իբրև իր գաղութի, և գյուղացիական ռեֆորմի վերլուծման ժամանակ այդ երևույթը շահեք է վրիպի մեր ուշադրությունից: Թվում է, թե ելնելով այդ միանգամայն ճիշտ պահանջից, նա իր հետազոտությունամբ պետք է հանգեր այն հետևություն, որ հողային ռեֆորմի վերաբերյալ ցարական կառավարության հրատարակած օրինադրությունները շէին կարող քիչ թե շատ լուրջ փոփոխություն մտցնել գոյություն ունեցող հողային հարաբերությունների մեջ. հենց այդ պատճառով էլ կապիտալիստական հարաբերություններն այստեղ իրենց համար շատ ավելի դժվար էին ուղի հարթում, քան բուն Ռուսաստանում, օրտեղ, իրոք, հողային ռեֆորմը անցկացվեց, և գյուղացին դարձավ հողի մասնավոր սեփականատեր: Հեղինակը ոչ միայն այդ չի անում, այլև տարօրինակ կերպով հանգում է այն եզրակացության, թե գյուղացիական ռեֆորմը Հայաստանում անց էր կացվում գյուղացիների համար ավելի բարենպաստ ձևով և այդ պատճառով էլ նա այստեղ ավելի լայն ասպարեզ բացեց կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար, քան բուն Ռուսաստանում:

«Ռուս և հատկապես վրացական կալվածատերերը,— դրում է նա,— ավելի մեծ հնարավորություն ստացան կրտրելու գյուղացիական հողերը, քան հայկական կալվածատերերը, հետևաբար, էլ ավելի պահպանելու նրանց նկատմամբ իրենց իշխանությունը»¹: Վրացական գյուղացիների հողաբաժինները... հայկականից զգալի շահով քիչ էին: 1870 թվականի կանոնադրությամբ... թույլ էր տրվում մի ձեռքից հողի անցումը մյուսի ձեռքը, իսկ 1861 թվականի կանոնադրությամբ... անհնար էր դառնում մի ձեռքից հողազատ անցումը մյուսի ձեռքը²:

Կատարելով նման մի շարք համեմատություններ, պրոֆ. վ. Ռշտունին, վերջապես, եզրակացնում է. «Այստեղից հե-

1 Վ. Ռշտունի — Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում, 1947 թ., էջ 261, (ռուս.):

2 Տե՛ս նույն տեղը:

տեսում է, որ գյուղացիական ռեֆորմի բուրժուական բովանդակութիւնը Հայաստանում համեմատաբար ավելի ուժեղ է հանդես գալիս», քան Ռուսաստանում և... Վրաստանում¹։

Մենք կաշխատենք ապացուցել, որ իրերի իսկական դրութիւնը միանգամայն այլ է, որ ցարիզմը բոլորովին էլ շահագրգռված չէր որևէ շահով թեթևացնելու աշխատավոր գյուղացիութեան դրութիւնը և զարգացնելու կապիտալիստական հարաբերութիւնները Հայաստանում։ Ուստի նա, մի կողմից, ամեն կերպ ձգձգում էր գյուղացիական ռեֆորմի անցկացումը, մյուս կողմից, ռեֆորմի պատրվակի տակ ավելի էր ուժեղացնում իր քաղաքական տիրապետութիւնը։

Հողային ռեֆորմը և հատկապես կապիտալիզմի զարգացման հարցերն ուսումնասիրել է նաև պրոֆ. Հ. Թումանյանը։ «Հայաստանի տնտեսական զարգացումը» խորագիրը կրող իր ծավալուն աշխատութեան մեջ պրոֆ. Թումանյանը իրավացի կերպով նշում է, որ տնտեսական զարգացման ընթացքը օբյեկտիվորեն ցարիզմին մղեց ռեֆորմ անցկացնելու նաև Անդրկովկասում. նա զարգացնում է այն միտքը, որ ռեֆորմը մի միջոց էր ավելի վատթար պայմանների մեջ դնելու աշխատավոր գյուղացիութեանը։

«1870 թվականի մայիսի 14-ի օրենքի հիման վրա Հայաստանում անցկացված գյուղացիական ռեֆորմը,— գրում է նա,— ավելի վատացրեց գյուղացիների դրութիւնը»²։ «Գյուղացիական ռեֆորմի անցկացման օգնութեամբ Անդրկովկասի կալվածատերերը և պետական գանձարանը փաստորեն իրենց ձեռքը վերցրին հողերի մեծ և լավագույն մասը»³. «Ռեֆորմի հետևանքով գյուղացիները զրկվեցին ոռոգելի ու լավագույն հողերից»⁴։

Պրոֆ. Հ. Թումանյանը, անկասկած, ճշմարտացի է նաև այն բանում, երբ գյուղացիական ռեֆորմի հարցի քննար-

¹ Վ. Ռշտունի — Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում, 1947 թ., էջ 262։

² Հ. Թումանյան—Հայաստանի տնտեսական զարգացումը, մաս 1, էջ 120, (ռուս.)։

³ Նույն տեղում, էջ 102։

⁴ Նույն տեղում, էջ 113։

կումը դիտելով Հայաստանում գոյութիւն ունեցող տնտեսական հարաբերութիւնների տեսանկյունով, գտնում է, որ փոստորեն այն շփոխեց այդ հարաբերութիւնները: Այդ մասին են վկայում նրա հետեւյալ զրույթները. «Փաստորեն հղատերերը և գյուղացիների փոխհարաբերութիւնները, որոնք գոյութիւն ունեին մինչև ռեֆորմը, համարյա շփոխվեցին»¹: «Հայաստանում ռեֆորմի ժամանակաշրջանում փրկագնման գործառնութիւններ չէին կատարվում»²: «1864 թվականի օրենքը, ինչպես նաև 1870 թվականի օրենքը Անդրկովկասի գյուղացուն շտվեցին ո՛չ հող, ո՛չ էլ նրան ազատագրեցին մինչև ռեֆորմի շրջանի պարհակներից»³:

Ընթերցողը նկատում է, անշուշտ, որ պրոֆ. Լ. Թումանյանի տեսակետը հողային ռեֆորմի վերաբերյալ զգալի շափով տարբերվում է պրոֆ. Ռշտունու տեսակետից, շնայած նրան, որ երկուսն էլ ընդունում են գյուղացիական ռեֆորմի անցկացումը Հայաստանում: Բայց հենց այստեղ էլ ընթերցողն իրավունք ունի հարցնելու, թե ինչո՞ւ արտահայտվեց այդ ռեֆորմը, կամ ինչպե՞ս կարելի է մի կողմից ասել, որ ռեֆորմը համարյա որևէ ազդեցութիւն չունեցավ երկրում գոյութիւն ունեցող հարաբերութիւնների վրա, պահպանվեցին հին հարաբերութիւնները և միաժամանակ գրե՛լ՝ «հտոռեֆորմի ժամանակաշրջանի ազդարային հարաբերութիւնները շատ բանով կանխորոշեցին գյուղատնտեսութիւնի զարգացման ուղիները»⁴ ու այդ հիման վրա շարադրել կապիտալիստական վերափոխումները: Ասել, որ ռեֆորմը շփոխեց հին հարաբերութիւնները և միաժամանակ նկարագրել կապիտալիզմի զարգացումը, անշուշտ, հակասութիւն է: Բայց այդ հակասութիւնը Հայաստանի դեպքում իրականութիւն արտահայտութիւնն է: Այդ պետք է բացատրել, մի կողմից, 1861 թվականի ռեֆորմի հտոռեֆորմ տեղի ունեցող ռուսական կապիտալիզմի զարգացումով և,

¹ Լ. Թումանյան, — Հայաստանի տնտեսական զարգացումը՝ մաս 1, էջ 100:

² Նույն տեղում, էջ 101:

³ Նույն տեղում, էջ 102:

⁴ Նույն տեղում, էջ 121:

մյուս կողմից, Հայաստանի ֆեոդալական տնտեսակարգի առանձնահատկություններով:

Մեզ հետաքրքրող հարցը բավական ընդարձակ կերպով լուսարանվել է նաև պրոֆ. Մ. Ադոնցի «Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը» խորագիրը կրող աշխատություն մեջ, ուր նա արդարացի քննադատական խոսք ասելով պրոֆ. Վ. Ռշտունու գրքի՝ նրա կողմից ռեֆորմի սխալ սոցիալական գնահատման մասին, հարուստ տվյալներով նկարագրում է ինչպես ռեֆորմի ու նրա հետևանքների մասին, այնպես էլ կապիտալիստական հարաբերությունների ձևավորման ընթացքը: Պրոֆ. Մ. Ադոնցի աշխատությունը, անկասկած, մի նոր քայլ է Հայաստանի հետոֆորմյան շրջանի տնտեսական հարաբերությունները պարզաբանելու բնագավառում: Սակայն նա նույնպես այն տեսակետին է, որ գյուղացիական ռեֆորմը իրականացվել է Հայաստանում և այդ պատճառով էլ նա խոսում է ֆեոդալիզմի մնացուկների մասին: Այդ տեսակետը մենք բաժանել չենք կարող:

Ուսումնասիրությունը մեզ համոզում է, որ ռեֆորմը Հայաստանում շի անցկացվել գյուղացիությունը ֆեոդալական կախումից ազատագրելու իմաստով, և, հետևապես, խոսքը պետք է վերաբերի ոչ թե ֆեոդալական մնացուկներին, այլ նրա տիրապետող նշանակությունը: Ուստի Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների առաջացումը և զարգացումը պետք է դիտել ոչ թե իբրև կատարված ռեֆորմի արդյունք, այլ, ամենից առաջ, որպես կայսրության մյուս մարզերում ու երկրամասերում իրոք կենսագործված ռեֆորմի հետևանք, և այդ պատճառով արագորեն զարգացող ուսումնական արդյունաբերական կապիտալիզմի հետևանք:

Հետոֆորմյան շրջանի ագրարային հարաբերություններն ուսումնասիրողների հիմնական թերությունը, մեր կարծիքով, այն է, որ նրանք խնդիր չեն դրել պարզելու, թե ինչու ցարական կառավարությունն անվերջ ձգձգում էր գյուղացիական ռեֆորմի անցկացումն Անդրկովկասում: Մենք բողոքովին էլ հավակնություն չունենք ասելու, որ մեր ուսումնասիրությամբ լիակատար և սպառիչ պատասխան է

տրվում այդ հարցին: Նոր փաստերի հայտարարումը և նոր երևույթների լուսաբանումը չի բացառված նաև հետագայում:

Մեր ուսումնասիրութեան հիմնական հարցը հանդիսանում է կապիտալիստական հարաբերությունների առաջացումը և ձևավորումը գյուղատնտեսութեան մեջ: Այդ հարցի հետազոտման գործում շնորհակալ աշխատանք են կատարել պրոֆ. Հ. Թումանյանը և պրոֆ. Մ. Ադոնցը: Մեր աշխատանքը լրացնում է այդ կատարածը բազմաթիվ նոր տվյալներով: Այդ հարցում մենք հանգել ենք հետևյալին.

Ռուսաստանում հողային ռեֆորմը հասցրեց արդյունաբերական կապիտալիզմի բուռն զարգացմանը: Դա ծայրամասերը տնտեսապես յուրացնելու հարցին սուր բնույթ տվեց: Զարգացող կապիտալիզմի շահերը պահանջում էին ստեղծել հումքի էժան աղբյուրներ և ընդարձակել վաճառահանման շուկաները: Ռուս արդյունաբերողների ապրանքների ուժեղ հոսանքը, այդ հիման վրա առևտրական կապիտալի գործունեութեան աճումը մի կողմից, առևտրական հողագործութեան զարգացումը և գյուղացիութեան քայքայումը մյուս կողմից, պայմաններ ստեղծեցին Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների ձևավորման ու զարգացման համար, թեև այդ պրոցեսը այստեղ շատ ավելի դանդաղ էր ընթանում, քան Ռուսաստանի այն մարզերում, որտեղ հողային ռեֆորմ էր անցկացվել:

Մեր աշխատութեան մեջ ցույց ենք տալիս, որ գյուղատնտեսութեան մեջ կապիտալիստական հարաբերությունների առաջացումը և զարգացումը հնարավոր է նաև ֆեոդալական հարաբերությունների պահպանման դեպքում: Սակայն այդ պայմաններում կապիտալիստական հարաբերությունների զարգացման վճռական գործոնը ոչ այնքան ներքին ազդակներն են, որքան արտաքին ազդեցությունը: Կապիտալիստորեն զարգացող գաղութարարական տերութեան առաջընթաց շարժումը անխուսափելի է, այս կամ այն չափով ընդգրկում և իր նման կերպարանափոխում է նաև գաղութային կախյալ երկրների զարգացումը:

Մեր աշխատութեան մեջ հիմնականում օգտագործել ենք Երևանի նահանգի և մասամբ Կարսի մարզի տվյալները:

Գ Լ Ո Ւ Խ Ի

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ ԵՎ ՑԱՐԻՉՄԻ ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՔՈՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1 Հարցադրում

Հայաստանը ցարական Ռուսաստանի ժայռամասային՝ դադութներից մեկն էր: Ցարիզմը, ելնելով իր արտաքին քաղաքականության մոտիվներից և աշխատավոր մասսաներին հլու հնազանդ պահելու նպատակից, մինչև ֆորմյան ժամանակաշրջանում նախընտրեց չփոխել Հայաստանում տիրող ֆեոդալական հարաբերությունները: Այդ պատճառով էլ նա վերականգնեց պատերազմի ընթացքում խախտված բոլոր հողատերերի շահագործողական իրավունքները: Այդ իրավերջնական արտահայտությունը գտավ 1846 թվականի հրովարտակում: Ավելին: Հողատերերի հավատարմությունը շահելու և երկրում սոցիալական հենարան ստեղծելու համար ցարիզմը որոշեց նրանց անվանական սեփականատերերից դարձնել իսկական սեփականատերեր, իսկ գոյություն ունեցող սովորությունների ուժը փոխարինել օրենքի ուժով: Այսպիսով, Հայաստանի միացումը Ռուսաստանին չվերացրեց գյուղացիների կախումը հողատերերից և չփոխեց գոյություն ունեցող շահագործման ձևերը:

Միակ փոփոխությունը, որ տեղի ունեցավ այդ ժամանակաշրջանում, այն էր, որ իր տիրապետությունն ամրացնելու

նպատակով ցարիզմը հողատիրական դասակարգի կողքին ստեղծեց իր սեփական հրամանատարական դասը և տեղական բնակչութունից ելած արտոնյալ անձերի օգնությամբ փոխեց կառավարման նախկին սիստեմը: Բայց վերացնելով կառավարման նախկին սիստեմը, ցարիզմը դրանով իսկ մերժեց բրավարանական այն հիմքը, որի վրա խարքսխվում էր գյուղացիներից հողատերերի անաշխատ եկամուտ ստանալու իրավական դրությունը: Որովհետև նախկին կառավարման ժամանակ նրանք համարվում էին միայն հողատերեր և ոչ թե նրա մասնավոր սեփականատերեր, և մուք ու թիուվ ստանալու նրանց իրավունքի գոյությունը կապված էր վարչա-դատական որոշ ֆունկցիաներ կատարելու հետ:

Եթե վերանանք 1846 թվականի հրովարտակից և 1847 թվականի օրինադրություններից, որոնք այն ժամանակ շէին իրագործվում, և ելնենք իրերի իսկական վիճակից, ապա պետք է ասել, որ գյուղացիական ռեֆորմի նախօրյակին Անդրկովկասում սոցիալ-տնտեսական պայմանները, բացառությամբ Քուֆիսի և մասամբ Թիֆլիսի նահանգների, խիստ տարբերվում էին Ռուսաստանի սոցիալ-տնտեսական պայմաններից:

Ռուսաստանում և վրաստանում գոյություն ուներ դարավոր ճորտատիրական իրավունք, ուստի գյուղացիներն իրավունք չունեին իրենց հողաբաժինը անձեռնմխելի կերպով օգտագործելու: Կալվածատերերն ուզած ժամանակ իրավունք ունեին շինականին զրկել հողաբաժնից, վերաբնակեցնել այլ հողամասում, իր մոտ ծառայության վերցնել, վաճառել, պայմանագրով վարձու տալ գործարանատիրոջը և այլն:

Դրա հետ միասին կալվածատերն ինքը իր գյուղացիներին տալիս էր հողաբաժին, նշանակում էր այս կամ այն աշխատանքի, իր միջոցներով այս կամ այն կերպ կարգավորում էր նրանց կենցաղը՝ ի վարձատրություն նրանց կատարած աշխատանքի:

Ճորտատիրության ռուսական կամ վրացական ձևը Հայաստանում գոյություն չունի: Հողատերերի իրավունքներն

այստեղ սահմանափակված էին: Նախ, հողատերերն այստեղ չէին համարվում հողի մասնավոր սեփականատերեր, և, երկրորդ, հողատերերը չէին կարող խախտել գյուղացիների անձնական ու գույքային իրավունքները: գյուղացուն չէր կարելի զրկել իր հողաբաժնից, կալվածատիրոջ հայեցողությամբ վերաբնակեցնել մեկ այլ տեղ, վաճառել և այլն: Այդ դրույթներն անխախտ էր ճանաչում նույնիսկ 1846 թվականի հրովարտակը:

Ըստ սովորութունների՝ շինականների հողօգտագործման իրավունքը պատմականորեն առաջացել էր շատ ավելի վաղուց, քան 1846 թվականի հրովարտակը, որի միջոցով դարիզմը հողատերերին փորձեց դարձնել սեփականատերեր, ուստի, լուրջ բարդացումներից խուսափելու համար, հատուկ կետով օրինականացվեց գյուղացու իրավունքը՝ իր հողաբաժնի նկատմամբ, որտեղ էլ նա գտնվելիս լինի: Կալվածքին կցագրված գյուղացիների իրավունքը ոչ մի դեպքում չէր կարելի վիճարկել:

Սվ, վերջապես, գյուղացին այստեղ ամրագրված չէր հողին, դրա համար Հայաստանում տնտեսական պատշաճ պայմաններ գոյութուն չունեին: Պատմականորեն գործը դասավորվել է այնպես, որ մուլքի և թիրուխ օտարելու իրավունքի գոյության շնորհիվ կալվածքը մաս-մաս մեկ տիրոջից անցնում էր մյուսին, և շատ հաճախ միևնույն կալվածքը անբաժան կերպով տիրում էին մի քանի անձեր, ըստ որում նրանցից ոչ մեկը չգիտեր, թե որտեղ է տեղավորված կալվածքի նրա բաժինը և ովքեր են նրա գյուղացիները:

Հիրավի, ընթերցողը կարող է հարցնել. իսկ ինչո՞ւմն էր արտահայտվում այդ պայմաններում գյուղացիների կախվածութունը կալվածատերերից: Դա արտահայտվում էր գյուղացիների այն պարտավորութուններով, որ նրանք կատարում էին որոշակի դրամական և նատուրալ պարհակներ: Սրանք են իրականում Հայաստանի սոցիալ-տնտեսական պայմանների տարբերիչ գծերը ռեֆորմի նախօրյակի Ռուսաստանի իրականութունից:

Անդրկովկասում հողային ռեֆորմի բոլոր օրինադրութունների սնանկութունը արտահայտվում էր հենց նրա-

նում, որ նրանք չէին բխում փաստացի վիճակից, այլ հիմ-
նրվում էին 1846 թվականի հրովարտակի վրա, որը, մի կող-
մից, ընդունում էր հողատերերի՝ հողի մասնավոր սեփա-
կանությունից, իսկ մյուս կողմից՝ գյուղացու ան-
ձեռնմխելի իրավունքը իր հողաբաժնի նկատմամբ: Հետևա-
բար ունեցողի մասին հրատարակված օրինադրությունը
իրերի իսկական վիճակի ուշադիր ուսումնասիրման և տըն-
տեսական բազմազան պայմանների լուրջ հաշվառման ար-
դյունք չէր, այլ ավելի շուտ դա պրասենյակի ստեղծածն էր:
Ի՞նչ նպատակ էր հետապնդում ցարիզմը ունեցողի վե-
րաբերյալ այդ օրենքները հրատարակելով:

1870 թվականի մայիսի 14-ի շինականային կանոնա-
դրությունը ելնում էր 1846 թվականի ցարական հրովար-
տակից և նպատակ ունեւր ոչ թե վերացնել գոյութուն ունե-
ցող ֆեոդալային-կախվածային հարաբերութունները, այլ
ամենից առաջ դրանք համապատասխան դարձնել հրովար-
տակի հետ, այն հաշվով, որ հողատերերը ձանաշվեին հողի
սեփականատերեր, իսկ գյուղացիները պարտական համար-
վեին որոշակի պարհակներ կատարելու նրանց համար:

Դեռ 1846 թվականի հրովարտակը նախապատրաստելու
ժամանակաշրջանում կոմս Վորոնցովը հաղորդում էր, թե
«Մուսուլմանական բարձր դասի գույքային իրավունքների
հաստատումն այն ձևով, որը համարյա ամենուրեք գոյու-
թուն ունի նաև այժմ, այն միակ միջոցն է, որը ամրապըն-
դում է երկրամասի բարեկեցութունը՝ հաստատուն և ան-
կախ հիմունքներով, և նախապատրաստում է նրա բարոյա-
կան, առևտրական և արդյունաբերական ուժերի զարգա-
ցումը»¹:

Հատկապես Վորոնցովի այդ դրույթը հավանության ար-
ժանացավ ցարական կառավարության կողմից և դրվեց ինչ-
պես 1846 թվականի հրովարտակի, այնպես էլ 1870 թվա-
կանի օրինադրության հիմքում:

Այն մասին, որ ցարիզմը հենց սկզբից մտադիր էր ունե-
ցողի գործը հիմնականում հանգեցնել 1846 թվականի հրո-

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 113, գ. 131, ք. 2.

վարտակի. 1847 և 1851 թվականների օրինադրությունների տարածմանը, ի միջի այլոց, դեռ 1865 թվականին Երևանի գինվորական նահանգապետին, հաղորդել է Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության պետական քարտուղար բարոն Ա. Նիկողայրու «Քանի որ Երևանի նահանգի հողատերերի և նրանց հողերում ապրող շինականների վրա ենթադրվում է տարածել հողատերերի և շինականների փոխադարձ հարաբերությունների մասին 1847 թվականի ապրիլի 28-ի... բարձրագույն հաստատված օրինադրությունը... ապա տեղյակ լինելու համար սույնի հետ կցվում է 1847 թվականի դեկտեմբերի 28-ի հիշյալ տպագրված օրինադրությունը...»¹:

Այնուհետև ցարական կառավարությունը նպատակ ուներ հողային ռեֆորմի օրինադրությանը տալ ձևական-իրավաբանական բնույթ և, հողաշինարարության պատրվակի տակ՝ էլ ավելի ուժեղացնել աշխատավորության սոցիալ-քաղաքական ստրկացումը:

Հենց այդ նպատակով էլ ցարիզմը որոշեց հաշտարար միջնորդների ինստիտուտի հիմնադրման միջոցով շատ ավելի ընդարձակել դեռ մինչև ռեֆորմյան ժամանակաշրջանում իր կողմից ստեղծված հրամանատարական դասը: Այդ դասի և հատկապես հաշտարար միջնորդների ինստիտուտի ստեղծումով գյուղացիներն ընկան, ինչպես ասում են, մուրճի ու ղնդանի միջև: Նրանց իրավունքները միատեսակ ոտնահարվում էին ինչպես հողատերերի ու գյուղական աճող բուրժուազիայի, այնպես էլ ցարական ուժեղացրած բյուրոկրատիայի կողմից: Բերենք այդ բազմաթիվ օրինակներից մեկը.

«Ահա երկրորդ տարին է, որ մենք գտնվում ենք անելանելի վիճակի մեջ, շնորհիվ այն անօրինականությանը, որ թույլ են տալիս մեր գլուղի ուժեղները՝ քլոխվայի գլխավորությամբ... հաշտարար միջնորդին մեր արած բողոքները

¹ Հայկական ՍՍԻ, ՊԿԱ, ֆ. 125, գ. 9, թ. 2—3:

² Այս փաստաթուղթը իր աշխատության մեջ հիշատակում է նաև պրոֆ. Մ. Ադոնցը, սակայն նա մեզ համար անհասկանալի պատճառով կարծում է, որ ցարական կառավարությունը հրատարակելով 1870 թվականի օրինադրությունը ռեֆորմի անցկացման մասին, դրանով իսկ հրաժարվել է իր նախկին մտադրութունից:

մնում են ձայն բարբառո հանապատի... Այժմ մեր մի քանի հարուստ համագյուղացիները, մեր հասարակական քյոխվայի աջակցութեամբ, մեզնից խլում են մեր հողաբաժինները, կամայականորեն հավաքում են բերքը, մեր առանց այն էլ աղքատիկ գոյութեան վերջին աղբյուրը: Այսպես, օրինակ, մեր ցանած հողամասերից ցորենի բերքը ամառը պ. պրիատավը խլեց և հանձնեց ուրիշ անձերի, և երբ մենք արցունքն աչքներին խնդրում էինք, որ նա այդ շանի, մեր երեխաներին շրկի մի պատառ հացից, նա մեզ անխնա ծեծեց ու հայհոյեց... Երբ ձերդ պայծառափայլութեան կարգադրութեան համաձայն հաշտարար միջնորդը եկավ հարցաքննելու, ապա նա իջևանեց մեր մուքատեր Մուսա-խանի մոտ, որի հրամանով քյոխվան և այն անձնավորութիւնները, որոնց տրվում է մեր հողաբաժինները, սկսեցին մեզ ծեծել և մեզ ստիպել, որ մենք հրաժարվենք մեր դիմումից, առավել ևս, որ պ. հաշտարար միջնորդը շափից ավելի տենդենցիով կերպով էր վերաբերվում մեզ հետ, մեր տված յուրաքանչյուր բացատրութեան համար բղավում ու հայհոյում էր, և մեր հակառակորդ կուսակները, խրախուսվելով իրենց նկատմամբ հաշտարար միջնորդի այդպիսի հովանավոր վերաբերմունքից, մեզ ծեծում, վախեցնում էին և հնարավորութիւն չէին տալիս բացատրել այն ամբողջ անօրինականութիւնը և այն վրդովեցուցիչ անարդարութիւնը, որը մեզ կհասցնի ամեն ինչից զրկվելուն¹...

Այսպիսով, եթե առաջ հողատերերը գործում էին առանձին-առանձին և այդ պատճառով նրանց պահանջմունքները միշտ չէր, որ բավարարվում էին, ապա նոր պայմաններում հաշտարար միջնորդների ստեղծած ինստիտուտը, ունենալով գյուղացիներին իրեն ենթարկելու բազմակողմանի հնարավորութիւններ, լիովին ընդունակ գտնվեց արդյունավետ կերպով պաշտպանելու տիրապետող դասակարգի շահերը: Անկաւակած իրավացի էին դումայի 34 դեպուտատները, երբ 1908 թվականի դեկտեմբերի 15-ին դումային ներկայաց-

¹ Հայկ. ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 73, ց. 1, գ. 44, թ. 11—12, Երևանի նահանգի Կարխուն գյուղի 80 բնակիչ հավատարմատարների դիմումը:

բած իրենց նախագծում գրում էին... ճորտատիրական ու-
ֆորմը հետապնդում էր մի նպատակ՝ հաստատուն դարձնել,
կազմակերպել ու սիստեմի բերել խոշոր կոռային տնտեսու-
թյան սոցիալական տիրապետութիւնը անմիջական արտա-
դրողների վրա և ամրապնդել երկրամասում բյուրոկրա-
տիայի իշխանութիւնը¹։

Նվ, վերջապես, ցարական կառավարութիւնը, հրատա-
րակելով Անդրկովկասում հողային ուֆորմի օրենքները,
ձգտում էր ավարտել երկրամասի տնտեսական յուրացումը։
Ընդ որում նա ելնում էր այն բանից, որ անհրաժեշտ է ամ-
րապնդել իշխանութիւնը։ Ուստի, նա վարում էր զգույշ քա-
ղաքականութիւն, ստոեցման քաղաքականութիւն, դանդաղ
գործողութիւն քաղաքականութիւն, որպեսզի գոյութիւն ու-
նեցող սոցիալական հարաբերութիւնները շենթարկվեն ա-
րագ հեղաբեկման վտանգի։ Այդ շէին ժխտում նաև ցարա-
կան կառավարութիւն ներկայացուցիչները։ Բնորոշ է Ա. Ս.
Ստեշինսկու 1910 թվականի դեկտեմբեր հետևյալ ցուցումը՝
գյուղացիների ժամանակավորապես պարտավոր և կախյալ
հարաբերութիւնները դադարեցնելու մասին. «...կովկասի
բարձր իշխանութիւնը որոշել է գյուղացիների ազատագրու-
ման գործը տանել որոշ հաջորդականութեամբ և այն սկսել
Թիֆլիսի նահանգից»²։

Այդ ցույց էր տալիս նաև կովկասյան կառավարչութիւն
ավելի քան 40-ամյա հողաշինարարական անարդունք աշ-
խատանքը։

Ավելի կոնկրետ քննարկենք այն հարցը, թե ինչու ցա-
րիզմը շահագրգռված չէր Հայաստանում արմատապես լու-
ծելու հողային հարցը։

2 Հողային ուֆորմը և պետական գյուղացիները

Հայաստանի և Ադրբեջանի պետական շինականների հո-
ղաշինարարութիւն անաշին կանոնադրութիւնը հրատա-
րակվել է 1870 թվականի մայիսի 14-ին, որը վերաբերում

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 113, գ. 76, թ. 1—2։

² Նույն տեղում, ֆ. 113, գ. 131, թ. 1։

էր միայն այն շինականներին, որոնք բնակեցված էին մահ-մեղական բարձր ազնվականութեան և հայ մեկիքների հողերի վրա: Ինչ վերաբերում է այն շինականներին, որոնք բնակեցված էին պետական գերատեսչութեան հողերի և պետական մուքադարական հողերի վրա, ապա ճորտատիրական իրավունքը վերացնելու օրենքը նրանց վրա չէր տարածվում:

Յարիզմը շահագրգռված չէր պետական այն գյուղացիների հողաշինարարութեանն արագացնելու մեջ, որոնք բնակեցված էին պետական և պետական մասնատիրական հողերի վրա, որովհետև այն կարող էր խիստ կրճատել նրա եկամուտները:

Հայաստանում ցարական կառավարութեանն իր ձեռքումն էր կենտրոնացրել բոլոր անտառները, ընդերքը, ամառային արոտավայրերը, ձմեռային արոտավայրերի հիմնական մասը, ջրային ռեսուրսների հիմնական մասը և, վերջապես, գյուղացիական հողաբաժինների մեծ մասը:

Պետական տիրույթների հսկայական շափի մասին վկայում են ամենից առաջ բահրային հողվածները:

Պետության տնօրինության տակ գտնվող բահրային հողվածների ընդհանուր տարածությունը
(1897 թվականի տվյալներով)¹

Շրջանների անունները	Բանջ. հողվ. քանակը	Բնդհ. տաքածուք.	Այդ թվում			
			ամառային արոտավ.	ձմեռային արոտավ.	հողային	ձկնորսակ.
1	2	3	4	5	6	7
Երևանի և Նոր Բայազետի էքսիպանի և Սուրմալուի	611	406025	163950	35087	26988	180000
Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի	471	258136	60347	205216	2573	—
	298	115133	74690	25659	14784	—

¹ Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 139, գ. 21, թ. 99, պետական գույքերի Երևան—Կարսի կառավարչության վարման ենթակա տնտեսության վիճակի վերաբերյալ զեկուցումը:


1	2	3	4	5	6	7
Շորագլայի, Զարուշատի, Աղբարայի	228	80258	49338	21161	9759	—
Կարսի, Սողանլուի, Կաղզը- վանի, Արղահանի, Պաս- խովի, Շալղիբի, Գելի, Օլիվենի և Թալուսկերտի	100	167855	18867	83950	52264	12744
Ընդամենը	—	1037407	367192	371103	106358	192744

Համադրելով բահրային հողվածները ամբողջ հողային ֆոնդի ընդհանուր տարածության հետ, մենք կստանանք հետևյալ պատկերը.

Հողերի և ջրերի ընդհանուր տարածությունը և պետական բահրային հողվածների չափը

Երկրանների անունները	Հողերի և ջրերի ընդհ. տարած.	Մասնավոր անձանց օգտագ. տակ գտնվող տարած.	Փանձարանի տնօրինութ. տակ գտնվող բահրային հող.	Բահրային հողվածների տեղումը
Սրեանի և Նոր Բայազետի էջմիածնի և Սուրմալուի	701081	295047	406034	57,2
Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի	661645	333509	268136	40,0
Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի	678405	563272	115133	17,1
Շորագլայի, Զարուշատի, Աղբարայի	723752	643494	80258	11,1
Կարսի, Սողանլուի, Կաղզը-վանի, Արղահանի, Պասխովի, Շալղիբի, Գելի, Օլիվենի և Թալուսկերտի	1355964	1168109	167855	12,4
Ընդամենը	4120847	3083431	1037416	25,2

Այսպիսով, ընդհանուր տարածության ավելի քան 25 տոկոսը որպես բահրային հողվածներ գտնվում էին կառավարության ձեռքում. փոխանձարանի եկամտի շնորհ աղբյուր



էին ծառայում: Միայն Երևանի նահանգի բահրային հող-վաճեներից ստացվող եկամուտների տարեկան մուտքը կազմում էր ավելի քան 100 հազար ռուբլի:

Բերված տվյալները դեռևս անբավարար են բնութագրում պետութայն տեսակարար կշիռը երկրի ընդհանուր էկոնոմիկայում: Յարիզմը, համարվելով գյուղացիների ճնշող մեծամասնության հողարածիներն սեփականատերը, փաստորեն նրանցից դրամական ձևով հարկեր ու պարհակներ էր գանձում այն նույն չափով, ինչ չափով հողատերերը բնեզեն և դրամական ձևով ստանում էին իրենց կախյալ գյուղացիներից: Պետական գյուղացիների հարկերի ու պարհակների չափազանց մեծ չափի մասին կխոսենք առանձին: Այստեղ միայն նշենք պետական հողերի տեսակարար կշիռը հողային ընդհանուր տարածութայն մեջ:

Սկզբից վերցնենք Երևանի նահանգի պետական հողերի տեսակարար կշիռը օգտակար հողերի ընդհանուր տարածութայն նկատմամբ:

Պետական հողերի տեսակարար կշիռը բնեզենու հողային ֆոնդի նկատմամբ

Փափառների անունները	Օգտակ. հողեր ընդամ.	Այդ թվում						Գյուղացիական	Գյուղացիական հող տոկ.
		պետակ.	պետակ. մուլթազարական	մուլթազարական	Թիււլա-մուլթ.	Թիււլային	եկեղեցական		
Այլքսանդր-բաղոյի	197175	197175	—	—	—	—	—	—	100
Նոր Բայազետի	210004	203741	—	5123	—	1140	—	—	97,0
Երևանի	134148	104703	7902	162 5	5338	—	—	—	78,0
Սուրմալուի	151343	103059	9177	39107	—	—	—	—	69,0
Էջմիածնի	134106	92959	5841	16649	—	662	17995	—	69,3
Շարուր-Գարայազյազի	95088	71978	2707	14629	—	—	—	5774	75,6
Նախիջևանի	257759	87585	31120	130447	—	8607	—	—	34,0
Ընդամենը՝	1179623	861200	56747	222180	5338	9269	19135	5774	73,0

Թվերը ցույց են տալիս, որ բնակատեղերի բոլոր օգտակար հողերի ընդհանուր քանակի 73 տոկոսը պատկանում էր գանձարանին, որպես արքունապատկան հողեր: Եթե դրան տվելայննք նաև պետական-մուլքադարական, պետական-թիուլային և պետական-վանքապատկան հողերը, ապա գանձարանի բաժինը կկազմի մոտավորապես 80 տոկոս:

Այ՛ հարաբերությունը պահպանվել է նաև հետագայում, 1900 թվականից հետո:

Պատկերը ավելի լրիվ և ցայտուն դարձնելու համար բերենք Հայաստանի, այսինքն՝ Երևանի նահանգի և Կարսի մարզի այն ժամանակվա ամբողջ տերիտորիային վերաբերող տվյալները: (Տես 20-րդ էջի)* աղյուսակը:

Աղյուսակը ցույց է տալիս, որ Հայաստանի ընդհանուր հողատարածության մեջ մասնավոր հողատերերի տեսակարար կշիռը կազմում էր ընդամենը 12,7 տոկոս: Այդ տոկոսի մեջ տառաջիորեն մտնում էին՝ պետքական և անպետք, բնակեցված և անբնակ բոլոր հողերը:

Քանի որ պետական-մուլքադարական և պետական-վանքապատկան հողերը լիովին վերագրվել են մասնավոր հողատիրականին, ապա մենք անհրաժեշտ ենք համարում հողի մասնավոր հողատիրական սեփականության տվյալները ավելի մանրամասն բերել:

* Մանր. 1. Բահրային հողվածների մեջ մտնում են նաև ոչ հողային հողվածներ և Սարդարբազի տափաստանը, որոնք եկամտաբեր չէին:

Մանր. 2. Երջանների կազմը. 1. Երևանի գավառը նոր Բայազետի գավառի առաջին տեղամասի և Մխիթանայի ամառային արոտավայրերի հետ միասին, 2. Նոր-Բայազետի երկրորդ, երրորդ և չորրորդ տեղամասերը, Աղզաժ, Աղմաղանի ամառային արոտավայրերի հետ, 3. Նախիջևանի և Եարուր-Դարալագյազի գավառները, 4. Էջմիածնի գավառը Ալագյազի շրջանի ամառային արոտավայրերով, 5. Սուրմալուի գավառը, 6. Ալեքսանդրապոլի գավառը, 7. Կարսի օկրուգը, Չալդերի տեղամասով և Ղուսիբ գյուղի շրջանով, 8. Կաղզվանի օկրուգը, 9. Օլթենի օկրուգը Արդահանի օկրուգը Աղզամանի, Գելի և Պասխովի տեղամասերով:

Երևանի նամակագրի և կարգի մարզի սահմանի հարկերի անսակարար կշիռը
(Զբաղման համակարգով)

Երկրանիք	Ընդհանուր ասարած.	Այդ թվում		Պետական հողերի անվանը	Գյուղաց. հող.	Բահր. հող.	Պետակ. անտառ.	Աճատ. արտառ.	Զմեռային արտառ.
		Մասնատիրակցան	պետական						
I	395668	82129	313639	79,2	187669	17285	50397	24218	34050
II	435 13	5760	429553	95,6	137624	141094	7150	144785	—
III	678415	263506	394599	58,1	268780	15631	13650	83400	13138
IV	329 72	77096	251976	76,5	74405	673	8520	38753	129625
V	392573	66639	26 934	80,0	124125	1927	27500	35853	76529
VI	347296	417	346879	100,0	270291	4632	45311	26645	—
VII	6 0214	—	610294	100,0	48 236	14745	38023	77290	—
VIII	393194	—	393494	100,0	341910	28348	9940	13306	—
IX	545712	—	545712	100,0	380615	23862	89259	51976	—
Ընդ. 4.67927	515747	355180	87,3	2265565	247197	289750	496325	253342	

1 Թվականն ավանդները վերցված են պետական պալատի տեղեկագրից, տե՛ս Հավել. ՄԱՍՌ ՊԵԱ, ֆ. 133, ց. 1, ք. 2309.

Քննելիցված և անքնակ, պետական և անպետք բոլոր հարստա-
 րածությունների ակյակները, նշելով նրանց հարստիքակիցներին

Գաղտնիների անունները	Ամբողջ հարը	Այդ թվում								Կամպատի -սպասար
		Այլապես	Կատար -իտակ	Կատար -իտակ	Կատար -իտակ	Գրավ -ման	Պարտ -անքանակ	Պարտ -անքանակ	Պարտ -անքանակ	
Երևանի	305783	233755	8272	—	—	—	18254	5596	—	39906
Այդ թվում՝ անպետք	131684	129052	370	—	—	2004	—	258	—	—
Այլքսանդ.	197592	197175	—	—	—	—	—	—	—	417
Այդ թվում՝ անպետք	61	—	—	—	—	—	—	—	—	61
Էջմիածնի	186345	109150	6550	10106	9985	21830	—	—	1033	27691
Այդ թվում՝ անպետք	24595	16191	709	1663	433	5181	—	—	371	47
Ն. Բայազետի	221508	203741	—	—	—	5123	—	—	1140	11504
Այդ թվում՝ անպետք	—	—	—	—	—	—	—	—	—	—
Սուրբաբուխի	195294	126635	13442	—	—	44354	—	—	—	8863
Այդ թվում՝ անպետք	35110	25576	4265	—	—	5227	—	—	—	42
Շարուր-Քաղաթաղյակի	125984	93757	2989	—	—	19084	—	—	—	2976
Այդ թվում՝ անպետք	28975	21667	231	—	—	4455	—	—	—	960
Նախիջևանի	380752	117473	36822	—	—	171262	—	—	12776	42419
Այդ թվում՝ անպետք	104037	29588	5682	—	—	40815	—	—	4169	23483
Հնդաստանի	1613258	1083656	68024	10106	9985	279907	—	5596	14949	133776
Այդ թվում՝ անպետք	324462	222374	11257	1663	433	57682	—	258	4540	24593

Այս աղյուսակից երևում է, որ Երևանի նահանգում 1613289 դեսյատին հողից մասնավոր հողատերերին պատկանում էր ընդամենը 310417 դեսյատին բնակելի և 133777 դեսյատին անբնակ հողեր: Եթե հաշվենք, որ պետական-մուքադարական և պետական-վանքապատկան հողերի կեսը նույնպես պատկանում է նրանց, ապա մասնատիրական ընդհանուր հողը կլինի 4832297 դեսյատին, որը պակաս է հողի մեկ երրորդ մասից, ընդ որում այդ հողի ճիշտ կեսը գտնվում էր Նախիջևանի գավառում:

Այդ քանակից հանենք անբնակ և անպետք հողերը, կմնա ընդամենը 254 հազար դեսյատին:

Բերված թվերը վկայում են այն մասին, որ ցարական կառավարութունը երկրի ամենախոշոր հողատերն էր:

Թվում է, թե ելնելով բերված փաստերից, հողային ունեցությունը ամենից առաջ պետք է անցկացվեր պետական և պետական-մասնատիրական գյուղերում: Սակայն ցարական կառավարութունը այդ հարցի լուծումը շարունակ հետաձգում էր:

Եթե Ռուսաստանում պետական և բաժնեհողային գյուղացիների համար ճորտատիրական իրավունքի վերացումը փաստորեն սկսվեց 1858 թվականի հուլիսի 20-ի և 1859 թվականի օգոստոսի 26-ի հրամանագրերով և վերջնականապես կենսագործվեց 60-ական թվականներին, ապա Հաստատանում պետական հողերի վրա սեղավորված գյուղացիների ճորտատիրական իրավունքի վերացումը ձևականորեն սկսվեց միայն 1903 թվականին, իսկ փաստորեն ցարիզմի ժամանակ չկենսագործվեց:

Յարը, լինելով ավելի խոշոր հողատեր, քան բոլոր մասնավոր հողատերերը միասին վերցրած, և ունենալով մեծ քանակի բահրատու հողվածներ, շահագրգռված չէր պետական հողերում տեղավորված գյուղացիների հողաշինարարութունը արագացնելու գործում:

Յարական կառավարութունը ունեցած ձգձգման իր քաղաքականութունը զգեստավորել էր Անդրկովկասում գյուղացիական կենցաղի ընդհանուր կարգավորման բանաձևում:

Գլուղացիները բոլոր հարցումներին ու բողոքներին նա պատասխանում էր.

«...ընդհուպ մինչև վերջնական հողաշինարարությունը»։ Այսպես, Երինակ, պետական գույքերի մինիստրությունը 1885 թվականի հոկտեմբերին Բեյքենդ և Կարալ գյուղերի միջև եղած վեճի առթիվ գրում էր հետևյալը. «Ստորագրությամբ հայտնել, որ Կարալ գյուղի համայնքին ժամանակավորապես առանձնացվել է 444 դեսյատին արոտավայրային հողամաս միաժև քոչի ժամանակամիջոցի համար...»։

«Այդ հողամասը պետք է թողնվի համայնքի (Կերախպուր—Մ. Ն.) օգտագործման համար ընդհուպ գլուղացիների առաջիկա հողաշինարարությունը» (պետական գույքի մինիստրի լիազորի 1895 թվականի մարտի 20-ի նամակից)։

Քիրմալու, Դաղալու և Շահգոջի գյուղերի միջև ծագած վեճի առթիվ Նրևանի նահանգի հողային և պետական գույքերի վարչության 1905 թվականի հունիսի 14-ի վարչական որոշումը ասում է. «...Այդ որոշումը նշանակութուն ունի ընդհուպ մինչև Անդրկովկասի երկրամասում գյուղերի վերջնական հողաշինարարությունը»։

Վերջապես Նոր Բայազետի գավառի Աղկալա գյուղի բնակիչների այն դիմումին, որ նրանցից ոչ ճիշտ խլված և պետական բահրատու ու հողավածների մեջ մտցված 52 դեսյատին հողը իրենց վերադարձնելու մասին 1913 թվականին տրվեց հողային վարչության հետևյալ պատասխանը. «Նրանց խնդիրը ներկայումս թողնվել է առանց բավարարման, մինչև այդ գյուղի հողաշինարարության հարցի վերջնական լուծումը, հողաշինարարություն, որը կատարվելու է այժև կարգով, ինչ նախատեսվել է 1903 թվականի ապրիլի 25-ի հողաշինարարության օրենքով»։

Այսպիսով, ընդհուպ մինչև 1913 թվականը, ինչպես այդ վկայում են բերված բազմաթիվ այլ փաստաթղթերը, հողային ունիտարի հիմքը հանդիսացող հողաշինարարական աշխատանքները Հայաստանում ավարտված չէին։

Պետական հողատիրական գլուղացիները նույնպես իրենց հողերի սեփականատերեր չէին համարվում և այդ տեսակե-

տից նրանք ոչնչով չէին տարբերվում մասնավոր հողատերերի գյուղացիներից:

Այդ տեսակետից բնորոշ են հետևյալ փաստերը: 1900 թվականի № 2255 գործից երևում է, որ Ղուրղուղուլի գյուղի բնակիչ Մանուկ Գասպարյանը հրապարակային աճուրդով իր պտղատու այգին վաճառել է իշխան Կոհարովին: Գասպարյանի ժառանգները, հիմնվելով կառավարութայն այն կարգադրության վրա, որ գյուղացիական հողաբաժինները ոչ մի դեպքում վաճառման ենթակա չեն, դիմեցին պետական գույքերի վարչությանը: Գործը տրվեց դատարան և օկրուգային դատարանն իր 1896 թվականի մայիսի 10-ի որոշումով ոչնչացրեց Կոհարովի այգետեր լինելու իրավունքի փաստաթղթերը և այն վճռեց գանձարանի օգտին: Գործից երևում է, որ այգին 1882 թվականից պատկանում էր Գասպարյանին, որպես շնչապատկան հողաբաժին:

Բնորոշ է նաև Կովկասի հողագործության և պետական գույքի միջխտրությունների իրավախորհրդատուի հետևյալ բացատրությունը:

Երևանի նահանգի կառավարչության հարցումին նա 1905 թվականին գրում է. «...այն դեպքերում, երբ բաժանվում է պետական հողը պետական շինականների կողմից, հայտարարում ենք, կարող է վեճ լինել միայն հողի օգտագործման և ոչ թե սեփականության իրավունքի մասին, ահա թե ինչու Անդրկովկասյան երկրամասի սահմանադատման օրինադրութայն (1897 թվականի խմբագրութայն) 81 և 82 հոդվածները թույլ չտալով գանձարանի դեմ շինականների ուղինային վեճեր, թույլ էր տալիս վեճեր միայն շինականների միջև, սակայն ոչ թե սեփականության իրավունքի, այլ միայն գանձարանից վախճալ օգտագործման մասին և այդ վեճերի լուծումը ներկայացվում էր գանձարանին, իբրև սեփականատիրոջ և ոչ թե դատական հաստատություն»:

Այս հարցում որևէ տարակուսանք չթողնելու համար մի քաղվածք ևս բերենք Կովկասում քաղաքացիական մասի գլխավոր պետի՝ 1898 թվականի դեկտեմբերի 19-ի շրջարե-

¹ Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ք. 133, գ. 1834.

բականից, որ ստորագրել է զեներալ-համհարզ իշխան Գո-
լիցինը:

«Անդրկովկասի երկրամասում,— գրում է նա,— դեռ մին-
չև հիմա վերջնական հողաշինարարութիւն չի կատարվել:

Տեղաբնակ գյուղացիները շեն ստացել պետական հող
ոչ որպէս սեփականութեան իրավունքով, որը պայմանա-
վորվում է պարտադիր փրկագնումով, ինչպէս այդ արվել է
կայսրութեան ներքին մարզերի գյուղացիների նկատմամբ,
և ոչ էլ մշտական անժամկետ օգտագործման համար, ինչ-
պէս այդ գոյութիւն ունի Սիրիում:

Անդրկովկասում մինչև այժմ դեռևս պետական գյուղա-
ցիներին հողաբաժիններ չեն հատկացվել, և պետական հող-
ը դանվում է սոսկ նրանց փաստացի օգտագործման տակ:
Այսպիսի հողօգտագործումը ...չունի հողաբաժնի օգտա-
գործման ոչ մի իրավական հատկանիշ, ինչպիսիք են, օրի-
նակ, նրա անձեռնմխելիութիւնը, հողային (կամ էլ փրկա-
գնման) որոշ ձև, սահմանված իրավաբանական ակտ (տի-
րելու և հողաբաժնի գրառումներ) և այլն: Սրա հետևանքով
այդ հողօգտագործման շրջանակներում մինչև այժմ կառա-
վարչութեան կարողորոթեամբ հաճախ փոփոխութիւններ
են կատարվում»¹:

Այսպիսով, ինչպէս ցույց են տալիս բերված պաշտոնա-
կան փաստաթղթերը, պետական հողերում, որոնք կազմում
էին ընդհանուր հողատարածութեան ավելի քան 80 տոկո-
սը, գյուղացիները չէին համարվում իրենց հողաբաժինների
սեփականատերերը, սեփականութեան իրավունքը առաջվա
նման պատկանում էր պետութեանը:

Յարական կառավարութեանը պետական գյուղացիների
հողաշինարարութիւնը ամեն կերպ ձգձգում էր նաև սահ-
մանազման պատրվակով: Սահմանազման աշխատանքը
շարունակվում էր տասնյակ տարիներ, սակայն, շնայած
դրան, դեռևս ճշգրիտ որոշված չէին առանձին գյուղերի և
գյուղակների սահմանները և գործը տնտեսական պլաններ
կազմելուց բացի, առաջ չէր շարժվում: Բնորոշ է, որ հողի

¹ Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 91, գ. 1ա, Բ. 2—3:

սեփականատերը համարվում էր հենց պետությունը, իսկ սահմանագծման ծախսերը կրում էին գյուղացիները: Այդ անարդարություն մասին համարձակվել է ասել հատուկ հանձնարարությունների ցարական աստիճանավոր ժորժե-լաձեն: Ահա թե ինչ է գրել նա 1900 թվականին. «Ոչ թե գանձարանի, այլ պետական գյուղացիների կողմից սահ-մանագծման ծախսերի վճարումը չի կարելի օրինական հա-մարել, որովհետև սահմանագծման ծախսերը գանձվում են հողի սեփականատերերից և ոչ թե հողօգտագործողներից, իսկ գյուղացիները միայն հողօգտագործողներ են՝...»

«Գյուղատնտեսական արդյունաբերության կարիքների Երևանի նահանգային կոմիտեի» եզրակացությունից երևում է, որ 1899 թվականին Երևանի նահանգում ընդամենը սահ-մանագծվել և նրանց համար սլան է կազմվել 727590 դես-յատին հող, որը կազմում էր ընդհանուր հողատարածության միայն 33 տոկոսը: Սահմանագծված հողը բաշխվում էր այսպես. պետական գերատեսչությունը՝ 587149 դեսյատին, հարկատու բնակչությանը՝ 3574 դեսյատին, զանազան դա-սերի մասնավոր անձանց՝ 7694 դեսյատին, արտոնյալ դա-սերի մասնավոր անձանց, հոգևոր՝ հաստատություններին և մուքադարներին՝ 117807 դեսյատին, քաղաքային՝ 11120 դեսյատին և այլն՝ 222 դեսյատին²:

Այդ ամբողջ ժամանակամիջոցում զանազան հասարա-կություններին ժամանակավորապես օգտագործելու համար քրացուցիչ տրվել է 1750 դեսյատին հող:

Պետական հողերի վրա տեղավորված պետական գյու-ղացիների հողաշինարարությունը Անդրկովկասում ձևակա-նորեն սկսվել է 1903 թվականի ապրիլի 21-ին, ցարի կող-մից հաստատված 1900 թվականի մայիսի 1-ի հրամանագրի հիման վրա:

Այդ հրամանագրի էությունը հետևյալն էր.

1. Հողարածիները հատկացվում են գյուղական հա-

¹ Հայկական ՍՍԻ ՊԿԱ, ֆ. 133, գ. 2306, թ. 26:

² См. «Кавказский календарь», на 1895 г.

մայնքներին, գյուղերին, ավաններին, պահպանելով դրանց
օգտագործման գոյությունն ունեցող կարգը:

2. Պետական շինականների ժողովներին իրավունք է
տրվում հողի համայնական տիրապետությունը փոխարինե-
լու ծխա-տեղամասային (ժառանգաբար) հողատիրությամբ,
և թեև դրան համաձայն են ծխատերերի երկու երրորդը, որոնք
վճռական ձայն ունեն համայնքի ժողովում:

3. Պետական շինականների հողաշինարարական աշխա-
տանքները սկսվում են միայն վերջնականապես սահմանա-
դժված և զանձարանի օգտին վճռված հողերում¹:

Հողաշինարարությունը սկսվում, 1903 թվականին, ձեռ-
նարկվել է Ալեքսանդրապոլի գավառում և թեև այն շարու-
նակվել է ընդհուպ մինչև 1917 թվականը, բայց չի ավարտ-
վել:

№ 2325 գործում գտնվող նյութերից երևում է, որ նշված
գավառում հողաշինարարության ամբողջ ժամանակաըն-
թացքում գյուղական 25 համայնքների հատկացվել են ըն-
դամենը 4030 դեսյատին բահրատու հողվածներ և արտա-
վայրեր:

Հողային ունեցումի ձեռքման քաղաքականությունն ու-
ղեկցվում էր բահրատու հողվածների գները բարձրացնելու
քաղաքականությամբ և, հետևաբար, զանձարանի եկամուտ-
ների անընդհատ աճմամբ: Պետական բահրատու հողված-
ների կանոնադրությունը, 60-ական թվականներից հետո,
երկու անգամ փոփոխվել է (1876 և 1893 թվականներին):

Վերջին փոփոխության հիման վրա աճուրդից բահրա-
տու հողվածների գների բարձրացման համար աստիճանա-
վորներին տրվում էր վարձատրություն՝ մեկ տարվա ըն-
թացքում եկամտի բարձրացման գումարի 20 տոկոսի շա-
փով:

Բնակչության կողմից հողի պահանջի բարձրացումը
բարձրացրեց նաև ունևոր դասակարգերի սպեկուլյատիվ շա-
հագրգովածությունը: Կարվածատերերը և կուլակները, առե-
տրականները և աստիճանավորները սկսեցին մեծ շահերով

¹ Հայկական ՍՍԻ ՊԿԱ, ֆ. 133, գ. 2308:

գնել և վարձակալել պետական հողեր և ավելի թանկ գնե-
րով իրացնել գյուղացիներին:

«...ներկայումս,— գրում է հողագործության մինիստր
Ծրմոլովը,— բահրատու հողվածները երբեմն ընկնում են
կուլակների ձեռքը, որոնք հետո վերցրած հողը մանր կտոր-
ներով վերագիջում են դրա կարիքն ունեցող գյուղացիներին՝
շատ ավելի բարձր վճարով, քան այն, ինչ որ իրենք վճա-
րում են գանձարանին»¹:

Այնուհետև նա գրում է, որ ամբողջ հասարակության
վարձակալած պետական հողամասերը գլխավորապես բաշխ-
վում են ունևոր գյուղացիների միջև, իսկ սակավազոր
համայնակիցներին համարյա թույլ չեն տալիս պետական
հողերն օգտագործելու:

Կառավարության խրախուսիչ միջոցները և ոճնևորների
սպեկուլյատիվ շահերը, կապված գյուղական բնակչության
հողի պահանջի բարձրացման հետ, հիմք ծառայեցին բարձ-
րացնելու բահրատու հողվածների գները և ավելացնելու
գանձարանի եկամուտները:

Պետական գույքի վարչության հինգերորդ տեղամասի
պետական բահրատու հողվածների տեղեկագրից երևում է,
որ վարձակալական հողվածների միջին գինը 1895—1898
թվականների ժամանակամիջոցում բարձրացել է համարյա
երկու անգամ, այսինքն՝ 12802 ռուբլի 50 կոպեկից հասել
է մինչև 25414 ռուբլու:

Չնայած դրան, պետական բահրատու հողվածների վար-
ձակալության գները շատ ավելի ցածր էին, քան գյուղացի-
ներից վարձակալի գանձած եկամուտները:

«Շատ հաճախ են այն դեպքերը,— գրում է 1896 թվա-
կանին հատուկ հանձնարարությունների աստիճանավոր
Ժորժիլաձեն,— երբ մեկ դեսյատինի սահմանված վճարը 20
կոպեկ է, իսկ այդ հողերի վարձակալման վճարը հավասար
է 2—3 ռուբլու և այդ վիճակը տանում է դեպի լայն առև-
տուրը...»²:

¹ Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 133, գ. 2308, Ծրմոլովի շրջարբերական
շամակը:

² Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 133, գ. 2309:

Որքան ավելի բարձրանում էր պետական հողերի վարձակալման վճարը, այնքան ավելի ուժեղանում էր գյուղացիների շահագործումը վարձակալների կողմից: Վերջին հաշվով դա հասցնում էր աշխատավոր գյուղացիների է՛լ ավելի աղքատացմանը:

Բերված փաստերը պարզ կերպով ցույց են տալիս, որ պետութայն համար բոլորովին շահավետ չէր արագացնելու գյուղացիական ռեֆորմը արքունական գյուղում: Սակայն դա միակ պատճառը չէր: Խնդիրն այն էր, որ եթե նա ձեռնարկեր պետական գյուղերի ռեֆորմը և այն արագորեն ավարտեր, ինչպես կատարվեց այդ բուն Ռուսաստանում, դա կարագացներ հողային ռեֆորմը նաև մասնատիրական գյուղերում, իսկ այդ հակասում էր նրա գաղութարարական քաղաքականութայնը:

3. Հողային ռեֆորմը մասնավոր հողատերերի կալվածքներում

Հայաստանում գյուղացիական ռեֆորմի յուրահատկությունը նաև այն էր, որ, նախ, ճորտատիրական իրավունքի վերացման օրենքի մշակումը նախապատրաստվեց առանց կալվածատերերի և, երկրորդ, կանոնադրական հրովարտակները բացառապես կազմում էին հաշտարար միջնորդները և նրանց ենթակա աստիճանավորները:

Ի տարբերություն դրան, Ռուսաստանում կալվածատերերը ոչ միայն ներգրավվել էին ճորտատիրական իրավունքի վերացման օրենքի մշակման գործին, այլև նրանց պարտականությունն էր՝ կազմել իրենց պատկանող գյուղերի կանոնադրական հրովարտակները: Հաշտարար միջնորդները դբաղվում էին միայն այդ հրովարտակների ստուգումով:

Բաղմաթիվ փաստեր վկայում են այն մասին, որ կալվածատերերը և հոգևորականությունը հենց սկզբից ընդդիմանում էին Հայաստանում հողային ռեֆորմի կենսագործմանը¹: Այդ տեսակետից հետաքրքիր է քաղվածքներ բերել

¹ Վ. Ռշտունին անտարակույս սխալվում է, երբ գրում է, թե «1870 թվականի կանոնադրությունների նախագծերը կազմելու գործին մասնակցելու

կովկասի փոխարքայի գլխավոր վարչությանը՝ Գ. Ս. Ստա-
րոսելիի անունով գրված այննայն հայոց կաթողիկոս
Գևորգ 4-ի նամակից:

«Նախագծվող փոփոխությունները թեպետև նպատակ
ունեն էջմիածնի գյուղերին, ընդհանրապես հայ գյուղերին
հավասար հասարակական և հողային միատեսակ ու միա-
սեռ կառուցվածք տալու, — գրում է նա, — բայց խոր ուշա-
դրությամբ ուսումնասիրելով դրանք, ես գալիս եմ այն ան-
կեղծ համոզման, որ նախագծված փոփոխությունները եր-
բք շեն կարող ներկայիս հանդեպ լավագույն վիճակի
հասցնել էջմիածնի գյուղերի շինականների տնտեսական
կենցաղը, այլ, ընդհակառակն, կարող են սպառնալ դրանց
այժմյան բարեկեցությանը, քայքայել այն, շափազանց մեծ
հեղաշրջումներ կատարել բնակիչների դարավոր իրավունք-
ների ու սովորությունների մեջ և, ինչպես փորձը ցույց է
տալիս, շատ տեղերում առաջ է բերել անվերջ թյուրիմացու-
թյուններ, դժգոհություններ»¹:

Այնուհետև կաթողիկոսը տրտնջում է, որ այդ կիսով
չափ նվազեցնում է վանքի եկամուտների գլխավոր աղբյու-
րը, քայքայում տնտեսությունը և բարոյական վնասներ
պատճառում գահին:

Հողային ռեֆորմի դեմ է՛լ ավելի ցատումով էին հանդես
գալիս հողատերերը. ըստ որում նրանք գործում էին ինչպես
միայնակ, այնպես էլ կոլեկտիվ կերպով: Պետական արխի-

հնարավորութունից Հայաստանի բարձր գասին ղրկելը նրա կողմից ոչ մի
դժգոհության չհանդիպեց», տե՛ս «Ազրարային ռեֆորմը Հայաստանում»,
էջ 225: Իր մյուս աշխատության մեջ նա գրում է. «Երբ Անդրկովկասի իշ-
խանությունները առանց նրանց մասնակցության նախապատրաստեցին և
կենսագործեցին 1870 թվականի գյուղացիական ռեֆորմը, նրանք առանց
որևէ առարկության ընդունեցին այն, շառաչագրելով ոչ մի այլ պահանջ,
նրա մեջ միանգամայն ներդաշնակորեն տեսնելով գյուղացիների դեմ իրենց
շահերի պաշտպանութունը, իրենց իրավունքները Ռուսաստանի և Վրաս-
տանի ազնվական ճորտատերերի իրավունքների հետ հավասարեցնելու
իմաստով»: Վ. Ռշտունու և Կ. Ստեփանյանի ցարիզմի ազրարային քաղաքա-
կանությունը և գյուղացիական շարժումները XX դ. սկզբին, Երևան, 1951,
էջ 38:

¹ ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 56, գ. 11, թ. 19—22:

վում կան հողատերերի մի քանի կուլիտիվ դիմումներ։
Բմնի գյուղի հողատեր Արսեն Սուլթանի Գեղամյանի 1875
թվականին դրած գանգատը ասում է. «Իսկ ներկայումս,
երբ մեր հարաբերությունները փոփոխվել են, երբ իմ գյու-
ղիչը կառավարելու գործում դադարել է իմ ազդեցությունը,
ինչպես այդ եղել է պարսկական կառավարության ժամանակ
և ուսական ղենքով երկիրը հնազանդեցնելուց հետո առա-
ջին տարիներին և երբ, այսպիսով, նրանք (շինականները—
Մ. Ն.) սկսեցին ինձ վերաբերվել միանգամայն անհաճելի
և թշնամաբար, որը հասավ այնտեղ, որ նրանք 1871 թվա-
կանի ամռանը նույնիսկ համարձակվեցին հրդեհել իմ ձիա-
նոցը, այժմ այդ կարգը հանդուրժելը ինձ համար միանգա-
մայն անհնարին է և քայքայիչ»¹։

Հողատերերի կատաղի դիմադրությունն առանձնապես
հանդես եկավ փրկագնման գործառնություններն անցկաց-
նելու փորձերի ժամանակաշրջանում։ Իրենց նամակներում
նրանք հետևյալ պահանջները ներկայացրին՝

1. Հողատերերին հողաբաժիններ առանձնացնել ըստ
նրանց ընտրություն, մի տեղում շինականների բոլոր հողա-
բաժինների $\frac{4}{30}$ -ական մասի շահով և նույնքան էլ նրանց
մաքուր եկամուտներից՝ առաջին $\frac{4}{30}$ մասի մշակման ծախ-
սերը ծածկելու համար, իսկ մնացած $\frac{22}{30}$ մասը անվճար
ամրացնել շինականներին, որպես լրիվ սեփականություն,
կամ թե, ծայրահեղ դեպքում, սակավահող դաշտավարային
գոտու կալվածքներում հողատերերի համար առանձնացնել
շինականների բոլոր հողամասերի $\frac{4}{30}$ մասը, իսկ մնացած
մասը փրկագնել կանխիկ դրամով, այն գումարներով,
որոնց տոկոսները կծածկեն հողի այդ մասի մշտական ծախ-
սերը։

2. Կանոնադրական հրովարտակներում բաժանման են-
թակա հողերի շահը ճիշտ չի նշված, այդ պատճառով նախ-
բան փրկավճարի գումարը որոշելը և հողատերերի բաժինը
ճիշտ առանձնացնելը անհրաժեշտ է շահիչ գործիքներով
հշտել հողի քանակը։

¹ Տե՛ս նույն տեղում, ֆ. 91, գ. 794, թ. 3։

3. Փրկագումարը որոշելու համար գյուղացիների կողմից կատարվող պարհակների ընդհանուր արժեքը պետք է որոշել, ելնելով ոչ թե այն գներից, որոնք գոյություն ունենին նախորդ դարի 60-ական թվականներին, այլ այդ պարհակներից ստացված հողատերերի եկամտի ներկայիս արժեքով, ելնելով վերջին տասը տարվա միջին գներից:

4. Անհրաժեշտ է հատուկ հանձնաժողովի միջոցով, ըստ հովի արտադրողականության, կլիմայական պայմանների և ոռոգման աստիճանի, որոշել հողաբաժինների կարգերը:

5. Փրկագնման փոխատվութունների հաշվարկները կատարել կանխիկ դրամով:

6. Առաջիկայում ևս, մինչև փրկագնման ակտերի հաստատումը և գանձարանից հողատերերին փրկագումարներ տալը, ուժի մեջ պահել այն բոլոր բնեղեն և դրամական պարհակները, որոնք այժմ կատարում են շինականները:

Քֆանի որ մենք փրկագնվող հողերի օրինական սեփականատերերն ենք, քանի որ, ուրեմն, մեր կողմից ստացվող պարհակները նույնպես օրինական են,— գրում են հողատերերը,— ապա, հետևաբար, շինականների կողմից կատարվող պարհակների դադարեցումը պետք է կատարվի ոչ շուտ, մինչև գանձարանը մեզ կվճարի փրկագինը¹:

Հայաստանի հողատերերը, այդ պահանջներով ու հավակնություններով, ոչ միայն բացահայտ դիմադրում էին ռեֆորմի կենսագործմանը, այլև ամեն կերպ փորձում էին ձախողել և ձգձգել փրկագնման գործը:

Ինչո՞վ բացատրել հայկական ֆեոդալների դիմադրությունը հողային ռեֆորմին: Ամենից առաջ այդ բացատրվում է նրանց տնտեսության բնեղեն ու սպառողական բնութիւնով: Հայաստանում, եթե չհաշվենք ըստ շնչի փողային վճարը, փաստորեն փողային ռենտա գոյություն չունեի: Բացի դրանից, նրանց սեփական վար ու ցանքը ապրանքային ուղղություն չունեի:

Նույնիսկ այն ժամանակ, երբ պետական հողերի վրա բնակեցված շինականների բնեղեն բահրան փոխարինվեց

¹ Ցարիզմի ազրար. քաղաք. և գյուղ. շարժ. Հայաստանում XX դ. սկզբում, էջ 54—61 և 67—80.

գրամական բաճրայով, կալվածատերերն առաջվա նման այն հավաքում էին բնեղենով: Մենք այստեղ ոչ մի օրինակ չունենք, որը վկայեր կալվածատիրական տնտեսությունը կապիտալիստական ուղի փոխադրելու մասին: Դա բացատրվում է ընդհանրապես արևելյան երկրների ու մասնավորապես Հայաստանի հողատերերի պարագիտային էությունը: Հայաստանում հողատերերը իրենց գյուղերում երբեք չեն զբաղվել հողագործությամբ և նյութական բարիքների արտադրման տեսակետից որևէ տնտեսական կազմակերպական գործունեությամբ, նրանք բավարարվել են միայն բնեղեն և գրամական բաճրա ստանալով: Նրանց սեփական վար ու ցանքը մշակվում էր կամ համայնքի իշխանության, կամ էլ սարքերենների՝ բաճրա հավաքողների հսկողության տակ, իսկ իրենք հիմնականում ապրել են քաղաքներում:

Այս տեսակետից բնորոշ է այն փաստը, որ փրկագնման գործառնությունների դեմ գրված համախոսական բողոքի տակ 59 ստորագրողներից 35-ը Երևան քաղաքի բնակիչներ էին:

«Կալվածատիրական տարրը,— ասվում է Երևանի նահանգային ստյանի 1912 թվականի մայիսի 17—20 ամսագրում,— մեծ մասամբ ապրում է գյուղերից դուրս՝ քաղաքներում և գյուղացիների կյանքին երբեք չի մասնակցում...»:

Իրենց պարագիտային կյանքի մասին հայ հողատերերն ասում էին նաև իրենք: Ներկայացնելով վերը բերված պահանջները, նրանք գրում էին. «Մեր առաջադրած միջոցառումով կառավարությունը կկանխի շահագանց խոշոր շարիք՝ բազմաթիվ պրոլետարիատի գոյացումը հողազրկված աղքատ ազնվականներից, որոնք ոչ մի աշխատանքի ընդունակ չեն»¹:

Չափումների ընթացքում Երևանի նահանգի հողատերերին հատկացրած 55843 դեսյատին հողից, արդեն 1908 թվականին 8344 դեսյատին կամ 15 տոկոսը գրավ էր դրված, իսկ հողատերերի պարտքերի գումարը հասել էր մինչև 213 հազար ռուբլու²:

¹ Ցարիզմի ագրարային քաղաքականությունը և գյուղ. շարժումները Հայաստանում XX դարի սկզբում, էջ 60:

² Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, գ. 76, թ. 91:

Նվ, վերջապես, հողային ռեֆորմին դիմադրելը կալվածատերերի կողմից բացատրվում էր մինչև ռեֆորմյան ժամանակաշրջանում գյուղացիական ռևոլյուցիոն շարժման թույլ աճումով: Այդ պայմաններում հողատերերը չէին կարող վախենալ ֆեոդալական շահագործման դեմ գյուղացիական ելույթներից:

Այսպիսով, ֆեոդալական խավը Հայաստանում, շունհնարով ո՛չ միջոցներ, ո՛չ պատմական փորձ և ո՛չ էլ կապիտալիստական տնտեսություն կազմակերպելու նախաձեռնություն. և գյուղացիությունից վտանգ չզգալով, նախընտրեց պահպանել հին քարացած հարաբերությունները:

Ուստի նա սկզբում ապշեց, երբ նրան հրամայեցին հողաշինարարության նոր կանոնադրություն, իսկ այնուհետև համոզվելով, որ այդ աշխատանքը ձեռնարկված է, նա սկսեց բոլոր միջոցներով, խորամանկություններով և ուղղակի սարսափի միջոցով խանգարել հարցի գործնական լուծմանը: Գրան նպաստեց պետական գյուղացիների հողաշինարարությունը ձգձգելու ցարական քաղաքականությունը:

Տեսնենք, թե հողային ռեֆորմի էությունը ինչու պետք է արտահայտվեր մասնատիրական հողերի նկատմամբ, գործնական ինչ քայլեր արվեցին այն կենսագործելու համար և ինչպիսիք են նրա արդյունքները:

Շահագործման ձևը մասնատիրական հողերում ամենուրեք միատեսակ էր: Այստեղ գյուղացիները չէին բաժանվում գյուղատնտեսություն և գյուղացիների և կալվածատան գյուղացիների, որոնք սպասարկում էին կալվածատերերի անձնական պահանջմունքները, որ հատուկ էր ուսուսական ֆեոդալիզմին:

Ռուսաստանից տարբերվում էր նաև նրանով, որ այստեղ գյուղացիները չէին բաժանվում կոռայինների և բահրատունների:

Սևիականատիրական հողերի գյուղացիները գլխովին կրում էին խառը պարհակ՝ կոռ և բահրա:

Բացի այդ բոլորից, ըստ գոյություն ունեցող օրենքների, գյուղացիներին թույլատրվում էր ազատ կերպով մի տեղից մյուսը տեղափոխվել:

Այսպիսի պայմաններում ունիորմը ըստ էութլամբ պետք է ճանաչեր գլուղացիներին որպես իրենց հողաբաժինների սեփականատերեր և դրա հիման վրա նրանց անգատեր հողատերերի օգտին կատարվող ամեն տեսակի պարհակներից: Իսկ իրականում ունիորմը հետապնդում էր մի նպատակ՝ ճանաչել հողատերերին որպես միակ սեփականատերը այն հողերի, որոնք գտնվում էին նրանցից կախյալ գլուղական համայնքների և գլուղացիների օգտագործման տակ:

Վերև բերված աղյուսակներում մենք հետապնդում էինք մի նպատակ՝ ցույց տալ, թե որքան աննշան է մասնատիրական այն հողերի քանակը, որի վրա տարածվում էին հողային: ունիորմի օրենքները:

Ստորև բերված աղյուսակը ակնառու ցույց կտա այն:

Մասնատիրական գլուղացիների հողաբաժինների տեսակաբար կշիռը

Շրջանների անունները	Ընդամենը հողեր	Գրանցից գյուղաց. բաժնեհողեր	Այդ թվում	Մասնատ. գյուղ. բաժնեհողերի տոկոսը ընդհ. բաժնեհողերի նկատմ.	Մասնատ. գյուղ. հողաբաժինների տոկ. ընդհ. տարածու. թ. նկատմամբ
			մասնատիրական հողեր		
Երևանի	395668	347360	22047	6,3	2,5
Նոր Բայազետի . . .	435413	—	—	—	—
Նախիջևանի և Շարուր-Գարալագի	678405	295463	29683	10,0	4,4
Էջմիածնի և Ալագյուղի շրջ. . . .	329072	225649	27219	12,1	4,1
Սուրմալուի	332573	—	—	—	—
Ալեքսանդրապոլի . . .	347296	270291	—	—	—
Կարսի օկրուղը	—	—	—	—	—
Չալդրի շրջանով	610294	480236	—	—	—
Կողղվանի օկրուղ	393494	341900	—	—	—
Օլթինի օկրուղը	—	—	—	—	—
Արդահանի օկրուղի հետ միասին	545712	380615	—	—	—
Ընդամենը	4067927	2344514	78949	3,4	1,9

Մենք սահմանեցինք, որ 4067927 դեսյատին ընդհանուր հողատարածություններից կալվածատիրական դասակարգին պատկանում էր 515747 դեսյատին: Հետագա վերլուծությունը ցույց տվեց, որ հողի այդ քանակից միայն 254 հազար (այլ տվյալներով 256 հազար) դեսյատին բնակեցված և պեսքական հողեր էին: Թվում էր, թե հողի այդ քանակի վրա էլ պետք է տարածվեին նշված օրենքները:

Բայց իրականում այդպես չէր: Այդ հողից գյուղացիներին նախատեսվում էր տալ ընդամենը մոտ 79 հազար դեսյատին միայն: Այլ տվյալներով ենթակա էր փրկագնման միայն 76897 դեսյատին մասնատիրական հող: Հողերի այդ քանակի վրա էլ պետք է տարածվեր նշված օրենքները: Դա կազմում էր այն ժամանակ գոյություն ունեցող համայնական բաժանելի հողերի 3,4 տոկոսը և ամբողջ տարածությունն 1,9 տոկոսը:

Այսպես, ուրեմն, պարզվում է, որ աշխատավոր գյուղացիության վրա թանկնստած քառասնամյա քաշքշուկը պտրտվում էր 76897 դեսյատին հողի շուրջը: Կարելի է արդյոք դրանից հետո պնդել, որ Հայաստանում կատարվել է հողային ռեֆորմ: Ոչ, չի կարելի: Բայց, գո՛ւցե այդ կատարվել է հողի հենց այդ քանակի սահմաններում:

Այդ հարցին պատասխանելու համար մենք պետք է ամենից առաջ քայլ առ քայլ հետևենք 1870 թվականի մայիսի 14-ի հողային ռեֆորմի կանոնադրության կենսագործման ընթացքին:

Պետք է ասել, որ այն մի քանի անգամ փոփոխվել և լրացվել է՝ 1877, 1879, 1883, 1891, 1903 և 1912 թվականներին:

Հաշվի առնելով այդ բոլոր փոփոխություններն ու լրացումները, մասնատիրական հողերում տեղավորված պետական շինականների հողաշինարարության էությունը հիմնականում հանգում էր հետևյալին.

1. Շինականներին որպես սեփականություն տրվում էր նրանց տունը:

2. Գոյություն ունեցող շինականային հողաբաժնի շափը

և կազմը առանց շինականների համաձայնություն չէին կարող փոփոխություն ենթարկվել:

3. Այն կալվածքներում, որտեղ արական սեռի ամեն մի շնչին 5 դեպյատինից պակաս հող կար, շինականների օգտագործման համար անհրաժեշտ է նրանց օգտին հող կրտրել հողատիրոջ ազատ հողերից, եթե այդ թույլ էին տալիս պայմանները:

4. Շինականի հողաբաժնի թվում հաշվել նաև թփուտային հողերը, որոնք շինականները ձեռք են բերել հողատիրոջից, բայց այգիները, աղացները և արդյունաբերական ու տեխնիկական այլ հաստատությունները, որոնք շինականները ձեռք են բերել տվյալ փաստաթղթով, հողաբաժնի թվին չհաշվել և համարել գյուղացիների սեփականություն:

5. Առանձին շինականային ծուխը կարող է հրաժարվել հողաբաժնից, բայց, ըստ որում, նրան որպես սեփականություն պահպանվում է տնատեղը, նրա վրա գտնվող շենքերով, և նա կարող է այն տնօրինել իր հայեցողությամբ:

6. Շինականները կարող են որպես սեփականություն ձեռք բերել իրենց դաշտահողը փրկագնման միջոցով, և հողատերը իրավունք չունի իրեն պահել նրանց հողաբաժինները:

7. Մասնավոր հողատերերի ընդհանուր տիրապետման կալվածքներում տեղավորված շինականները հարկվում են պարհակներով ըստ հետևյալ կանոնների. ա) դաշտային հողաբաժնի պարհակը սահմանվում է բոլորի համար՝ ու ամենուրեք միատեսակ, այն է՝ բահրա պարհակ, շինականները հողատերերին տալիս են բոլոր արտադրանքների բերքի $\frac{4}{30}$ մասը, բ) հողաբաժնային բանջարանոցներից, բոստաններից և այգիներից դրամական պարհակ է գանձվում միայն հողատերերի բարձր դասի օգտին:

Ինչպես նկատում է ընթերցողը, գյուղացիների հողաշինարարության կանոնադրությունների թվարկված հիմնական պահանջները ցարական կառավարությունը ձեակերպել է խիստ հակասական ձևով:

Այդ պահանջների մեջ, մի կողմից, տնային տնտեսությունը, այգիներն ու բանջարանոցները հայտարարվում են շինականների սեփականություն, իսկ, մյուս կողմից, դրանց

համար գյուղացիները հարկվում են դրամական պարհակով, եթե նրանք տեղավորված են բարձր դասին պատկանող հողերի վրա: Քանի որ Հայաստանում մասնատիրական հողերը կազմում էին ընդհանուր հողի լուկ 20 տոկոսը, իսկ վերջինս ավելի քան 90 տոկոսով պատկանում էր բարձր դասին, ապա, ուրեմն, այդ պահանջը կարող էր տարածվել միայն մի քանի գյուղերի վրա: Ըստ որում այն կարող էր անհավասար վիճակի մեջ դնել ոչ միայն առանձին գյուղերի գյուղացիներին, այլև միևնույն գյուղի գյուղացիներին, որովհետև գյուղի մի մասը հաճախ պատկանում էր բարձր դասի ներկայացուցիչներին, իսկ մյուսը՝ ցածր դասի ներկայացուցիչներին: Բացի դրանից, կալվածատերերի դասային պատկանելիությունը որոշելու գործում շտեմնված խառնաշփոթ գոյություն ունեւր: Սակայն դա էական նշանակություն չունեւր շինականների հողաշինարարական գործի համար, քանի որ այն գյուղացիները, որոնք տեղավորված էին ոչ բարձր դասի կալվածատերերի հողերի վրա, կազմում էին երկրի ամբողջ գյուղացիության ոչ ավելի, քան 0,2 տոկոսը:

Չէր կարող կիրառվել նաև արական սեռի ամեն մի ներկայացուցչին 5 դեսյատինից ոչ պակաս հող տալու պահանջը, որովհետև, նախ, այդ հնարավորությունը բացավում էր «եթե այդ թույլ են տալիս պայմանները» վերապահումով, և, երկրորդ, այն քանի հետևանքով, որ հողային ակֆորմը ընդհանուր հողատարածության մեջ չէր նվազեցնում հողատերերի բաժինը, այլ, ընդհակառակն, ավելացնում էր:

Եթե առաջ հողատերերը իրենց սեփական վար ու ցանքի համար յուրաքանչյուր ախշայից վերցնում էին 2 խալվար հող, ապա այժմ օրենքով նրանց տրվում էր ամբողջ հողի $\frac{1}{3}$ մասը, որը ղգալի չափով գերազանցում էր նրանց հողի նախկին քանակը: Ակնառու դարձնելու համար քերենք Գեոք-քիլիսա գյուղի հողերի բաշխումը հողատերերի և շինականների միջև: Բաժանման պահին, 1910 թվականին, Գեոք-քիլիսա գյուղը բաղկացած էր 67 ծխից, որոնք ունեին արական սեռի 315 շունչ: Ամբողջ հարմար հողը կազմում էր 2484 դեսյատին 1112 քառակուսի սաժեն: Մինչև ու-

Ֆորմը հողատերերի բաժինը կազմում էր ընդամենը 12 խալվար (գյուղը միշտ բաղկացած էր 6 ախշայից) կամ 45 դեսյատին, իսկ նոր կանոնադրությամբ նրանց տրվում էր 819 դեսյատին: Այն բաժանվում էր հետևյալ հողատերերի միջև. Մ. Գ. Գեղամյանին՝ 271 դեսյատին, 160 սաժեն, Էջմիածնի վանքին՝ 138 դեսյատին, Ռ. Ս. Գեղամյանին՝ 74 դեսյատին, 1200 սաժեն, Ի. Ն. Մելիքսեթյանին՝ 52 դեսյատին, 1200 սաժեն, Ե. Գ. Անանյանին՝ 41 դեսյատին, 1600 սաժեն, Ռ. Գ. Այդինյանին՝ 41 դեսյատին, 1600 սաժեն, Մ. Ա. Կյալովային՝ 50 դեսյատին, 1760 սաժեն, Զալալյաններին՝ 44 դեսյատին, 2080 սաժեն, Վ. Ի. Եղիազարյանին՝ 41 դեսյատին, 1600 սաժեն, Կ. Գ. Գեղամյանին՝ 62 դեսյատին, 1200 սաժեն: Դրանով շատ համաձայնակվելով, կալվածատերերը հնարավոր բոլոր միջոցներով ընդարձակում էին իրենց սեփական հողամասերը:

«Բեպետ հանձնակատար Գեղամյանը Բժնի գյուղի սեփականատերն է,— դրում են իրենց բողոքի մեջ Բժնի գյուղի բնակիչները,— որի հողերի մեջ մտնում է նաև «Քոթովլու» տեղամասը, բայց նա լրիվ սեփականատեր չէ, քանի որ այդ տեղամասը գտնվել է նշված գյուղի շինականների մըըտական օգտադործման տակ և միայն շինականային կանոնադրությունը կիրառելու ժամանակից սկսած, Գեղամյանն սկսեց դիմել զանազան, երբեմն բռնի միջոցների, որպեսզի այդ տեղամասը լրիվ սեփականատիրական իրավունքներով ամրացնի իրեն»¹: Այդ գրվել է 1875 թվականին, գյուղացիների և հողատերերի վեճը շարունակվել է մինչև 1893 թվականը: 1893 թվականին «Քոթովլու» տեղամասը 245 դեսյատին, 1920 սաժեն տարածությամբ, վերջնականապես տրվեց մուլքադար Գեղամյանին: Գյուղացիական հողերի հափշտակության մասին է խոսում Ողջաբերդ գյուղի բնակիչների դիմումը. «Ետնարհաբար խնդրում ենք վերաբնակեցման ատյանին,— գրում են նրանք,— որ մեզ տրվի Ողջաբերդ գյուղի կանոնադրական հրովարտակի պատճենը, որ մեզ համար պարզ լինի շինականների ու կալվածատիրոջ հո-

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 91, դ. 793, թ. 1:

դերի սահմանները, թե չէ մեր կալվածատերը հափշտակել է հավատարմատարներին շատ հողեր (13 ապրիլի, 1915 թվական)¹։ Ըննց այդ գործից էլ հրկում է, որ Երևանի բնակիչ, պետական խորհրդատու Կարգանովը անօրինական կերպով յուրացրել է նշված գյուղի 662 դեսյատին պիտանի և անպետք հողեր։ Այդ և գյուղացիների դաժան շահագործման հողի վրա մուքադարական գրեթե բոլոր գյուղերում չէին դադարում գյուղացիների ու կալվածատերերի վեճերը։ Պաշտոնական տվյալներով հողատերերի և շինականների վեճերին վերաբերող քննարկված գործերը միայն հավասար է եղել 1908 թվականին՝ 215, 1909 թվականին՝ 259 և 1910 թվականին՝ 209²։ Իսկ եթե վերցնենք հողաբաժինների կազմին պատկանող հողերի վերաբերյալ հողատերերի և շինականների միայն վեճերը, ապա այդպիսի վեճերը նահանգում հաշվվում էր 1909 թվականին՝ 118, 1910 թվականին՝ 145, 1911 թվականին՝ 90, իսկ գյուղացիներից հողատերերի օգտին պարհակներ գանձելու գործերի թիվը հավասար էր 1909 թվականին՝ 226, 1910 թվականին՝ 255 և 1911 թվականին՝ 360³։

Ամբողջ ասածից հետևում է, որ հողային ռեֆորմի հետևանքը եղավ այն, որ ոչ միայն շավելացան, այլև շատ ավելի կրճատվեցին գյուղացիական հողաբաժինները, ինչ վերաբերում է հողատերերին, ապա նրանք, նախ, անվանական հողատերերից վերածվեցին մասնավոր հողատերերի և, երկրորդ, գյուղացիական հողակտորների հաշվին առավել չափով ավելացրին իրենց հողաբաժինները։

Այլ կերպ էլ չէր կարող լինել, քանի որ հողաշինարարության հիմք էր վերցվել ոչ թե արական սեռի յուրաքանչյուր շնչին 5 դեսյատինից ոչ պակաս հողով շինականներին ապահովելը, այլ կալվածատերերին հողի $\frac{1}{3}$ մասով ապահովելը։ Վերը նշված ապամասններից կախված՝ վերապահումն էլ հենց դրված էր գյուղացիների հողաշինարարության հիմքում։

¹ Հայկական ՍՍԹ, ՊԿԱ, ֆ. 91, գ. 698, ք. 84։

² Նույն տեղում, գ. 60։

³ Նույն տեղում, գ. 301, ք. 84—85։

Այդ հաստատվում է նաև Երևանի նահանգի մասին կա-
 ուսվարական սենատի 1891 թվականի սեպտեմբերի 16-ի
 որոշմամբ. «Քննարկելով գործը, կառավարական սենատը,
 1890 թվականի Անդրկովկասի տեղական կանոնադրության
 12 հոդվածի հավելվածի (ծանոթութուն 3-ւ) II պարագրա-
 ֆի դորությամբ, հողատերերի ախշային հողերից շինական-
 ների արական սեռի յուրաքանչյուր շնչին 5 դեսյատինից ոչ
 պակաս հող տալու հարաբերությունը թուլյատրվում է պահ-
 պանել միայն այնտեղ, որտեղ այդ հնարավոր է տեղական
 պայմաններից ելնելով: Օրենքի մեջ այդպիսի վերապահում
 արվել է այն պատճառով, որ սակավահող կալվածքներում,
 մասնավորապես Երևանի նահանգում, 5 դեսյատին հող
 ստանալու շինականների անպայման իրավունքը, առանց
 կալվածքում գոյութուն ունեցող հողերի ամբողջ գումարի
 նկատմամբ այդ նորմայի հարաբերությունը, կարող է հան-
 դեցնել կամ բուն հողատերերի հողազրկմանը, կամ նրանց
 կզրկի արժեքավոր հողերից, որոնց բարելավելու վրա կա-
 տարվել են ղզալի ծախսումներ»¹:

Ինչ պատկեր էր ներկայացնում իրենից գյուղացիական
 հողաբաժինը կանոնադրական հրովարտակները կազմելուց
 հետո: Նոր Բայազետի գավառի տարբեր գյուղերի բնակիչ-
 ների հողով ապահովված լինելու շափը տալիս է հետևյալ
 պատկերը՝ գյուղերի շնչապատկան հողաբաժինների միջին
 շափը դեսյատիններով. Աղամիսան՝ 2,36, Վալի-Աղալու՝ 3,
 Գել՝ 3,05, Մակքար՝ 2,68, Վերին Ադիաման՝ 2,72, Թաղա-
 քյանդ՝ 3,27, Երանոս՝ 2,76, Ներքին Ադիաման՝ 1,72, Վե-
 րին Ղարանլուղ՝ 3,02, Ներքին Ղարանլուղ՝ 3,38, Ալի Ղըբխ՝
 2,51, Զոլխաչ՝ 2,73 դեսյատին, Քյասիք բաշ՝ 3,89, Ավդալ-
 Աղալու՝ 2,77, Մադինա՝ 4,11 Քարվանսարա՝ 3,7, Յանրխ՝
 8,41, Խարտուղ՝ 9, 48, Սիգանլու՝ 5,39, Ղըզլ-Խարաբ՝ 6,33
 դեսյատին²:

Այսպիսով, միայն շորս գյուղի արական բնակչության
 մեկ շնչին (20 տոկոսը) հասնում էր 5 և ավելի դեսյատին

¹ Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 91, գ. 704, թ. 24.

² Նույն տեղում, ֆ. 91, գ. 45, թ. 18.

հողաբաժին: Արական սեռի մեկ շնչին 5 դեպատինից ոչ պակաս հողաբաժնով բավարարելու անհնար լինելը և իրենց հողերը շինականների հողերից քահմամաղատելուց և իրենց նախկին հարաբերությունները փոփոխելուց շատ կալվածատերերի հրաժարվելը հասցրեց գոյություն ունեցող հողաբաժինների անխուսափելի պահպանմանը կամ թե հողաբաժանության միջոցով դրանց հավասարեցմանը, եթե, իհարկե, շինականների $\frac{2}{3}$ -ը այդ ուղում էին: Սակայն կապիտալիստական հարաբերությունների զարգացման և գյուղի շերտավորման զուգընթաց հողաբաժանության շանսերը աստիճանաբար նվազում էին և կանոնադրական հրովարտակները կազմվում էին գոյություն ունեցող հողաբաժինների հիման վրա: Այդ դեպքում յուրաքանչյուր գյուղի ներսում գյուղացիները ապահովվում էին տարբեր չափի հողաբաժնով: Ահա, օրինակ, ինչ տեսք ունեւ էջմիածնի գավառի Իգդալու գյուղը կանոնադրական հրովարտակը կազմելուց հետո. գյուղը բաղկացած էր 70 ծխից, որից 64 ծուխ օգտվում էին վարելահողով (տե՛ս էջ 43):

Այսպիսով, արական սեռի միեւնույն քանակի շունչ ունեցող ընտանիքները ունեին խիստ տարբեր քանակի հող:

Վերևում մենք ասացինք, որ տիրական գյուղերում կազմրվել էին կանոնադրական հրովարտակներ և նույնիսկ սահմանագծվել կալվածատիրական հողաբաժինները: Ի դեպ, մենք բերել էինք Բժնի գյուղի օրինակը, որտեղ ամբողջ հողի $\frac{1}{3}$ մասը սահմանազատվել էր շինականների հողերից և բաշխվել հողատերերի միջև: Սակայն այդպիսի դեպքերը շատ քիչ էին: Որպես կանոն, կալվածատերերը ընդդիմանում էին և համաձայն չէին կանոնադրական հրովարտակները տարածել դրանց վրա: Գյուղացիները առաջվա նման մշակում էին հողերը, և կալվածատերերը շարունակում էին նրանցից բնեղեն և դրամական պարհակ դանձել: Կանոնադրական բոլոր հրովարտակներում հատկապես ընդգծվում էր հողատիրոջ ամբողջ հողի իրավունքը և գյուղացիների պարտականությունը՝ մինչև իրենց հողաբաժինների փրկագնամը կրել այն պարհակները, որոնք սահմանվում են օրենքով: Ահա, օրինակ, ինչ է ասված այն գյուղերի կանոնադրական

<i>Հողաբաժանի անվանողը</i>		1	2	3	4	5	6	7	8	9	10	11
<i>Մեծերի քանակը</i>												
<i>Արտական</i>												
1	2	1350	2300	4500	4650	3400	3500	0650	—	—	—	—
2	3	4650	81150	81000	2450	4700	2400	71050	4600	2350	—	—
3	4	4650	7950	4600	3350	4700	3550	6750	81100	—	—	—
4	5	91400	71000	111500	5750	7950	121450	131550	121350	81050	6350	0300
5	6	81050	71050	91300	81200	91200	6850	121700	2250	0200	0100	—
6	7	131600	121600	101250	91300	—	—	—	—	—	—	—
7	8	14500	131700	131550	121500	121600	—	—	—	—	—	—
8	9	121900	162100	181800	121500	181600	—	—	—	—	—	—
9	10	121500	131550	172100	161850	—	—	—	—	—	—	—
10		81300	—	—	—	—	—	—	—	—	—	—
<i>Ընդամենը</i>		911600	891800	98200	75150	57235	271350	40900	27900	101600	6450	0200

հրովարտականների նախագծերում, որոնք պատկանում էին էջմիածնի վանքին:

«1. Երևանի նահանգի, էջմիածնի գավառի, Վաղարշապատ, Մաստարա, Օշական գյուղերում և Եղվարդի մի մասում տեղավորված շինականները, առանց որևէ փոփոխման, իրենց մշտական օգտագործման տակ պահպանում են այժմ գոյություն ունեցող այն հողաբաժինը, որը որոշվել է վերջնականապես սահմանված և մշտապես պահպանված սովորություններով, թեկուզ որ նրա կազմի մեջ մտնեն այգիներ, անտառներ, պուրակներ և եկամտաբեր այլ հողավածներ:

Սանոթություն 1-ին. Շինականներին տրված սեփականության իրավունքը պատկանում է էջմիածնի վանքին:

2. Իրենց հատկացրած հողաբաժնի համար շինականները պարտավոր են մշտապես պահպանվող սովորություններով պարհակներ կատարել էջմիածնի վանքի օգտին, այն է՝ հողային բոլոր արտադրանքների բերքի մեկ տասներորդ (3/30) մասը որպես մալջիհաթ կամ բահրա հանձնել վանքին և այգիներից վճարել մեկ ուրբի՝ հողի յուրաքանչյուր տասը լիտր կամ 3 փութ ցորենի ցանքատարածության (360 քառաստեկ) համար»¹:

Նույն բանն էլ ասված է Իզդալու գյուղի կանոնադրական հրովարտականում. «Հողը մշտական օգտագործման տալու համար շինականները կանոնադրության 76-րդ հոդվածի II պարագրաֆի հիման վրա պարտավոր են հողատերերին հանձնել պարհակ և մուլք (բահրա) բոլոր արտադրանքների բերքի շոբս երեսուներորդականի շափով, ինչպիսիք են ցորենով, հարդով, խոտով, աւվույտով, հավասարապես նույն 76-րդ հոդվածի ծանոթության համաձայն այգիների յուրաքանչյուր սոմարի համար 8-ական կոպեկ արծաթով»², Շինականների հողաբաժինների նկատմամբ հողատերերի իրավունքի և գյուղացիների կախվածությունը կալվածատերերից մինչև փրկագնման գործառնությունների կենսագործումը

¹ Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 56, գ. 17, ք. 26—29, 1880 թվական, էջմիածնի վանքին տրված Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության կանոններից:

² Նույն տեղում, ֆ. 91, գ. 767, ք. 49:

արձանագրված է առանց բացառության կանոնադրական բոլոր հրովարտակներում:

Շարադրված երկու փաստաթղթերից պարզ երևում է, որ կանոնադրական հրովարտակները որևէ փոփոխություն չմտցրին հողատերերի և գյուղացիների փոխհարաբերությունների մեջ: Դրանք մի ավելորդ անգամ ևս հաստատեցին հողատերերի իրավունքը հողի նկատմամբ և գյուղացիների պարտականությունը նրանց համար կատարելու սովորությունամբ սահմանված պարհակները: Կանոնադրական հրովարտակները, բացի դրանից, հողատերերին հնարավորություն տվեցին իրենց օգտին կտրելու համայնական հողերի մի մասը և դրանով իսկ է՛լ ավելի վատթարացնելու աշխատավոր գյուղացիության վիճակը: Կալվածատիրական ճշտամից ազատագրվելու նրանց միակ հույսը մնում էր իր հողարածին փրկագնումը:

4. Փրկագնման գործառնություններ

Հողի փրկագնումը հողային ռեֆորմի զագաթնակետն էր: Այնտեղ, որտեղ փրկագնման գործառնություններ չկատարվեցին, հողը շրարձավ գյուղացիների սեփականություն և, հետևաբար, խոսք անգամ չի կարող լինել ֆեոդալական կախվածությունից ու շահագործումից նրանց ազատագրման մասին:

Ի տարբերություն Ռուսաստանի, Անդրկովկասում հենց սկզբից փրկագնման գործառնությունների հիմքում դրվեցին փրկագնման ոչ սրարտադիր, այսպես կոչված, ֆակուլտատիվ եղանակը: Դա նշանակում էր, որ կառավարությունը չի խառնվում փրկագնման գործին, և յուրաքանչյուր գյուղացի կամ համայնք ինքն է մտնում հողատերերի հետ բանակցությունների մեջ և մասնավոր կարգով գնում հողարածինները:

Հողի նման փրկագնումը ինքնին ասում է, որ ցարիզմը շահագորգոված չի գյուղացիներին ֆեոդալական կախվածությունից շուտով ազատագրելու: Ցարական կառավարությունը չէր կարող չիմանալ, որ մշտական կարիքի մեջ գտնվող

գաղութային Հայաստանի աշխատավորը ի վիճակի չի իր սեփական միջոցներով գնելու իր հողաբաժինը և այդ պատճառով նա դեռ երկար ժամանակ կախված կմնա հողատիրոջից: Փրկագնման ոչ պարտադիր եղանակը օգտակար էր ցարիզմին ի միջի այլոց նաև նրանով, որ որքան կարելի է ավելի երկար ժամանակով կարող էր ձգձգվել այն գյուղացիների հողաշինարարությունը, որոնք տեղավորված էին պետական-մասնատիրական հողերի վրա:

Ընդհուպ մինչև 1901 թվականը ներառյալ փրկագնվել էր ընդամենը 40 դեսյատին, 2080 սաժեն կալվածատիրական հող՝ 4546 ուրբլի գումարով:

«1902 թվականին, շինականների գործերի նահանգային ատյանի տվյալներով, հողատերերի հետ կատարված կամավոր համաձայնություններ փրկագնվել է 180 ուրբլու ընդամենը 1 դեսյատին 600 քառ. սաժեն հող: Իսկ հողի այն ընդհանուր քանակը, որ գնվել է 1870 թվականից մինչև այժմ, ինչպես կամավոր համաձայնությամբ, այնպես էլ շինականների պահանջով, կազմում է 40 դեսյատին, 2070 սաժեն հող, 4546 ուրբլի 90 կոպեկ գումարով»¹:

«Այդ ընթացքի դեպքում, — ասվում է Գյուղատնտեսական արդյունաբերության կարիքների Երևանի նահանգաշինկոմիտեի եզրափակման մեջ, — ամբողջ փրկագնման գործառնությունը կարող էր կենսագործվել մի քանի հազարամյակ հետո միայն»²:

Եթե նույնիսկ ճիշտ է, թե մի քանի հարուստ ընտանիքներ կարող էին փրկագնել իրենց հողակտորը, ապա դա որևէ նշանակություն ունենալ չէր կարող:

Ասենք, չէր էլ կարող կենսագործվել փրկագնումը, անգամ եթե այն հնարավոր լիներ, որովհետև նա դեմ էր առնում անվերջ ձգձգվող հողաշինարարության աշխատանքներին:

Ահա, օրինակ, 1912 թվականի դեկտեմբերին ինչ էր գրում Կովկասի փոխարքայությունը իր ներկայացրած նա-

¹ Экономический обзор Эриванской губернии на 1901 г., стр. 17.

² Памятная книжка Эриванской губернии на 1904 г., стр. 39.

խաղծում. «...հողաշինարարությունը այժմ արդեն կատարվում է... Բայց, մինչև հիմա չի ավարտվել ոչ մի գյուղում. նկատի ունենալով, որ գործող օրենքը պահանջում է հողաշինարարական մի շարք բարդ գործողություններ... և դրանց վերջնական արդյունքը, այնուամենայնիվ, իր հողի վրա տեղավորվող բնակչությանը սեփականություն իրավունք չի տալիս, այսինքն՝ հողալին հարաբերությունների մեջ չի ստեղծում այն օրինակարգը, որը կազմում է ներկա օրինադժի դրսավոր նպատակը¹։

Այստեղ ասվում է ոչ միայն հողաշինարարական աշխատանքը անավարտ լինելու պատճառով չէր կարող փրկագնում կատարվել, այլև այն մասին, որ 1912 թվականի օրենսդրությունը էլ չի կարող ապահովել նրա կիրառումը։

Պրոֆ. Մ. Ադոնցը անկասկած սխալվում է, երբ գրում է. «Եթե Ռուսաստանում փրկագնման գործառնությունները ավարտվեցին 80-ական թվականներին և գյուղացիական տնտեսությունները հիմնականում անջատվեցին կալվածատիրականից, որով ստեղծվեցին բարենպաստ պայմաններ գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար, ապա Հայաստանում հողակտորների պարտադիր փրկագնումը տեղի ունեցավ 1912 թվականին»²։

1912 թվականին ոչ թե տեղի ունեցավ այդ փրկագնումը, այլ միայն լույս տեսավ այդ փրկագնման գործառնությունների նախագիծը, որն այնպես էլ չիրականացավ։

1912 թվականի դեկտեմբերի 20-ի օրենսդրությունը մի ավելորդ անգամ հաստատում է, որ Անդրկովկասում կիրառվող ցարական կառավարության քաղաքականությունը հակադրուղացիական ուղղություն ունի։ Անդրկովկասի գյուղացիները ավելի քան 40 տարի համարվում էին ժամանակավորապես պարտավորներ և այդ ժամանակի ընթացքում դանազան պարհակներ կատարելով մի քանի անգամ ավելին լճարեցին, քան արժեք Խրանց հողարածինը³։

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 113, գ. 133, թ. 16։

² Տե՛ս Մ. Адонц, Экономическое развитие Восточной Армении, ՀՍՍՌ Գիտ. ակադ. հրատ., էջ 324, 1957։

³ Նույն տեղում, գ. 67, թ. 12։

Այսպես, օրինակ, ցարական աստիճանավորների նախ-
նական հաշիվներով, 330 գյուղերի մասնատիրական կալ-
վածքներից գյուղացիների փրկագնման հնթակա էր 76897
դեսյատին հող, գյուղացիներից գանձվող տարեկան բահ-
րայի ընդհանուր գումարը դրամի վերածած կազմում էր
168830 ռուբլի: Դրա հիման վրա, ելնելով փրկագնման պայ-
մաններից, որ նախատեսում էր բահրայի 6 տոկոսի կապի-
տալացում, փրկագնման ընդհանուր գումարը սահմանվել էր
2813837 ռուբլի: Իսկ եթե մենք բահրայի տարեկան գումար-
ը բազմապատկենք հետոնեֆորմյան տարիների (1880-ից
մինչև 1912 թվականները) թվով, ապա վճարված բահրայի
գումարը կկազմի 7090860 ռուբլի, որի փրկագնման գումարը
գերազանցում է 2,5 անգամ:

Անդրկովկասի գյուղացիները իրենց հողաբաժնի համար
ոնեֆորմի ժամանակաշրջանում մի քանի անգամ ավելին
վճարեցին կալվածատերերին, քան Ռուսաստանի ներքին
նահանգների գյուղացիները, այդ շեն կարող թաքցնել նույն-
իսկ ցարական կառավարության որոշ բարձր աստիճանա-
վորներ:

«Վորոնցով-Դաշկովը չէր կարող չընդունել, — գրում է
իր զեկուլցի մեջ պետական քարտուղար Բարոն Նոլդեն, — որ
կախյալ հարաբերությունների ամբողջ ժամանակի ընթաց-
քում կալվածատիրական ու տիրական շինականներին...
դրամական բահրայի և փրկագնման վճարներ չփոխադրե-
լու և բարձր ընեղեն պարհակների թողնելու հետևանքով
կհասցնի նրանց խիստ քայքայված տնտեսական վիճակի»:
Եվ իրոք: Նախագծի հեղինակներ՝ դոմայի 34 դեսյուտատ-
ների և Ալ. Լոսիցկու հաշվարկումներով (տե՛ս «1906 թվա-
կանի փրկագնման գործառնությունները»), եթե ռուս գյու-
ղացիները ոնեֆորմի ժամանակ յուրաքանչյուր դեսյատին հո-
ղի համար կալվածատերերին վճարել էին միջին հաշվով 46
ռուբլի, նկատի ունենալով նաև փրկագնման գործառնու-
թյունները դանդաղելու համար կատարվող գերավճարում-
ները, ապա Անդրկովկասի ժամանակավորապես պարտա-
վոր գյուղացիները ոնեֆորմի ժամանակից սկսած կալվածա-
տերերին վճարեցին՝ յուրաքանչյուր դեսյատին հողի համար,

միջին հաշվով 387 ուրբի: Ելնելով այդ անվիճելի փաստից, Կորոնցով-Դաշկովը անհրաժեշտ էր գտնում գյուղացիների համար տրվող կալվածատիրական հողի վարձահատուցումը կատարել ոչ թե գյուղացիների, այլ գանձարանի միջոցներից: Նրա հաշվարկումներով դա կազմում էր 28—30 միլիոն ուրբի: Նրա կարծիքը պաշտպանում էին պետական քարտուղար Բարոն Նոլդեն, ֆինանսների մինիստր Շիպովը, հողաշինարարութայան և հողագործութայան գլխավոր կառավարող Ն. Կուալյարը և ուրիշներ:

Այդ առաջարկությունը շրնդունվեց: Մինիստրների խորհուրդը գտավ, որ հարցը կարող է լուծվել միայն օրենսդրական կարգով, և դա պահանջում է զգալի ժամանակամիջոց: 5—6 տարի հետո, 1912 թվականին, վերջապես, լույս տեսավ փրկագնման գործառնությունների երկար ժամանակ սպասվող օրինագիծը, որը լրիվ հիասթափման հասցրեց բոլոր նրանց, ովքեր արդարադատութայան հույս ունեին: Այդ օրինագծով հույս պետք է փրկագնեին իրենք՝ գյուղացիները:

1912 թվականի դեկտեմբերի 20-ի հրամանագրով հողատերերի հետ պարտադիր հարաբերությունների մեջ գտնվող գյուղացիները պետք է փոխադրվեին սեփականատերերի կարգը և 1913 թվականի հունվարի 1-ից սկսած, հողը փրկագնելու և բնեղեն պարհակները դադարեցնելու միջոցով, լիովին ազատագրվեին կալվածատերերի կախումից:

Հողատերերը շինականներից ստացվող բնեղեն պարհակների փոխարեն պետական դանձարանից պետք է ստանային հողի համար հատկացված կապիտալային փրկագնման գումարից 4,5 տոկոս, ընդհուպ մինչև փրկագնային լրիվ կապիտալային գումարի ստանալը: Իսկ շինականները 1913 թվականի հունվարի 1-ից պարտավոր էին հողատերերին տրվող պարհակների փոխարեն փրկագնման վճարները մուծել ըստ այն հաշվարկների ու ժամկետների, որոնք սահմանվում էին 1912 թվականի օրենքի հիման վրա:

Փրկագնման այն պայմանները, որոնք սահմանել էին 1912 թվականի օրենքով, գյուղացիների համար ծանր ու քայքայիչ էին:

Փրկավճարման գումարը որոշելու նպատակով բոլոր դաշտային հողերը բաժանվեցին կարգերի. ջրովի վարելահող, անջրդի վարելահող, կալվածքատնային վարելահող, Գրանք իրենց հերթին բաժանվում էին կատեգորիաների: Վարելահողաբաժինների փրկագնման վճարի գումարը սահմանելու ժամանակ հաշվի չէր առնվում ո՛չ հողի շուկայական գինը, ո՛չ հողից ստացվող տարեկան միջին եկամուտը, ո՛չ դրամական ընդհանուր պարհակի շափը: Փրկագնման վճարը յուրաքանչյուր դեպքում որոշում էր հաշտարար միջնորդը, որը որպես հիմք ընդունում էր կանոնադրական հրովարտակում գրանցված հողի կարգը և նահանգային ատյանի կողմից սահմանված միջին գները: Ինչ վերաբերում է կալվածատիրական հողերին, ապա փրկագնման գումարը որոշելու հիմք ընդունվում էին դրամական բահրայի շափերը:

Այսպիսով, տարբեր գյուղերում հողի հավասար տեղամասերի փրկագնման կապիտալ գումարը մեծ ու փոքր էր, նայած հողի որակին: Ցարական կառավարողները ըստ էության, ելնելով մասնավոր հողատերերի և գանձարանի շահերից, ամենուրեք և բոլոր դեպքերում հողի փրկագնման գումարը շատ ավելի բարձր էին սահմանում, քան նրա շուկայական գինն էր:

Շինականների հետ փրկագնման գործարքներ կնքելուց հետո վերջիններս յուրաքանչյուր տարի մուծում էին փրկագնման վճարներ, որոնք որոշվում էին ոչ թե փրկագնման փոխհատուցումը տարիների թվի վրա բաժանելու միջոցով, այլ փրկագնման գումարը 28 տարվա մարման ժամկետի համար 6 կոպեկի, 41 տարվա մարման ժամկետի համար 5 կոպեկի և 56 տարվա մարման ժամկետի համար 4,5 կոպեկի վրա բազմապատկելու միջոցով:

Վերահիշյալ դրույթները լուսարանելու համար բերենք մի քանի կոնկրետ տվյալներ:

**Մեկանի նախնգի Եարու-Գարալագյազի գավառի Այնձոր գյուղի
փրկագնման գումարի նախնական հաշվարկման տեղեկատու**

Պիտանի հոդեր	Ղեկավարներին բանազը	1 ղեկավարին փրկագնման վճարը	Ընդհանուր փրկավճարը	Փրկագնման ժամկետները	Փրկագնման վճարները տա- րեկան պլանը	Կալվածատե- րներն հասնող գումարը
Այգիներ, պար- տեղներ, բանջ. և բոստաններ . . .	11 ղևս.	67 ո.	752 ո. 35 կ.	—	—	—
Անջրդի վարելա- հող	225 ղևս.	27 ո.	6075 ո.	—	—	—
Ջրովի վարելա- հող	775 ղևս.	40 ո.	31013 ո.	—	—	—
Փրկագնման են- թակա ամբողջ հողը	1011 ղևս. 1350 քս.	—	37840 ո. 68 կոպ.	41	1892 ո. 03 կ.	1701 ո.

Ձառ գյուղի փրկագնման գումարի նախնական հաշվարկ-
ման տվյալները.

Անջրդի վարելահող II կարգի 713 ղևս. 1520 քառ. սա-
ծեն... մեկ ղևսյատինի փրկագնման վճարը՝ 27 ոուրլի:
Փրկագնման ընդհանուր գումարը 19268 ոուրլի 10 կոպեկ:
Փրկագնման համար գյուղացիները ընտրել են 56 տարի:
Փրկագնման վճարների տարեկան չափը 866 ոուրլի 25 կոպ.,
կալվածատիրոջը հասնող ընդհանուր գումարի չափը՝ 866
ոուրլի 25 կոպեկ¹:

Վերին Ղամարլու գյուղի պիտանի հողերի փրկագնման
գումարի հաշվարկումը.

Ջրովի հողեր առաջին կարգի՝ 346 ղևսյատին, 2335 քառ. սածեն, 1 ղևս-
յատինի փրկագնման գումարը՝ 63 ո.:
Ընդհանուր փրկագնման գումարը՝ 21859 ոուրլի 29 կոպեկ:
Կալվածքային հող՝ 76 ղևսյատին, 1649 քառ. սածեն:
Մեկ ղևսյատինից արվող դրամական բահրայի չափը՝ 5 ո. 76 կոպ.:
Կալվածատնային ամբողջ հողի դրամական բահրայի չափը 441 ո. 71 կ.:
Փրկագնման ընդհանուր գումարը = $\frac{441 \cdot 100}{60/0} = 7361$ ո. 83 կ.:

¹ Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 91, գ. 477, ք. 9—10.

(Մեկ դեսյատին հողի գինը կլինի մոտ 96 ուրլի): Փըրկազնման ամբողջ գումարը հաշվվում է 29221 ուրլի 12 կոպեկ¹:

Համապատասխանաբար հաշվում էր ինչպես փրկագնման գումարի տարեկան շահը, այնպես էլ կալվածատերին հասնող տարեկան գումարը:

Բերված օրինակները ցույց են տալիս հողի փրկագնման գնի խիստ տատանումներ, նայած նրա տնտեսական նշանակությանը: Առաջին դեպքում ջրովի հողաբաժինների մեջ մտնող այգիների, պարտեզների, բանջարանոցների ու բոստանների փրկագնման գումարը հավասար է 67 ուրլու, իսկ երկրորդ դեպքում բարձր դասին պատկանող կալվածատիրոջ վարելահողի կազմի մեջ չգտնվող կալվածքատնային հողի փրկագնման գումարը, որը կալվածատիրոջը դրամական բահրա է բերում, հավասար էր գրեթե 96 ուրլու: Այնուհետև, առաջին դեպքում վարելահողի մեկ դեսյատինի փրկագնման գումարը սահմանվում է 40 ուրլի, իսկ երկրորդ դեպքում՝ 63 ուրլի: Փրկագնման գումարը ոչ միայն շատ ավելի բարձր էր հողի շուկայական գնից, այլև տարեցտարի աճում էր փրկագնման վճարումների տոկոսի բարձր մակարդակի հետևանքով: Ավելի ակնհայտ լինելու համար բերենք նշված տվյալների հիման վրա կազմած մեր հետևյալ աղյուսակը.

Այսպիսով, գործող փրկագնման գումարը կամ, որ միևնույնն է, փրկագնման վճարումների ընդհանուր գումարը երկու և կես անգամ գերազանցում է սկզբնապես սահմանված փրկավճարի գումարին: Իրերի նման ընթացքը շէր կարող գյուղացիների համար քայքայիչ հետևանք չունենալ:

Այժմ տեսնենք, թե ինչ արգելքների հանդիպեց փրկագնման գործառնությունը և ինչ շահով այն իրագործվեց:

Փրկագնման գործառնությամբ ենթադրվում էր ընդգրկել ինչպես տիրական, այնպես էլ պետական-սեփականատիրական գյուղերը:

Հաշտարար միջնորդները պետք է կազմեին այդ գյուղերի

¹ Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, գ. 477^ա, թ. 25—26:

Փրկագինման գումարի անը ամեն տարվա փրկագինման
վճարումները և նեռանում

Գյուղերի անունները	Այդ թվում՝		Կողարտը - ամառն փաղի - րտը Եմտրան դարդեանիմփ վզվատուղն Ի	76 n. 63 կ. 67 n. 92 կ. 113 n. 34 կ.	81 n. 38 կ.
	միտն - դժողի մծմտգ - մնն մմտրան դարդեանիմփ վզվատուղն Ի	միտն - դժողի մծմտգ - մնն մմտրան դարդեանիմփ վզվատուղն Ի			
	մրասմտիտ վտղիտտը դչողր մմտրան ճեսմրտ վժողրամտցն	77372 n.	48496 n.	48904 n.	174972
	միտն - դմտտ վմտցի դարդեանիմփ	1892 n.	866 n.	1753 n.	451
	մոսի - ստ դտրմտցն	4, 5	5	6	—
	մաղիտտը դարդեանիմփ	41	56	28	—
	մմտրան մասդտցեղմ դարդեանիմփ	57810 n.	19268 n.	29221 n.	86329
	միտդտծ մասդտցեղմ վեսն	1012 դես.	714 դես.	424 դես.	2160
Ընդամենը					

Անաճար

Զառ

Վերին Ղամարլու

Ընդամենը

ամբողջ հողի (հողի պետական բաժինն առանձին) նախնական հաշվարկները և հաշվելին շինականներից ստացվող փրկագնման վճարները, ինչպես նաև գյուղացիների կողմից գնվող հողերի տոկոսները՝ հօգուտ գանձարան-տիրոջը և մասնավոր հողատերերին: Արխիվային տվյալների հիման վրա մինչև 1913 թվականի փետրվարի 28-ը կազմվել է 339 գյուղերի 328 կանոնադրական հրովարտակ, չի կազմվել 7 գյուղերի, այդ թվում վանքապատկան 5 գյուղերի կանոնադրական հրովարտակ:

Այլ տվյալներով, մինչև 1913 թվականի հունիսի 7-ը, 1912 թվականի դեկտեմբերի 20-ի օրենքի հիման վրա տոկոսների հաշվարկ է կատարվել հետևյալ հողատերերին ըստ 348 կալվածքի, որոնցից նահանգային ատյանը քննարկել է 330-ը¹: Բայց դրանք միայն նախնական հաշվարկներ էին, որոնք ցարական աստիճանավորները կազմել էին իրենց առանձնասենյակներում, արխայիկ վաղեմություն ունեցող կանոնադրական հրովարտակների հիման վրա, որոնք իրավական արժեք չունեին: Այդ կանոնադրական հրովարտակներից շատերը կազմվել էին դեռ 70 և 80-ական թվականներին: Այդ ժամանակի ընթացքում որոշ գյուղերում կատարվել էին նոր վերաբաժանումներ, այլ գյուղերում հողը, կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով, կենտրոնացվել էր գյուղական կուլակների ձեռքը, երրորդում, կալվածատերերը հնարավոր բոլոր միջոցներով, գյուղացիների հողաբաժինների հաշվին, սվելացրել էին իրենց հողաբաժինը, շատ գյուղերում կալվածատիրական հողը սահմանազատված չէր շինականների հողերից, այդ ժամանակի ընթացքում փոփոխվել էին վարելահողերը և այլն, և այլն:

Բերենք պաշտոնական փաստաթղթերից մի քանի քաղվածքներ, որոնք բնորոշում են դրությունը և վկայում, որ անհնարին է դրա հիման վրա փրկագնման ակտեր կազմել:

1. «Երևանի գավառի երրորդ բաժնի հաշտարար միջնորդը դիմում է ուղարկում Երևանի շինականային գործերի ատ-

¹ Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 91, գ. 301, թ. 150.

յանին, որի մեջ նա բացատրում է, թե 20—25 տարի սրանից առաջ Ղամբարու գյուղի որոշ բնակիչներ իրենց հողաբաժինները վաճառել էին այլ գյուղերի բնակիչներին, որ գնորդները շինել են տներ և կազմել տնտեսութուն: Խընդրում ենք ցուցում տալ, թե կարող են արդյոք այն անձինք, որոնք գնել են նշված հողերը, 1912 թվականի դեկտեմբերի 20-ի օրենքի հիման վրա փրկագնել դրանք¹:

2. Նախիջևանի գավառի IV բաժնի հաշտարար միջնորդի գեկուլցից պարզվում է, որ «Բաղամլու գյուղում կանոնադրական հրովարտակը կազմվել է այնպես, որ նրա մեջ նշված չեն փրկագնման ենթակա առանձին հողերի սահմանները: Բացի դրանից, պիտանի հողերի քանակը, մի գեպքում նշված է 620 դեսյատին, 1800 քառ. սաժեն, մյուս գեպքում՝ 367 դես., 1800 ք. ս., իսկ երրորդում՝ 137 դես., 1200 ք. ս.: Իսկ հողաբաժինների ցուցակներում 483 դես., 336 սաժեն է... Խնդրում եմ, որ նահանգային ատյանը ցուցում տա, թե ինչ փաստաթղթերով ես պետք է ակտում ցուցակագրեմ փրկագնվող հողերի սահմանները»²:

3. «...նշված գյուղերի (Ջահրի-թուրքական, Ջահրի-հայկական, Նաղարաբատ, Փայիղ, Սուլասուզ, Շահբուզ և Քյուսու — Մ. Ե.) նախկին հողատերերը հրաժարվեցին ցուլց տալ իրենց պատկանող հողաբաժինները: Այդ պատճառով հնարավոր չեղավ նաև փրկագնման գումարից վարձատրման տոկոսներ հաշվարկել հողատերերից ամեն մեկի համար: Հողատերերից չուրաքանչյուրը, իսկ երբեմն հողատերերի մի խումբ... ունեն առանձին տեղամասեր, որից նրանք բացառապես իրենց համար ստանում են բահրա, իսկ այդպիսի չուրաքանչյուր տեղամաս օգտադորժում են գյուղացիները... շատ քիչ հողատերեր ունեն իրենց տեղամասի դատական սահմանագծման պլաններ, սակայն մեծամասնութունը այդպիսի պլաններ չունի, իսկ առկա եղած պլանների մեջ չի նշանակված այդ տեղամասի զանազան հողերի սահմանները, նրանց մեջ չկան ախշայական հողերից՝

¹ Տե՛ս Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 91, գ. 304, թ. 269:

² Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 91, գ. 304, թ. 283:

մուլտադարական հողերի սահմանագծումներ, որտեղ այդպիսիները գոյութիւն ունեն, որոշ մուլտադարներ իրենց տեղամասերին տիրում են առևտրական կայքագրերով, մյուսները՝ ընտանեկան նոտարային պայմանագրերով, իսկ տեղամասերի շատ տիրողներ՝ առանց որևէ փաստաթղթերի: Երեք գյուղերի համար կազմված է կանոնադրական մի հրովարտակ, ըստ որում այնպես, որ նրա մեջ նշված չեն ուսման մի գյուղի հողաբաժինների սահմանները, ո՛չ էլ առանձին հողաբաժինների սահմանները¹:

Այդ բոլոր հար ու նման հարցերին նահանգային ատյանը կամ տալիս էր անորոշ պատասխաններ, կամ էլ հարցնում էր Կովկասի փոխարքայի կարծիքը: Իսկ փոխարքան, որպես կանոն, պատասխանում էր, որ «նշված հարցը յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է լուծի ինչպես հաշտարար միջնորդը, այնպես էլ նահանգային ատյանը»²:

Բախվելով վերը նշված արգելքներին և գյուղացիներին համառ դիմադրութեանը, ցարական կառավարողները հարկադրված էին շափարարական նոր աշխատանքներ սկսել, նպատակ ունենալով փրկագնման գործառնութիւնների համար հարմար պայմաններ ստեղծել: Կովկասի փոխարքայի 1914 թվականի օգոստոսի 25-ի տեղեկանքից երևում է, որ շափարարական աշխատանքով ընդգրկվել էին 294 գյուղ, ըստ որում մինչև 1913 թվականի մայիսի 16-ը փրկագնման գործառնութիւնների համար աշխատանքներ էին կատարվել միայն 79 գյուղում, որը կազմում էր այն բոլոր գյուղերի 1/4 մասը, որոնց համար ենթադրվում էր շափարարական աշխատանքներ կատարել: Այդ նույն տեղեկանքի մեջ ասված է. «Առանձին աշխատանքները ավարտելու համար կպահանջվի 3—4 տարի, իսկ պետական պալատի կառավարիչը գտնում էր, որ դրա համար պահանջվում է տասնյակ տարիներ»³:

Ուսումնասիրութեան հետագա ընթացքը ցույց է տալիս, որ շափարարական աշխատանքները և, դրանց հիման վրա,

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 91, գ. 304, ք. 284.

² Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 91, ք. 275.

³ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 91, գ. 462, ք. 130.

փրկագնման գործառնությունների կատարումը 1914 թվականի իմպերիալիստական պատերազմը սկսվելու կապալցությամբ ընդհատվեցին:

Այսպիսով, փրկագնման գործառնությունները, ինչպես նաև նախորդ հողաշինարարությունը, ընդհանուր խոսակցություններից, ուժերի անօգուտ ծախսումից և անվերջ հոգսերից մեռյալ կետից այն կողմը շարժվեց:

1911 թվականին, փրկագնման օրենքը հրապարակելու նախօրյակին, Մինիստրների սովետի (Ստոլիպինի նախագահությամբ) ամսագիրը գրում էր. «Հողային ռեֆորմը սկսվելու անցած ժամանակաշրջանի ընթացքում կովկասում հողային հարաբերությունները մինչև հիմա մնում են նույն ձևով, ինչպես այն սահմանվել էին ժամանակավոր բնույթի պետական նախապատրաստական միջոցառումներով»¹: Մեկնարանություններն ավելորդ են: Մենք կարող ենք միայն ավելացնել, որ հողային հարաբերությունները անձեռնմխելի մնացին փրկագնման վերաբերյալ 1912 թվականի օրենքը հրատարակվելուց հետո էլ:

5. Հողային ռեֆորմի տնտեսական հետևանքները

Հողային ռեֆորմը շատ թանկ նստեց հայ ժողովրդի վրա և բերեց գյուղատնտեսության բնագավառում արտադրողական ուժերի զարգացման համարյա լրիվ ճահճացում: Եթե գյուղատնտեսական այս կամ այն կուլտուրայի արտադրության զարգացման գործում որևէ տեղաշարժ էլ նկատվում էր, ապա դա միայն աշխատավորների ուժերի գերլարման և ամբողջ կայսրության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացման շնորհիվ էր:

Դա, այնուհետև, բերեց աշխատավոր գյուղացիների շահագործման ուժեղացում և վիճակի վատթարացում: Գյուղացին, ի վիճակի չլինելով կերակրելու իր ընտանիքին, չէր կարող միջոցներ գտնել իր տնտեսությունը կատարելագործելու համար: Մանավանդ, որ արտադրությունը կատարելա-

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 113, գ. 106, թ. 21

գործելու և դարգացնելու համար նա պետք է անձնական, շահագրգռվածություն և դրդիչ պատճառներ ունենար:

Իսկ հողային ռեֆորմը, ինչ տեսք էլ որ նա ընդունեց կռվկասում, կաշկանդում էր գյուղացու նախաձեռնությունը: Ինչո՞ւ էր բացատրվում այդ դրությունը:

Ամենից առաջ այդ բացատրվում էր երկրում պետական ֆեոդալական հարաբերությունների լրիվ պահպանմամբ և գյուղացիների շահագործման ուժեղացումով:

Հաշտարար դատավորների ինստիտուտ մտցնելու, հողաբաժանման աշխատանքներ անցկացնելու, կանոնադրական հրովարտական կազմելու և բազմաթիվ վեճեր ու շահերի բախումներ ծագելու հետևանքով անշափ աճեցին պարհակները և ամեն տեսակի հասարակական դանձումները: Այսպես, օրինակ, էջմիածնի գավառի Հաջիղարայի գյուղական կառավարչության ծախսերի ցուցակը ցույց է տալիս, որ նրա հասարակական ծախսերը 1909 թվականին կազմել է մոտ 3 հազար ռուբլի, այդ թվում 92 ռուբլի 55 կոպեկ հողաշինարարական աշխատանքների անցկացման, 53 ռուբլի 87 կոպեկ հողերի սահմանագծման համար, 84 ռուբլի 46 կոպեկ՝ նահանգային տպարանի հաշվին և 15 ռուբլի՝ հասարակական հավատարմատարներին¹:

Խարաբա Ագարակ գյուղում հողաշինարարական աշխատանքներ անցկացնելու և հողերը սահմանագծելու միայն մեկ տարվա ծախսերը կազմել են 402 ռուբլի²:

Երկու դեպքում էլ մենք բերում ենք միայն այն ուղղակի ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են հողային ռեֆորմի անցկացման հետ, իսկ փաստորեն այդ ծախսերը այս կամ այն չափով նստած էին ցուցակի բոլոր հոդվածներում: Այն, որ Անդրկովկասում հողաշինարարական աշխատանքների ժամանակաշրջանում, այլ կերպ ասած, կես դարի ընթացքում, գյուղացիները առավել բարձր պարհակներ էին վճարում, քան կայսրության որևէ տեղում, այդ մասին շէին կարող շխտսել նույնիսկ ցարական կառավարու-

¹ Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 102, գ. 1190, թ. 34—36:

² Տե՛ս նույն տեղը, թ. 57—64:

Յլան սլաշտոնական և ոչ սլաշտոնական ներկայացուցիչները:

«Գյուղացիների վճարած պարհակները,— ասում էր հոգային հանձնաժողովի նիստում Վ. Ա. Խարլամովը,— չէր համասպատասխանում հողի եկամտաբերութիւնը և ծանր բնու էր գյուղացիական տնտեսութիւն համար»¹:

«Ժամանակավորապես պարտավորների դրութիւնը,— ասւմ է դումայական 34 դեպուտատների նախագծում,— վատացել էր մի շարք ծանրաբեռնիչ պարհակների և վճարումների հետեանքով. դիւնվորական պարհակ, ճանապարհային պարհակ, գյուղական պարտադիր պարհակներ»²: Կովկասի սոսիալաբայի գրասենյակի վկայութեամբ, 34-ի նախագծում բերված ժամանակավորապես պարտավորների միջին բահրան նրա սահմանելու պահին 3 անգամ ավելի էր եվրոպական Ռուսաստանի ամենաբարձր բահրայից և 6—7 անգամ ավելի 50 նահանգների համար գոյութիւն ունեցող միջին բահրայից:

Պարզ բան է, որ այսպիսի ծանր պայմաններում աշխատավոր գյուղացիները ոչ միայն չէին կարող մտածել տնտեսութիւնը վատարեւազործելու մասին, այլև մեծ դժվարութեամբ էին ապահովում իրենց կիսաքաղց գոյութիւնը:

Չափազանց բարձր պարհակները, բնակչութեան աճը, նյութական անապահովութիւնը և հողասակավութիւնը իր հերթին մղում էր հողի գիշատիչ շահագործման և այդ հանդամանքը առաջ էր բերում բերքատվութեան իջեցում, որը է՛լ ավելի խորացնում էր դրութիւնը: Գյուղացին հարկադրված էր ծայրը ծայրին հասցնելու համար ամեն տարի վարել և ցանել իր խղճով հողաբաժինը: Երևանի նահանգային ատյանի նիստում, գյուղատնտեսական արդունարներութեան կարիքների կոմիտեի հրավիրած գյուղացիները միտքերան ցուցմունք էին տալիս, ձկյանքը տարեցտարի դառնում է ավելի դժվար, բոլոր առարկաները թանկանում են, հարկերը և պարհակները ավելանում, բնակչութիւնը

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 113, գ. 123, Թ. 6:

² Նույն տեղում, գ. 76, Թ. 1:

աճում է, իսկ հողից արդյունքներ ձեռք բերելը ավելի ու ավելի է դժվարանում»¹:

Նրանց կարծիքով և պատկերավոր արտահայտությամբ դժվարություններն այն էին, որ «հողը ծերացած է, վատ է ծնում»: Բայց ինչո՞ւ գյուղացին չէր կարող, ասենք, ոացիոնալ տնտեսություն վարել և միևնույն դեպքում տնտեսության շատ մթերքներ ստանալ, կհարցնի ընթերցողը: Իհարկե նա կարող էր, պատասխանում ենք մենք, բայց միայն հետևյալ երկու պայմանների առկայությամբ, եթե նա ազատ կերպով տնօրիներ իր աշխատանքը և, երկրորդ, եթե արտադրության օրյէկտը՝ հողը նրա սեփականությունը լիներ: Բայց գյուղացին Հայաստանում շունչը ոչ այդ, և ոչ մյուսը: «Մուլքադարական հարաբերությունների առկայությունը, — ասվում է նույն կոմիտեի եզրափակման մեջ, — ծառայում է տնտեսությունների այդ միջավայրում բարելավումների բացակայության գլխավոր պատճառներից մեկը, որովհետև ամեն մի բարելավում, ավելացնելով հողային արտադրանքների բանակը, դրանով իսկ ծանրացնում է փրկագնման պայմանները... և բարելավումների արդյունքները հարկ կլինեն բաժանել հողատերերի հետ, որոնք ոչինչ չեն արել արտադրանքների իրենց բաժինը բարելավելու համար: Բացի դրանից, մուլքադարական հարաբերությունները շինականներին կաշկանդում էին իրենց տնտեսական կարգադրությունների գործում: Այսպես, օրինակ. «մուլքադարները շինականներին ստիպում էին բամբակը թողնել առանց հավաքելու, մինչև որ հասունանան բոլոր կնգուղները, որովհետև մեկ անգամ հավաքելուց ավելի հեշտ է հսկել և ապա բաժանում կատարել, քան երեք անգամ հավաքելու ժամանակ... Այնուհետև շինականները ընդհանրապես իրավունք չունեին կարգադրելու իրենց աշխատանքի արդյունքները, քանի դեռ բերքից մուլքադարին հասնող բաժինը չէին առանձնացրել, թեկուզև բաժանման ուշացումից արտադրանքը փչանա»²:

Տնտեսությունը խելացի կազմակերպելու և վարելու, հո-

¹ Памятная книжка Эрив. губернии на 1904 г., стр. 7.

² Памятная книжка Эриванской губернии на 1904 г., стр. 37—38.

զը սլտրաբարացնելու, ոռոգման շրանքքներ անցկացնելու, հողը ճահիճներէց շորացնելու և այլնի մասին խոսք անգամ լինել չէր կարող նաև այն պատճառով, որ հողը գյուղացու սեփականութիւնը չէր:

Հողի մասնավոր սեփականութեան բացակայութիւնը և գյուղացու համողլած լինելը այն բանում, թե հողի ամեն մի բարեկամում կարող է միայն բարձրացնել հողաբաժնի փրկագնման գումարը, սպանում էր գյուղացու ամեն մի ձգտում, ամեն մի նախաձեռնութիւն: Գյուղացին առաջ գիտեր, որ հողատերը հասարակութեան գործերից մի կողմ էր բաշխած, ոչ մի կերպ չէր շոշափում հողային կարգերը, և հողի միակ կարգադրիչը ինքը համայնքն էր, որ համայնքը հողի յուրաքանչյուր նոր վերաբաժանման ժամանակ, հաշիւի առնելով գյուղացու գործադրած աշխատանքը, այգիները, պարտեզները, բոստանները, պարսպապատված տեղերը և այլն, թողնում էր նրա տրամադրութեան տակ, որի շնորհիվ նա դառնում էր փաստացի տերը: Իսկ այժմ, երբ ամբողջ հողը կալվածատիրոջ ու գանձարանի սեփականութեան է ձանաչվել և օրակարգի հարց է դարձել անխուսափելի փրկակազնումը, իսկ փրկագնման գումարը որոշվում է՝ ելնելով հողի եկամտաբերութեանից և պարհակների շահից, գյուղացին շահագրգռված չէր ռացիոնալ հողագործութեամբ, ավելի շուտ նա նախընտրում էր հողը ուժասպառ անել՝ նրա դիշատիչ շահագործման միջոցով: Այդ գիտեին ցարական կառավարութեան պաշտոնական և ոչ պաշտոնական բոլոր ներկայացուցիչները, այդ գիտեին նաև բոլոր նրանք, ովքեր շահագրգռված էին կապիտալիստական հարաբերութեանների արագ վարգացման մեջ: Ահա թե ինչ է գրել այդ առթիվ փոխարքա Վորոնցովը. «Անհրաժեշտ է հավաստել այն փաստը, որ երկրամասի գյուղացիական տնտեսութեանների նկատելի անկումը սերտ կապված է հողային իրավակարգի կարգավորված չլինելու հետ»¹: Վորոնցովը այնուհետև գրում է, որ «գյուղացիների կատարած պարհակների ծանրութեանը և մշակվող հողը որպէս սեփականութեան ձեռք բերելու

¹ Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 113, գ. 94, թ. 2:

համարյա լիովին անհնարին լինելու նրանց ներքին զիտակ-
ցումը, բավական է, որ երկրամասի հողագործական դասա-
կարգի մեջ մեռցնի եռանդն ու նախաձեռնությունը: Այդ
գրվել է 1910 թվականին: Նույն բանը ասված է կովկասյան
փոխարքայության նախագծում, որը 1912 թվականի դեկ-
տեմբերին ներկայացվել է Պետական դումա քննարկելու:
համար: «Կովկասյան երկրամասի բնակչության մինչև այժմ
ուշացվող հողաշինարարությունը... այդ բնակչությանը դրել
է համարյա անհիանելի պայմանների մեջ՝ ջլատելով գյուղա-
տնտեսությունը սացիոնալ վարելու գործում նրա կենդանի
նախաձեռնության ամեն մի դրսևորում և մասնավորապես,
հողօգտագործման առաջադիմական ձևերին հնարավոր ան-
ցում»:

Հայաստանի տնտեսական վարձացումը խիստ կերպով
դանդաղում էր նաև անվերջ վեճերի, հողային ռեֆորմների
հետ կապված հափշտակումների ու կամայականությունների
հետևանքով:

Մեկը մյուսին հակասող օրենսդրությունների առատու-
թյունը և պարզ չլինելը քառասյին վիճակ էին ստեղծել հո-
ղային հարաբերությունների մեջ, և դա հանգեցնում էր հնա-
րավոր ամեն տեսակ շարաշահումների, կամայականու-
թյան, բախումների ու կոնֆլիկտների:

Կալվածատերերը աշխատում էին կանոնադրական հրո-
վարտակի մեջ շմտցնել համայնքի տրամադրության տակ
գտնվող խոտհարքները, արոտատեղերը, նախրատափերը,
ճահճոտ հողերը և այլն, որ դրանով իսկ ժամանակավոր
պարտավորությունները վերացնելու դեպքում՝ մի կողմից,
իրենց տրամադրության տակ շատ հող ունենան և, մյուս
կողմից, ապահովեն գյուղացիների կախյալ վիճակը: Նրանք,
այնուհետև, ձգտում էին որքան կարելի է շատ ցույց տալ
գյուղացիներին բաժանված հողերը և դրանցից ստացած
եկամուտները, որպեսզի դրանով իսկ ապահովեն փրկա-
գնման ավելի բարձր գումար: Իսկ գյուղացիները հանդես
էին գալիս կալվածատերերի անօրինական գործողությու-

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 133, ք. 16:

ների դեմ, պահանջում էին իրենց իրավունքները պաշտպանել կալվածատերերի ոտնձգություններից: Բայց վեճեր և բնդհարումներ տեղի էին ունենում նաև հարուստ և սակավագոր գյուղացիների միջև: Օգտվելով հողային հարաբերությունների քառասյին վիճակից, գյուղական կուլակները կամայականորեն զբաղում էին անպաշտպան գյուղացիների հողերը և աշխատում էին հողային ռեֆորմի կանոնադրություններով օրինակնացնել այդ հափշտակումը:

Բերենք մի քանի փաստաթղթեր, որոնք հաստատում են այդ.

«Օրերս ստանալով... կանոնադրական հրովարտակը, մենք նկատեցինք հետևյալ անարդարությունը.—1873 թվականի օգոստոսի 8-ին իրենց դիմումի մեջ գրում են էջմիածնի գավառի Կարխուն գյուղի բնակիչները:— Այն հրովարտակը կողմնելու ժամանակ, մեր կարծիքով, կարխունցիների օգտագործման տակ գտնված վարելահողի և խոտհարքների ամբողջ գումարը ցույց էր տրված 388 խալվար, իսկ մուլբաղարներին՝ 12 խալվար: Մինչդեռ մասնավոր շափարար... կուլակովի շափումով, առանց մեր պիտույթյամբ, հրովարտակում գրված է 470 խալվար, 3 սոմար և 5 բաթման... Բացի վերոհիշյալից, պ. հաշտարար միջնորդը... գրել է, որ կարխունցիները հրաժարվում են աղի և ճահճոտ տեղերը հողաբաժնի մեջ մտցնելուց...»¹: Նշված 46 խալվարը հետագայում թողնվել է մուլբաղարի տրամադրության տակ այն պատճառաբանությամբ, որ այդ հողամասերը մինչև ռեֆորմը մուլբաղար վարձատրության էր տալիս գյուղացիներին: Մուլբաղարի օգտին վճովեց նաև աղի և ճահճոտ տեղերը:

Սկզբնապես կաղմված փաստաթղթերի կեղծման մասին վկայում է նաև էջմիածնի գավառի փոքր Շահրիար գյուղի 1911 թվականի մարտի 21-ի համախոսական դիմումը:

«Մեր ցույց տված առաջվա հողամատչանը ոչնչացվել է և նրա փոխարեն պ. հաշտարար միջնորդին ներկայացվել է ուրիշը, որի մեջ մեծ փոփոխություններ է կատարվել: Նոր

¹ Հայկական ՍՍԻ ՊԿԱ, ֆ. 102, գ. 855, թ. 35:

հողամատչանի մեջ հայտնաբերվել են հետևյալ շարաշահումները. 1. Թույլ հողատերերից մեղիատորները հողարածին են կտրել ոչ այն հողամասերը, որոնք նրանք կամովին գիջել են, այլ հակառակ նրանց ցանկության, լավ հողամասերը, որոնց վրա երկար տարիներ աշխատել են և պարարտացրել և, բացի դրանից, նրանց թողնվել է ավելի պակաս հող, քան հասնում է ընտանիքի շնչերի թվով. 2. Մեղիատորները իրենց և մյուս ազդեցիկ անձերին ավելի շատ հող են կտրել, քան հասնում է շնչերի թվով, իսկ ավելի թույլ տնտեսատերերին, ընդհակառակն, ավելի քիչ և ընդ որում ուժասպառ և գյուղից հեռու գտնվող հողամասեր»¹:

Եթախանձագին խնդրում ենք Շինարարական ասոյանին մեզ տալ Ողջաբերդ գյուղի կանոնադրական հրովարտակի պատճենը, որպեսզի իմանանք, թե՛ շինականների և թե՛ կալվածատիրոջ հողերի սահմանները, որովհետև մեր հավատարմատարներից շատ հողեր են խլված կալվածատիրոջ կողմից» (Ողջաբերդ գյուղի հավատարմատարների ասպրիլի 13-ի համախոսական դիմումից):

Գործից երևում է, որ պետական խորհրդական Կորգանովը յուրացրել է 622 դեսյատին հող:

«Մի քանի տարի առաջ մեր գյուղի հասարակութունը օգտագործման էր ավել որոշ քանակի վարելահող: Մինչդեռ ազդեցիկ և ուժեղ համագյուղացիների կողմից մենք թվով 52 ծուխ դուրս ենք մղվել ամենամահարմար հողերի վրա, ընդ որում մեկ շնչին հասնող հողից, համապատասխանաբար, օգտվում ենք կրկնակի չափով պակաս, քան նրանք: Մինչդեռ մենք նրանց հետ հավասարապես վճարում ենք պետական և հասարակական բոլոր պարհակները»², (Վերին Քյուրդամիրի բնակիչների 1912 թվականի փետրվարի 21-ի դիմումից):

Այլ կնքպ էլ չէր կարող լինել, որովհետև այսպես կոչված հողային ռեֆորմը, բառիս իսկական իմաստով, երկ-

¹ Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 91, դ. 25, թ. 5—6:

² Նույն տեղում, գ. 698, թ. 84:

³ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 91, գ. 196:

բամասում ստեղծել էր անօրինութիւն և պայմաններ հնարաւորին շափ ամեն տեսակի կամայականութեան համար։ Այդ նույն բանը արտահայտվել է Կովկասի փոխարքայութեան նույն նախագծում։

«Չի կարելի բնակչութիւնից պահանջել օրինականութիւն և ուրիշի իրավունքների հարգում այնտեղ, — ասված է այնտեղ, — որտեղ տեղական տնտեսական ամբողջ կենցաղի հիմքը՝ հողատիրութիւնը, մնում է օրենքի դրական սահմաններից դուրս, երբ բնակիչներից ոչ ոք նույնիսկ ճիշտ չգիտի իր իրավունքների ծավալը և էութիւնը՝ գյուղացու կյանքի այնպիսի առավել արժեքավոր բարիքի՝ իր կողմից մշակվող հողի նկատմամբ»¹։

Սրանք են այսպես կոչված հողային ռեֆորմի հետևանքները Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում։

Միայն սոցիալիստական ռևոլյուցիան հայկական գյուղացիութեանը ազատագրեց դարավոր ճնշումից, քաղցից և իրավազրկութիւնից և լայն ասպարեզ բացեց նրա նիրհող ուժերի համար։

6. Մի քանի հետևութիւններ

1. 1870 թվականի մայիսի 14-ի հողային ռեֆորմի օրինադրութիւնը, 1846 թվականի ցարական հրովարտակի և 1847 ու 1851 թվականների օրենսդրութիւնների տարածումն ու հետագա զարգացումն էր։

2. 1870 թվականի գյուղացիական ռեֆորմի օրինադրութիւնով ցարիզմը սահմանեց առաջ հետապնդում էր մի նպատակ, մի կողմից, կալվածատերերին դարձնել իրենց տիրապետութեան տակ գտնվող հողերի իսկական սեփականատերեր և, մյուս կողմից՝ հաշտարար միջնորդների ինստիտուտի օգնութեամբ ուժեղացնել իր քաղաքական տիրապետութիւնը։

3. Ցարիզմը շահագրգռված չէր ֆեոդալական հողատիրութիւնները արագ վերացնելու գործում, որովհետև դա կհասց-

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 113, գ. 135, թ. 13։

ներ նրա սոցիալական հենարանի վերացմանը: Անհրաժեշտ է հիշել, որ հողային հարաբերությունների պատմական յուրահատուկ զարգացման պատճառով Հայաստանի հողատերերը ընդունակ չէին շահագործման ֆեոդալական ձևից անցում կատարելու, կապիտալիստական արտադրության կազմակերպման և շահագործման կապիտալիստական ձևին: Մյուս կողմից՝ այդ նույն հարաբերությունների և ցարիզմի գաղութային քաղաքականության պատճառով, բացի հին ազնվականությունից, այստեղ գոյովյուն շուներ հողատիրական մի այլ շահագործող դասակարգ, որին հենվելով ցարիզմը կարողանար իր իշխանությունն ապահովել աշխատավոր մասսաների վրա: Այդպիսի դասակարգ միայն ծնվում էր:

4. Հողային ռեֆորմը Հայաստանում փաստորեն չիրագործվեց: Ընդհուպ մինչև սովետական իշխանության հաստատումը, գյուղացիները ստրկական կախման մեջ էին հողատերերից և առաջվա ձևով շարունակում էին կատարել պարհակներ: Մասնատիրական և արքունատիրական հողերում գյուղացիները շարժան իրենց հողաբաժինների սեփականատերեր:

5. Հողային ռեֆորմի վերաբերյալ օրինադրությունները պատճառ դարձան հողատերերի, կուլակների և այլ շահագործողների կողմից գյուղացիական հողաբաժինները և համայնքի հողերը հափշտակելու համար:

6. Անվերջ շարունակվող հողաշինարարական աշխատանքների ծանրությունը, կանոնադրական հրովարտակներ կազմելու հետ կապված ծախսերը, հարկերը և հնարավոր ամեն տեսակ տուրքերը հյուժում էին աշխատավոր գյուղացիներին, իսկ իրենց կողմից մշակվող հողերի սեփականություն իրավունքի ու ազատության բացակայությունը սպանում էր արտադրությունը կատարելագործելու նրանց ամեն տեսակի ձգտումները:

7. Գյուղացիական ռեֆորմը գյուղացուն չազատագրեց ֆեոդալական շահագործումից, շմեծացրեց նրա հողաբաժինը, շկրճատեց նրա ծախսերը և շթեթևացրեց նրա տնտեսական դրությունը: Այդ պատճառով էլ տնտեսական դար-

գացումը, հատկապես գյուղատնտեսութեան զարգացումը
ընթանում էր դանդաղորեն: Բայց դրա հետ միասին, ճոր-
տասիրական հարաբերությունները մի շարք գծերով այս-
տեղ ավելի թույլ էին արտահայտվում, քան Ռուսաստանում
և Վրաստանում, իսկ ոռոսական արդյունաբերական կապի-
տալիզմը արագորեն զարգանում էր ու իր մեջ ներառում
ծայրամասերը, այդ իսկ պատճառով նաև Հայաստանում,
հետևեֆորմյան շրջանում հող ստեղծվեց կապիտալիստա-
կան հարաբերությունների զարգացման համար:

ԳՎՈՒՂԱՅԻՈՒԹՅԱՆ ՔԱՅԲԱՅՈՒՄԸ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ
ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. Նախնական դիտողություններ

Վերջին երկու հարյուրամյակի հասարակական հարաբերությունների զարգացման պատմությունը ցույց տվեց, որ կապիտալիստական հարաբերությունները կարող են ծագել ու զարգանալ եռակի եղանակով. կամ սեփական արտադրողական ուժերի զարգացման և դրանց հետ կապված ներքին տնտեսական գործոնների հիման վրա, կամ արտաքին գործոնների ազդեցության տակ, երբ կապիտալիստական տնտեսական առավել զարգացած երկրները իրենց զարգացման հունի մեջ են քաշում տնտեսապես հետամնաց ֆեոդալական երկրները, կամ, վերջապես, արտաքին ու ներքին գործոնների համատեղ գործողության շնորհիվ:

Կապիտալիստական հարաբերությունները Հայաստանում առաջ եկան զարգացման երկրորդ ուղիով: Այդ դեպքում որպես կանոն, կապիտալիզմը չի խորտակում ֆեոդալական հին հարաբերությունները, այլ միայն թափանցում է նրանց մեջ և օգտագործում դրանք աշխատավորներին ավելի առավել շահագործելու համար:

Ջարգացած կապիտալիստական երկրները, իրենց տիրապետությունը պահպանելու համար, գաղութային երկրներ-

որում դարգացնում են միայն տնտեսութեան այն ճյուղերը, որոնք կապված են նախնական մշակման հետ՝ գյուղատնտեսութեան, հանքային և նավթարդյունաբերութեան ճյուղերը և այլն: Տնտեսական դարգացումը վերջին հաշվով այստեղ ևս պսակվում է արտադրութեան կապիտալիստական եղանակի հաղթանակով, բայց այդ ուղին ավելի երկար և տանջալից է: Կապիտալիզմի դարաշրջանի Հայաստանի հասարակական կյանքը ուսումնասիրող տնտեսագետները և պատմաբանները պատշաճ ուշադրություն չեն դարձրել այդ մոմենտի վրա: Նրանք աշխատել են հայկական իրականությունը ներկայացնել եթե ոչ ռուսական իրականության պարզ պատճեն, ապա, զոհե, շատ փման նրան:

Մենք դեմ ենք հետազոտութեան այն մեթոդին, երբ ծայրամասերի, ոչ ուս ժողովուրդների տնտեսական կյանքի դարգացումը քննարկում են բացառապես Ռուսաստանի տնտեսական կյանքի լույսի տակ: Փոխանակ այն բանի, որ բարեխղճորեն ուսումնասիրվեն տվյալ ժողովրդի տնտեսական կյանքին հատուկ երևույթները, և ապա ցույց տրվեն ռուսական կյանքի երևույթների հետ նրանց ունեցած նմանությունը և տարբերությունը, նրանք ուսումնասիրելով Ռուսաստանի հասարակական կյանքը արտացոլող երկերը, համապատասխան պատրաստի բանաձևերով ուսումնասիրում են հետամնաց ժողովուրդների կյանքը: Այսպես, օրինակ, նրանք ամեն կերպ աշխատում են այնպիսի մոմենտներ, ինչպես՝ ճորտատիրական կարգի վերացումը, հողային ռեֆորմի անցկացումը, հողաբաժանումները, գյուղատնտեսութեան կապիտալիստական վերափոխումները, ստրիպինյան ռեֆորմը, կապիտալիզմի թևակոխումը իմպերիալիզմի դարաշրջանը, քաղաքական այն հայացքները, որոնք առաջացել են այդ հիման վրա առանց բացառութեան միացնել ծայրամասային այն բոլոր երկրներին, որոնք ցարական Ռուսաստանի գաղութներն էին:

Հետադարձան նման մեթոդը ոչ միայն ոչինչ նոր բան չի կարող տալ գիտությանը, այլև աղավաղում է նշված երկրներին ժողովուրդների իսկական պատմությունը:

Մենք ելնում ենք իրերի իսկական դրությունից՝ Հայաստան

տանում: Այդ մեզ հնարավորութիւն է տալիս ոչ միայն բացահայտել և ճիշտ հասկանալ երևույթներին էութիւնը, այլև նրանց ընդհանուր և տարբերիչ կողմերը մյուս երկրների, մասնավորապես Ռուսաստանի համեմատութեամբ:

Քանի որ ֆեոդալական տնտեսակարգի քայքայումը և կապիտալիստական հարաբերութիւնների ծագումը սկսելում է գյուղացիութեան քայքայումից, ապա մենք սկզբում առավել ընդհանուր գծերով քննարկենք այն:

Քայքայում ասելով պետք է հասկանալ գյուղում բնակչութեան նոր խավերի ստեղծումը. 1) Գյուղական բուրժուազիայի կամ ունեւոր գյուղացիութեան ստեղծումը, որը ինքնուրույն տնտեսատեղ է և վարում է առևտրական հողագործութիւն, և 2) Գյուղական պրոլետարիատի ստեղծումը, որի մեջ մտնում են բոլոր նրանք, ովքեր հարկադրված են վարձու աշխատանք կատարել գյուղական բուրժուազիայի համար՝ հողագործ գյուղացիներ, բատրակներ, օրավարձներ, սևագործ-բանվորներ, շինարարական բանվորներ և այլն: Լենինը դրանց անվանում է հողաբաժին ունեցող վարձու բանվորների դասակարգ, որը կազմում է մոտավորապես գյուղացիութեան կեսը: Գյուղատնտեսութեան բնագավառի այդ երկու դասակարգը անխզելի կերպով կապված են միմյանց հետ: Հողաբաժին ունեցող վարձու բանվորների դասակարգի գոյութիւնը գյուղական բուրժուազիայի գոյութեան ու զարգացման անհրաժեշտ պայմանն է, մի բուրժուազիա, որի տնտեսութեան շահը դեպքերի մեծամասնութեամբ գերազանցում է այդ դասակարգի ներկայացուցիչների ընտանիքների անհրաժեշտ աշխատանքային ուժին:

Գյուղական բնակչութեան այդ նոր տիպերի սաղմերը երևան են գալիս աշխատավճար ռենտայից արդյունքներով ռենտային անցնելու վտարմանց: Արդյունքներով վճարվող ռենտայի դեպքում արտադրող-գյուղացին դառնում է ավելի ինքնուրույն: Նա հնարավորութիւն ունի ավելի շատ արտադրել, քան նրա պահանջմունքն է, իսկ դա նշանակում է, որ նա կարող է այդ ավելցուկը օգտագործել իր տնտեսական գործունեութիւնը ընդարձակելու և ուրիշի աշխատանքը շահագործելու համար: Կարող են արդյոք այդ սաղմերը հասց-

նել դշուղի բեռնացմանը և գյուղական բնակչութեան նոր տիպերի ստեղծմանը վերևում հիշված իմաստով: Այո, կարող են, բայց մի պայմանով, որ գյուղացին փրկագնի իր աղաստութիւնը և իր հողը, և տեղի ունենա՝ հին գյուղացիութեան սեփականադրկում: Հայաստանում բնակչութեան նոր տիպերի ստեղծման սաղմերը գոյութիւն ունեին դեռ մինչև ունեֆորմը:

Հայկական գյուղը մինչոսֆորմյան ժամանակաշրջանում տնտեսական իմաստով, երբեք միատեսակ ինչ-որ բան չի ներկայացրել: Նրա մեջ համայնքի ծածկույթի տակ ապրում էին ունևոր գյուղացիներ, միջակ գյուղացիներ, շքավորներ և նույնիսկ հող, գյուղատնտեսական գործիքներ և անասուններ չունեցող գյուղացիներ: Նրա մեջ, աճուհետև, կողք-կողքի ապրում էին արհեստավորներ, առևտրականներ և տիրապետող դասակարգի ներկայացուցիչներ: Դրա հետ միասին, աշխատանքի հասարակուկան բաժանման հետագա խորացման հիման վրա, աստիճանաբար ընդլայնվում էր նաև ապրանքա-փողային հարաբերութիւնների շրջանակները: Հայաստանում ապրանքա-փողային հարաբերութիւնները առանձնապես արագ սկսեցին զարգանալ սկսած 1840 թվականներից, երբ մեծամասնութիւն կազմող պետական գյուղացիները փոխադրվել էին փողային պարհակներին: Տընտեսական անհավասարութեան և գյուղացիութեան շերտավորման աճումը, մի կողմից, և ապրանքային արտադրութեան զարգացումը, մյուս կողմից, անխուսափելի կերպով առաջ էին բերում ապրանքային տնտեսութեանը հատուկ հակասութիւններ. մրցութիւն, տնտեսական ինքնուրույնութեան համար մղվող պայքար, ոմանց տնտեսութեան ընդարձակում, իսկ մյուսների քայքայում և ալլն: Հետևապես, մինչ-ոսֆորմյան ժամանակաշրջանի հայկական համայնքը կապիտալիստական վերափոխումների համար լիովին պատրաստի հող ունեւր:

Այդ բոլորին ավելացրած, Հայաստանում գյուղացին զամ-ված շէր կալվածատիրոջ կամ արժուանական հողին և ունեւր աղատ տեղաշարժման իրավունք:

Սակայն, շնայած այդ բոլոր պայմաններին, գյուղացիու-

թյան քայքայման սյրոցեսը շուներ այն թափն ու արդյունքը, ինչպես այդ գոյություն ունեւր ռեֆորմի ժամանակաշրջանի Ռուսաստանում: Դրու հիմնական պատճառը Հայաստանում հողային ռեֆորմի անցկացման գաղութային բնույթն էր: Գյուղացին չէր կարողանում փրկագնել իր անկախությունը և իր հողաբաժինը, և այդ հանգամանքը խիստ արգելակում էր հին գյուղացիության սեփականագրկման պրոցեսը և բնակչության նոք տիպերի գոյացումը: Գյուղացիները, այսպես կոչված, ամբողջ հողաշինարարության ժամանակաշրջանում, որը տեւց մինչև սովետական իշխանության հաստատումը, շահնդիսացան իրենց հողաբաժինները մասնավոր սեփականատերերը և կատարում էին ֆեոդալական հասարակությանը հատուկ՝ համարյա բոլոր պարհակները:

Ռուսաստանում այդ ժամանակի ընթացքում, համենայն դեպս XIX դարի 80-ական թվականներից հետո, գյուղացիները հիմնականում ազատագրվել էին ֆեոդալական կախվածությունից և դարձել էին իրենց հողերի սեփականատերերը: Այսպես, օրինակ, 1881 թվականի հունվարի 1-ին 46 նահանգներում գյուղացի սեփականատերերի քանակը արդեն կազմում էր այդ նահանգներում բնակվող գյուղացիների 84,7 տոկոսը: Հետևապես, նշված նահանգներում ամբողջ գյուղացիության միայն 13,3 տոկոսը համարվում էր ժամանակավորապես պարտավորներ: Բնորոշ է, որ գյուղացի սեփականատերի մոտավորապես 93 տոկոսը այդպիսին դարձավ կառավարության «աջակցությամբ»: Գյուղացիներին իրենց հողի սեփականատերերը դարձնելը և անձնական ազատությունը, շնայած ռուսական ինքնակալության ռեակցիոն բնույթին և հին սովորությունների առատությանը, ապահովեցին գյուղացիների արագ քայքայում և բնակչության նոր տիպերի գոյացում: Ընդհակառակն, գյուղացիների անձնական կախվածությունը կալվածատերերից, հողաշինարարական կամպանիայի ձգձգվող և ձևական բնույթը, կանոնադրական հրովարտակներ կազմելու ծայրահեղ դանդաղ պրոցեսը (Ռուսաստանում կազմվեց երկու տարվա ընթացքում, իսկ Հայաստանում 1912 թվականին, շատ գյու-

դերի համար դեռևս կազմված չէին) և նրանց ձևական բնույթը, փրկագնման գործառնությունների երկարաձգումը մինչև 1912 թվականը և կառավարության աջակցության բացակայությունը այդ գործում, գաղութային ուժեր, գյուղատնտեսական գործիքների դինանոցում փոփոխությունների համարյա լիովին բացակայությունը, բանկային վարկի բացակայությունը, իրենց տնտեսությունը կապիտալիստական ձևով վերակառուցելու կալվածատերերի շքանկանալը կամ չկարողանալը Հայաստանին դատապարտեցին տնտեսական էվոլյուցիայի տանջալից ուղի: Դրանք կասեցնում էին գյուղացիության շերտավորման արագ պրոցեսը և գյուղական բնակչության նոր տիպերի գոյացումը: «... Ուրբան ավելի շատ հող ստանային գյուղացիք ազատագրվելիս, և ուրբան էժան ստանային այն, այնքան ավելի արագ, ավելի լայն ու ավելի ազատ կընթանար կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, այսինքն ավելի բարձր կլինեք բնակչության կենսամակարդակը, այնքան ավելի լայն կլինեք ներքին շուկան, այնքան ավելի արագ կընթանար մեքենաների գործադրումն արտադրության մեջ, մի խոսքով՝ Ռուսաստանի տնտեսական զարգացումն ավելի շատ կնմանվեր Ամերիկայի տնտեսական զարգացմանը»¹: Եթե այդպես չընթացավ Ռուսաստանի զարգացումը, առավել ևս դա չէր կարող կատարվել Հայաստանում, որտեղ գյուղացին ո՛չ հող ստացավ, ո՛չ էլ ազատություն:

Հայաստանում հողային ռեֆորմը փաստորեն ավարտվեց նրանով, որ կալվածատիրական հողաբաժինը մասնակիորեն սահմանադժվեց գյուղական ընդհանուր հողաբաժնից գյուղացիների հողաբաժինները կտրելու միջոցով:

Էական որևէ փոփոխություն գյուղական բնակչության կյանքում տեղի չի ունեցել, նախկինի նման գյուղացիները կախված էին մնում հողատերերից և իրենց հողերի սեփականատեր չէին համարվում: Այդ սյատճառով էլ սխալ կլինեք խոսել Հայաստանում գյուղացիական ռեֆորմի բուրժուական բովանդակության մասին: Ավելի ճիշտ կլինեք ասել հայ-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 3, էջ 812:

կական իրականության վրա ցարական ամբողջ կայսրու-
թյան գյուղացիական ռեֆորմի ազդեցության մասին, մի ռե-
ֆորմ, որը, անկասկած, բուրժուական բովանդակություն
ունի: Դա կլինի է՛լ ավելի ճիշտ և կնշանակի, որ գյու-
ղացիական ռեֆորմը Ռուսաստանում հանգեցրեց կապիտա-
լիստական արտադրողական ուժերի արագ աճման, իսկ այդ
հանգամանքն իր հերթին կապիտալիստական զարգացման
հունի մեջ էր քաշում նաև Հայաստանին:

Այժմ քննարկենք, թե իրականում ինչպես էր տեղի ունե-
նում գյուղացիության քայքայումը և կապիտալիզմի ձևավո-
րումը Հայաստանում:

2. Հողի, ջրի և արտավայրերի համայնական օգտագործման ձևերի փայլալուս

ա) Հողի վերաբաժանման կարգի խախտում

Գուլքային անհավասարությունը գյուղատնտեսության
կապիտալիստական վերափոխումների ամբողջ պրոցեսի ելա-
կետն է: Այդ անհավասարությունը, ինչպես նշել ենք, Հա-
յաստանում գոյություն ունի նաև մինչև ռեֆորմյան շրջանում
և հիմնականում արդյունք էր այն բանի, որ երկրում գոյու-
թյուն ունեցող սովորությունների համաձայն գյուղացին կա-
րող էր ազատորեն օտարել հողի օգտագործման իր իրա-
վունքն ուրիշին. բացի դրանից, նա կարող էր իր աշխա-
տանքով քարերից կամ թփուտներից մաքրել այս կամ այն
չզբաղեցրած հողամասը, այն պարսպապատել, ծառեր տըն-
կել և օգտագործել: Վերջապես այդ անհավասարությունը
ստեղծվում էր շնորհիվ գյուղում բնակվող ընտանիքների
բաժանման ու կազմի փոփոխման, հողի ավելի ինտենսիվ
օգտագործման, անասնապահության զարգացման և այլ
գործոնների հետևանքով: Սակայն գուլքային անհավասա-
րությունը, նախ, նատուրալ բնույթ ունի և այդ պատճառով
էլ դեմ էր առնում ընտանիքի սպառունակության շրջանակ-
ների, երկրորդ, համայնքի կարգավորիչ դերը, հողի պար-
բերական վերաբաժանումը և ֆեոդալական հողատիրությունը

անհնար էին դարձնում հողերի կենտրոնացումը ունեորների ձեռքում: Հետոնֆորմյան ժամանակաշրջանում հողի օգտագործման համայնական սկզբունքը խախտվեց, իսկ արտագրանքի մեծացման սպառունակման կեղևը պատուվեց ապրանքափողային հարաբերությունների զարգացման շնորհիվ:

Գյուղացիական ունեորների անցկացման հետ կապված կանոնադրական հրովարտականների կազմումը մասնատիրական գյուղերում խրեց հողօգտագործման համայնական սկզբունքի խախտման առաջին սեպը: Նա մերթ ամրացրեց գյուղացիներին այն հողաբաժինները, որպիսիք նրանք փաստորեն օգտագործում էին, առանց հաշվի առնելու նրանում կատարած փոփոխությունները վերջին հողաբաժանումից հետո, մերթ լավագույն հողերը տրամադրում էր ունեորներին, մերթ կատարում էր ցանկացած մարդկանց հավելագրում և այլն: Այդ հանգամանքը հիմք դարձավ ավելի ինտենսիվ կերպով հողերը կենտրոնացնելու ուժեղների ձեռքում այն գյուղերում, որտեղ դեռ չէին կազմվել կանոնադրական հրովարտականները և որտեղ սպասվում էր (արժեքնապատկան գյուղերում) ունեորների անցկացումը: Այդ պրոցեսին նպաստեց հատկապես երկրամասում հնոց տիրող հողի օգտագործման իրավունքի օտարացման սովորությունը և այն հանգամանքը, որ խախտվեց հողի պարբերական վերաբաժանման կարգը:

Հողատիրության համայնական սիստեմը և հողի պարբերական վերաբաժանումը Հայաստանում շարունակվում էր գոյություն ունենալ նաև հետոնֆորմյան դարաշրջանում: Մեր տրամադրության տակ եղած բարձրագույն փաստերը ապացուցում են, որ հողի վերաբաժանումները Հայաստանում որոշ գյուղերում տեղի են ունեցել ընդհուպ մինչև 1914 թվականը: Այսպես, օրինակ, Նոր Բայազետի գավառի վերին Ադիաման գյուղում համայնական հողերի վերջին վերաբաժանումը կատարվել է 1911 թվականին¹: Նույն թվականին հողի վերաբաժանում է կատարվել Ալեքսանդրապոլի գավառի Բայանդուր գյուղում: Ինչպես երևում է հաշտարար

¹ Տե՛ս Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 56, գ. Թ. 23:

միջնորդների հաշվետվութուններին, հողերի վերաբաժանմանը վերաբերող գործերի քանակը Երևանի նահանգում հասնում էր. 1908 թվականին՝ մինչև 31-ի, 1909-ին՝ մինչև 61 և 1910 թվականին՝ 60 գործի: Սակայն հետոեֆորմյան ժամանակաշրջանում գյուղի զոռքաների ճնշման տակ մի կողմից, անընդհատ ձգձգվում էր հողերի հերթական վերաբաժանումը, իսկ կալվածատիրական գյուղերում այն դադարել էր, և մյուս կողմից, վերաբաժանումների միջև ընկած ժամանակամիջոցում գյուղացիների հողաբաժինները շատ բանով փոփոխվել էին:

Հետոեֆորմյան ժամանակաշրջանում վերաբաժանումները յուրաքանչյուր համայնքի ներսում՝ ունևոր և շունևոր գյուղացիների միջև ուղեկցվում էին սուր հակասութուններով: Վերաբաժանման դեմ հանդես էին գալիս գյուղական համայնքի հարստացած անդամները, որոնք երկար ժամանակի ընթացքում կարողացել էին տարբեր եղանակներով տիրել ուրիշների հողաբաժիններին և յուրացնել մեռածների հողերը: Բերենք հետևյալ համոզիչ փաստաթղթերը.

«Բոլոր շինականները պետք է իրենց ընտանիքի՝ շնչերի թվով տիրապետեն հավասար քանակի, բայց մեր՝ Շարիֆ-Աբաս գյուղում չկա այդ հավասարութունը: Դրա պատճառն այն հանգամանքն է, որ արդեն 16 տարի է, ինչ այդ գյուղում հողի վերաբաժանում չի կատարվել, որ հարուստ անձինք այդ ամենաերկար ժամանակի ընթացքում կարողացել են տիրել մեծ քանակի հողերի՝ ոչինչ չթողնելով չքավորներին: Օրինակ՝ կան ընտանիքներ, որոնք բաղկացած են 3—4 շնչից, բայց ունեն 10—12 շնչի հող, կան նաև ընտանիքներ, որ բաղկացած են 8—10 շնչից, բայց ունեն 2—3 շնչի հող: Նկատի ունենալով այսպիսի վիճակը, գյուղացիների չքավոր բնակչութունը սովահար է լինում, իսկ բնակչության հարուստ դասակարգը՝ հողթանակում» (էջմիսածնի գավառի Շարիֆ-Աբաս գյուղի բնակիչների դիմումից, 1911 թ.):

«Մեր գյուղը արքունական է, ավելի քան 10 տարի է,

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 91, գ. 87, ք. 15:

որ հասարակութիւնը չի կատարել հասարակական հողի վերաբաժանում... այդ պատճառով մենք դիմեցինք հաշտարար միջնորդին... և վերաբաժանման ցանկութիւն հայտնեցինք... 98 ծխից 72 տնատիրոջ թույլ տվեցին ժողովին մասնակցելու, իսկ 26-ին գյուղի քոխավայի օգնական Քելբալայ Իսմայիլ մամիդ Ալլահվերդի օղլին թույլ շտվեց, վերջինս այդ արեց իր շահից ելնելով, որովհետև նա դեմ է վերաբաժանմանը, իր օգտագործման տակ ունի շատ հող, որի հիման վրա վերաբաժանման ժողովը տեղի չունեցավ:

10 տարվա ընթացքում մեր ազդեցիկ համագյուղացիները շնչին գնով իրենց համագյուղացիներէրէց հողաբաժինները գնեցին սեփականութեան իրավունքով...» (էջմիածնի գավառի Քելանի-Արալիս գյուղի բնակիչների դիմումից, 1911 թ.)¹:

Այնուհետև նրանք թվարկում են 8 ազդեցիկ ծխեր, որոնք գնել են այդ հողաբաժինները և դրանց ծախող անձանց: Դիմումի վերջում նրանք գրում են. «Կան նաև այնպիսիները, որոնք վճռապես հող չունեն, դրանք են՝ Հումբաթ Հաջի Զաֆար օղլի՝ 5 շունչ, Իրզա Քելբալայ Բաբա օղլի՝ 3 շունչ, Ղուբբան Մամիդ Հուսեին օղլի՝ 4, Մամիդ Նաջաֆ կուլի Իսմայիլ օղլի՝ 6 շունչ և այլն:

Մեռած 15 ծխի հողերը հասարակութեան տրամադրութեան տակ շին գտնվում... այլ հափշտակել են ազդեցիկ անձերը, որոնք և խոչընդոտում են վերաբաժանմանը»:

«Վերաբաժանման դեմ հանդես են գալիս նրանք, ովքեր տիրում են մեծ քանակով հողերի, և լավ հողերի» (Շարուր-Դարալագյաղի գավառի Ելիֆն գյուղի բնակիչների դիմումից, 1912 թ.)²:

Այդ վիճակը շին բացասում նաև ցարական պաշտոնյաները: Այս տեսակետից բնորոշ է էջմիածնի գավառի հաշտարար միջնորդի հաղորդումը Ռանչպար գյուղի հողերի վերաբաժանման հակառակորդների բողոքի առթիվ: Ձեռքբերվողները, ասվում է այնտեղ, մեծ քանակի հողատերեր

¹ Հայկական, ՍՍԻ, ՊԿԱ, գ. 16, ը. 4:

² Հայկական. ՍՍԻ, ՊԿԱ, ֆ. 91, գ. 38, թ. 97:

են, հողերի վերաբաժանումը նրանց համար ձեռնտու չէ, որի պատճառով հարց են հարուցում վճիռը վերացնելու մասին»¹:

Այսպիսով, ռեֆորմի ժամանակաշրջանում համայնքը չէր կարողանում հողագործներին պաշտպանել պրոլետարացումից: Համայնքներում կատարվում էր գյուղացիների դասակարգային շերտավորում, որի հետևանքով մի բևեռում ավելի ու ավելի էր ավելանում հարստությունը, մյուսում՝ աճում էր աղքատությունը: Ունևոր դասակարգը, ինչպես երևում է բերված փաստաթղթերից, իր ձեռքն էր հավաքել համայնքի լավագույն հողերը և սակավազոր անդամների հողաբաժինները և, այսպիսով, ընդլայնելով իր շահագործող գործունեության ոլորտը, բոլոր միջոցները կիրառում էր, որ վերաբաժանումներ տեղի չունենային: Իսկ այն դեպքում, երբ մեծամասնության համառության ու կազմակերպվածության շնորհիվ հաջողվում էր ժողովում շահել պայքարը և վերաբաժանում իրագործել, հարուստները կաշառում էին հողաշահմաներին, իշխանության ներկայացուցիչներին և մի շարք այլ միջոցներով ձեռք էին բերում լավագույն հողեր:

Ահա թե ինչ է ասված Ալեքսանդրապոլի գավառի Բալանդուր գյուղի բնակիչների 1911 թվականի մայիսի 20-ի դիմումի մեջ. «Ընթացիկ տարվա հունվար ամսին մեր գյուղում կատարվեց հասարակական հողերի վերաբաժանում... Հողերի վերաբաժանման ժամանակ թույլ տրվեց մեծ քանակի շարաշահումներ, այն է՝ լավագույն հողերը չքավորներից խլեցին և վատ հողերի անվան տակ տվեցին ունևորներին, իսկ հարուստների վատ հողերը տվեցին չքավորներին որպես լավագույն հողեր, թաքցրել են 85 կոտ հող և շատ այլ շարաշահումներ, որոնք հայտնի են հաշտարար միջնորդին»²:

Այդ նույն բանի մասին խոսում են նաև էջմիածնի գավառի Փոքր Շահրիար գյուղի բնակիչները իրենց դիմումի

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 91, գ. 87, թ. 15

² Նույն տեղում, գ. 11, թ. 10:

մեջ. «Մեզ ցույց տված առաջվա հողամատյանը ոչնչացված է (մեղիատորների կողմից — Մ. Ե.) և դրա փոխարեն հաշտարար միջնորդին ներկայացվել է ուրիշը, որի մեջ կատարել են մեծ փոփոխություններ. 1. որոշ ավելի ազդեցիկ անձանց հողամասեր է տրվել, որոնք ղիշել են իրենք՝ հողի տերերը, ընտանիքի շնչերի թվին հասնող քանակից ավելորդ թողնվել է մի քանի հողամասեր. 2. ավելի թույլ հողատերերից մեղիատորները կտրել են ոչ թե այն հողամասերը, որոնք նրանք կամովին ղիշել են, այլ հակառակ նրանց ցանկությանը, լավագույն հողամասերը, որոնց վրա շատ տարիների ընթացքում աշխատել և պարարտացրել են և, բացի դրանից, նրանց ավելի քիչ հող է թողնված, քան հասնում է ընտանիքի անդամների թվով. 3. մեղիատորները իրենց և մյուս ազդեցիկ անձանց համար ավելի հող են կտրել-վերցրել, իսկ թույլ տնտեսատերերին, ընդհակառակը, քիչ հող, ընդ որում ուժասպառ և գյուղից հեռու ընկած հողամասեր»¹:

բ) Զրատիրման համայնական սկզբունքի խախտում

Հետևեֆորմյան ժամանակաշրջանում ջրային կառավարչության հաստիքը ավելի մեծացավ և այն պահպանելու ծախսերը անշափ ավելացան: Այդ բոլոր անձինք պահվում էին շինականների հաշվին: Զրային կառավարչության միջնորդների, պահակների և այլ անձանց աշխատավարձը գյուղական բնակչութունից գանձելու համար յուրաքանչյուր օկրուգի բոլոր գյուղերը բաժանվում էին 3 կատեգորիայի: Առաջին կատեգորիայի մեջ մտնում էին այն գյուղերը, որոնք ունեին գարնանացան և ջրից օգտվում էին միայն 2 ամիս, երկրորդ կատեգորիայի մեջ մտնում էին այն գյուղերը, որոնք ունեին աշնանացան ցանքեր և ջրից օգտվում էին 4 ամիս և երրորդ կատեգորիայի մեջ մտնում էին այն գյուղերը, որոնք ունեին խառն տնտեսություն և ջրից օգ-

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 91, գ. 25, թ. 5—6:

տըվում էին 6 ամիս ժամանակով: Միասերը բաժանվում էին ինչպես գյուղերի, այնպես էլ շինականների միջև ոռոգելի հողի համեմատ: Միրաբի և ջրային կառավարչության խորհրդի անդամների օգտին գանձվում էր առաջին կատեգորիայի մի բահ ջրի համար՝ 4 ուրլի 26 կոպեկ, երկրորդ կատեգորիայից՝ 8 ուրլի 51 կոպեկ և երրորդ կատեգորիայից՝ 12 ուրլի 79 կոպեկ:

Ջուվարներին և ջրպետներին պահպանելու ծախսերը անմիջականորեն կրում էին գյուղացիները իրենց բաժին ջրի և ջրովի տարածություն համեմատ, ըստ որում եթե առաջ (պարսկական տիրապետության ժամանակ), ջուվարները ստանում էին ջուվարահախը (ջուվարի աշխատանքի վարձատրություն) բնամթերքով, թպա ջրակառավարման վերակառուցումից հետո, ջուվարների, ինչպես նաև ջրպետներին ու այլ անձանց աշխատավարձը գանձվում է բացառապես փողով:

Միրաբները և ջուվարները ինչպես պարսկական, այնպես էլ ուսական կառավարման ժամանակ ստացած աշխատավարձով չէին բավարարվում, նրանք սխտեմատիկորեն զբաղվում էին կաշառակերությունով և ջուրը կարգադրելու իրենց իրավունքների շարաշահման միջոցով, ամեն կերպ շահագործում էին գյուղացիներին: «Նա, գրում է Ս. Նիխազարովը միրաբի մասին, նա առևտուր է անում (ջրով — Մ. Ն.) և օգտագործում է ամենաբազմազան հակաօրինական նպատակների համար. մերթ ամիլորդ ջուր է տալիս իր համախոհներին, որոնք նրա թեկնածությունը պաշտպանում են ընտրությունների ժամանակ, մերթ բաժին է հանում այլ աշխարհի ուժեղներին, որ նրանց բարի դարձնի և «աղմկարարների» բերանները փակի, մերթ օգտագործում է իր սեփական ցանքերը ոռոգելու համար, որ ձեռք է բերել զանազան համայնքներում: Բայց ինչպես է, որ միրաբը ցանքսեր ունի տարբեր համայնքներում: Ահա թե բանը ինչու է նահանգի սակավաջուր շրջաններում գյուղացիները սիրով համաձայնում էին իրենց սեփական հողաբաժինները ոչ լրիվ հիմքով մշակել ամեն մեկի հետ, ով իր վրա վերցնի միայն ամառային ոռոգումը: Իսկ քանի որ ամեն մի մահալի ջուրը

զանվում է միրաբի կարգադրութեան տակ, ապա գյուղացի-
ները դիմում են նրան նման տեսակի առաջարկութեամբ:
Արդունքը լինում է այն, որ միրաբը որոշ համայնքներում
ունի բոստան ոչ լրիվ հիմունքով, մյուս համայնքներում
բամբակի պլանտացիաներ, երրորդում՝ բրնձի պլանտացիա-
ներ և այլն»¹:

Չարաշահումների մասին խոսում է նաև Արտաշատ գյու-
ղի բնակիչ Մկրտիչ Օրդուլանի դիմումը. «Արտաշատ գյու-
ղի ջուլարներ, դրում է նա, Մկրտիչ Գրիգորյանը և Դավիթ
Դավթյանը, որոնք թշնամաբար են տրամադրված իմ դեմ,
հնարավորութուն չեն տալիս ազատ կերպով օգտագործե-
լու իմ ջրի հերթը՝ երեք հերթի ընթացքում, այսինքն բաց չեն
թողել ինձ հասնող ջրի քանակը... Ջուրը նրանք բաց են
թողնում իրենց հարազատներին, այնպես որ միանգամայն
զազարել են օրվա ընթացքում բաց թողնել ինձ հասանելիք
ջուրը»²:

Միրաբների, ջուլարների և ջրային վարչութեան մյուս
անձների անօրին գործողութունների հետևանքով ջրատիր-
ման համայնական հիմունքը և ջրի բաշխման դեմոկրատա-
կան կարգը աստիճանաբար քայքայվում է և ջուրը նույնպես
վերածում է շահագործման օբյեկտի: Ջրի բաշխումը քայ-
քայելու համայնական այդ հիմունքի և այն շահագործման
օբյեկտ դարձնելու գործին նպաստում էին մի կողմից տըն-
տեսական անհավասարութեան աճումը համայնքի ներսում
և, մյուս կողմից, ջրի պակաս լինելը՝ բնակչության աճի,
սոսոկելի տարածութունները ընդարձակելու և տեխնիկական
ու բոստանա-բանջարանոցային կուլտուրաների զարգացման
հետևանքով:

«...ժողովի սահմանած կարգը (ջրի բաշխման, Մ. Ե.)
խախտվում է ուժեղների ու հարուստների կողմից, որոնց
բոլոր ցանքերը միշտ ծաղկուն վիճակում են: Այդ շարիքի
դեմ պայքարելը դժվար է» — գրում է ջրաբաշխ ինժեներ Ա.
Մանուչարովը³:

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 57, գ. 184, Թ. 7—8:

² Նույն տեղում, ֆ. 134, գ. 279, Թ. 25:

³ Նույն տեղում, ֆ. 91, գ. 134, Թ. 7:

Այդ հողի վրա էլ սուր դասակարգային պայքար ծավալվեց ունևորների և շունևորների միջև, ինչպես ամեն մի համայնքի ներսում, այնպես էլ յուրաքանչյուր ջրային օկրուզի մասշտաբով: Այդ պայքարում ջրատիրման համայնական սկզբունքը միակ հենարանն էր մեծամասնության, այսինքն շունևորների համար, բայց այդ հենարանը շէր կարող կանգնել զարգացող կապիտալիզմի տնտեսական աճող ուժերի գեմ և աստիճանաբար կորցնում էր իր ուժը:

գ) Համայնական արոտավայրերի վերածումը մասնավոր շահագործման օբյեկտի

Մինչև XIX հարյուրամյակի 80-ական թվականները ձմեռային և ամառային արոտավայրերը գանձարանը տալիս էր օգտագործելու ոչ թե առանձին անձանց, այլ առանձին համայնքների: Յուրաքանչյուր համայնք անբաժան կերպով տիրում էր ինչպես սեփական, այնպես էլ ձեռքբերովի արոտավայրերին: Համայնքը այդ արոտավայրերը երբեք չէր բաժանում նույնիսկ անասնատերերին: Սակայն նա սահմանում էր նրանց օգտագործման կարգը: Նրա մի քանի բնորոշ գծերը պահպանվել էին և հետագայում, կապիտալիզմի դարաշրջանում: Այդ մասին վկայում է Ալեքսանդրապոլի գավառի Կըզլ-Օրան գյուղի համայնքի 1910 թվականի հոկտեմբերի 11-ի հետևյալ որոշումը: Ժողովը սահմանեց հասարակական արոտավայրերը օգտագործելու հետևյալ կարգ. 1. Արոտավայրերում պետք է ոչնչացվեն ղորուխները (այսինքն՝ այն տեղերը, որոնք առանձնացվել են առանձին անձանց՝ խոտհարքի համար—Մ. Ե.), և ամբողջ արոտավայրը ամեն ժամանակ պետք է մատչելի լինի կըզլ-օրանցիներին յուրաքանչյուրի անասունների օգտագործման համար, 2. բոլոր անասնատերերը յուրաքանչյուր տարվա մայիսի 5-ին պետք է քոչեն միաժամանակ «Ախ-Սու» վայրը, 3. բոլոր անասնատերերը պետք է միաժամանակ ետ վերադառնան, բայց բոլոր ցանքերի բերքահավաքից ոչ շուտ. 4. մանր անասնապահները (մինչև 3 կով) կարող են քոչից

շուտ վերադառնալ, բայց յուրաքանչյուր անգամ ունենալով այդ մասին հասարակութեան թուլլտվութիւնը»¹։

Յերենք նաև նույն գավառի Արթիկ գյուղի 1913 թվականի փետրվարի համայնական ժողովի որոշումից քաղվածքներ. «Ընդունել հետևյալ միջոցառումները. 1. գարնա սկզբից մինչև նոյեմբերի 1-ը ամենևին թուլլ շտալ ինչպես մեր հողարածիխների սահմանում, այնպես էլ մեր հասարակութեանը հատկացված պետական արոտավայրերի սահմաններում այն տնտեսատերերին՝ ոչխարներ, այծեր արածացնելու, որոնք ունեն եղջերավոր անասուններ 3—4 անգամից ավելի, քան մեր մյուս անդամներին, որոնք շունեն ոչխարներ և գառներ: 2. Ամբողջ խոշոր եղջերավոր անասունը հունիսի սկզբի օրերից պետք է արածացվի քոչատեղում, ցանքերից դուրս, եզները հատուկ նախիրներով, յուրաքանչյուր նախիր պետք է լինի ոչ պակաս հարյուր գլխից, իսկ կովերը, ձիերը ստերջները, գոմեշները, ինչպես նաև հորթերը, դոմշաձագերը, էշերը, պետք է արածացվեն առանձին. 3. Թուլլ տալ առանձին արածացնելու եզներին միայն դաշտային աշխատանքների ժամանակ, այսինքն՝ արոտի տանելու սկզբից մինչև հացահատիկի բերքահավաքի ավարտվելը»²։

Այդ միջոցառումները գլխավորապես ընդունվել են ցանքերը տրորելուց պահպանելու համար, բայց դրանք վկայում են ինչպես իրենց, այնպես էլ վարձակալված արոտավայրերը անբաժան տիրելու մասին: Համայնքի բոլոր անդամները անբաժան կերպով օգտագործում էին նաև խոտհարքային հողամասերը, ջրատեղիները, անասնատեղերը և ճահիճները:

Խոտհարքի տեղամասերը կամ հարում էին միատեղ և խոտը համեմատական կերպով բաժանում ծախսված աշխատանքի վրա, կամ ամեն տարի բաժանում էին կարիք ունեցող անասնատերերի միջև:

Սակայն, հետոնֆորմյան ժամանակաշրջանում ձմեռային

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 91, գ. 379, թ. 5:

² Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 91, գ. 309, թ. 2:

և ամառային արոտավայրերը օգտագործում էին գլխավորապես հասարակութայն ոճնեղ անդամները, որոնք խոշոր անասնատերեր էին: 1885 թվականին արոտավայրերի տեղամասերը ցարական պաշտոնյաների կողմից ստուգելու ժամանակ պարզվեց, որ Ալագյազի շրջանի կերբուլախ տեղամասը գտնվում է Օբա-Քաշի Ղասում Աղա Մահմուդ Աղա օղլու և նրա 13 հարևանների ձեռքում: Աղմազյանի շրջանի Գել-յուրտ տեղամասը՝ Օբա-Քաշի Մաշադի Քյալբազի Յուսուպ օղլու և նրա 14 հարևանների ձեռքում: Այրիջայի շրջանի Կարագյուլ տեղամասը՝ Օբաքաշի Քյալբազի Արդուլա Մամեդ Շահվերդիի և նրա 28 հարևանների ձեռքում:

Օբա-քաշին արոտավայրի տնտեսությունը ղեկավարում էր ինքնուրույն կերպով. վարձում էր հովիվներ և պահակներ, հաշվում էր արոտավայրի համար տրվող վարձը և հարևաններից գանձում էր նրանց յուրաքանչյուրին բաժին ընկնող ծախսերը, իր հարևաններին կարգադրում էր ինչպես ինքն էր ցանկանում, սրան կամ նրան հեռացնում էր տեղամասից և դաժան կերպով շահագործում նրանց: Բնակչութայն միջև տվյալ ժամանակում նրա իրական կարիքների համապատասխան արոտավայրերը բաշխելու սկզբունքը մտցնելով և արոտավայրերը օգտագործելու համար հերթական վարձատրություն սահմանելով, Օբա-քաշիի ինստիտուտը օրինականացվեց: Օգտվելով այդ որոշումից (1884 թվական) Օբա-քաշիները ամենից առաջ սկսեցին լայն շափերով վերավաճառել իրենց տրամադրության տակ գտնվող արոտային հողատարածությունները և իրենցից կախման մեջ դնել գյուղի աչք բնակիչներին, որոնք դուրս էին մնացել վաղուց արդեն կազմավորված խմբերից: «Զի կարելի լուծյան մասնել, որ արոտավայրի տեղամասին գրանցված մի քանի կամ նույնիսկ մի քանի տասնյակ ծխերին կարգադրում է մեկ անձնավորություն: Այսպես, օրինակ, Մուստաֆա Աղա Ռուստամ օղլու և նրա 73 հարևաններին ցույց է տրված 2706 դեսյատին արոտավայր 83 ուրբլի 75 կոպեկ վարձատրությամբ: Այդ նույն արոտավայրը տնօրինում է մեկ անձնավորություն, որը, այն մաս-մաս վաճառելով տարբեր

մարդկանց և հասարակություններին, ստանում է 5—7 հազար ուրբլի...»¹: (Շրջանի հատուկ հանձնարարությունների աստիճանավորի ժամանակավոր պաշտոնակատարի զեկուցումից): «Արոտավայրերի ամրացումը որոշակի խմբերին տվյալ գյուղի կամ ձմեռանոցի մյուս բնակիչներին զրկել է ինքնուրույն անասնապահներ դառնալու հնարավորությունից և նրանց տնտեսական ծանր կախման մեջ է դրել Օբա-Քաշու այն բախտավորներից, որոնց անունները պատահաբար գրքված են հետազոտվող արոտավայրերի ցուցակում» (Երևանի գավառի I բաժնի հաշտարար միջնորդի զեկուլցից)²:

Երկիրը զարգացման կապիտալիստական ուղի թևակոխելու համեմատ արոտավայրերը, առանձնապես ձմեռային արոտավայրերը (ոչխարանոցները), փաստորեն դարձան կուլակների և անասնաարդյունաբերողների տիրույթ:

Ալեքսանդրապոլի գավառի Կիզիլ-Օրան գյուղի բնակիչների 1913 թվականի մարտի 27-ի դիմումի մեջ ասվում է. «Մեր համագյուղացի Մաշադի Աբդուլլա Սադիխ օղլին իր տղաների՝ Բալաբեգ և Սադիխ Աբդուլլա օղլիի և հարազատների հետ ոճենալով 500 գլուխ խոյ, 500 գուխ ոչխար, 20 ձի, 100 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, 200 հորթ և 20 էջ, միանգամայն խոշոր անասնաարդյունաբերող է, որը անասունները պահում է բացառապես առևտուր անելու համար... Եվ իսկապես, այդ անձինք ոչ միայն հափշտակել են մեր ամբողջ արոտավայրերը, այլև իրենց անասունը հաճախ ուղղակի արածացնում են մեր վարելահողում»³:

«Ոչխարանոցները ջոկում էին այն գյուղացիները, որոնք ավելի շատ խոյեր ունեին, քան իրենց մյուս համագյուղացիները»⁴, գրում է իր զեկուլցի մեջ 1873 թվականին Շարուր-Պարալագչազի գավառապետը:

Մասնավոր անասնապահների ձեռքում արոտավայրերի

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 133, գ. 2308, թ. 37.

² Յարիզմի ագրարային քաղաքականութունը և գյուղացիական շարժումը Հայաստանում XX դարի սկզբում, էջ 163:

³ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 91, գ. 379, թ. 3.

⁴ Նույն տեղը, ֆ. 133, գ. 1347:

կենտրոնացման պրոցեսին նպաստեց ցարական կառավարության 1884 թվականի հունիսի 29-ի օրենքը, որը արոտավայրերը տալիս էր ինչպես գյուղացիներին, այնպես էլ արտոնյալ անձանց սերնդե-սերունդ օգտագործելու՝ յուրաքանչյուր դեսյատինի համար տրվող վարձը գանձարան մուծելու պայմանով: Այդ օրենքի շնորհիվ համայնքների միջև (ընդհանուր նշանակության) ձմեռային և ամառային արոտավայրերի հետ գոյացան նաև բաժանման ենթակա արոտավայրեր: Դրա հիման վրա համայնքի ամեն մի մասնակից իրավունք ստացավ համայնքից դուրս, ինքնուրույն կամ համայնքի մյուս անդամների հետ, վարձակալման սկզբունքներով պետական արոտավայրերը վերցնել իբրև հողաբաժին, իսկ հետագայում դրանք դարձնել նաև իր մասնավոր սեփականություն: Բացի դրանից, պետական արոտավայրերը կապիտալիստական գործարարների կողմից դարձան առևտրի և շահագործման օբյեկտ: Ահա թե ինչ է գրում հատուկ հանձնարարությունների աստիճանավոր ժորժելաձեն այդ առթիվ.

«Դեսյատինի սահմանված վարձը շատ ավելի ցածր էր նման հողերի գոյությունն ունեցող վարձակալական վճարից: Խիստ հաճախ էին այն դեպքերը, երբ դեսյատինի սահմանված վարձը 20 կոպեկ էր, իսկ այդ հողերի համար վարձակալման վճարը հավասար էր 2 և 3 ռուբլու»¹: Այնուհետև հեղինակը ասում է, որ նման դրությունը անխուսափելի կերպով պետական արոտավայրերը վեր է ածում լայն առևտրի օբյեկտի: Պետական գույքի Երևան-Կարսի կառավարչության 1899 թվականի հոմեվարի 9-ի ղեկուցագրից երևում է, որ 36000 դեսյատին տարածությունը ձմեռային արոտավայրերի 35 տեղամասերի համարյա 25 տոկոսը ինքնակամ հափշտակված էր: «Պետական ձմեռային արոտավայրերի օգտագործման մեջ,— ասում է Զոլոտարյովը,— ոչ մի կարգ չկա, յուրաքանչյուր քաղաքի ու ճանապարհի հափշտակում և ուժեղի իրավունք գոյություն ունի:

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 133, գ. 2308:

Պետական հողերի և բահրային հողվածների վերակա-
ցունների 1907 թվականի հունիսին կայացած համագումարում
պարզվեց, որ Ալագյազի շրջանում արոտավայրերի 273 տե-
ղամասից միայն 53-ը գտնվում էին գյուղական համայնք-
ների տրամադրության տակ, մնացած 220 տեղամասը
առանձին անձանց և խմբերի ձեռքումն էր: Վարձակալական
հիմունքներով պետական հողեր ձեռք բերելով, ունեորների
առանձին խմբերը դրանք վաճառում էին գյուղացիներին 5—
10 անգամ թանկ, քան վարձակալման գներն էին: Այսպես,
օրինակ, ինչպես երևում է նույն համագումարում տրված դե-
կուցումից, նոր Բայազետի շրջանի «Աղակայա» արոտավայրը
վարձակալ նավթալի Ալի օղլին 1904 թվականին վերավա-
ճառեց պետական գնից 10 անգամ թանկ, իսկ Ալա-
գյազի շրջանի «Կարա-Բուլաղ» արոտավայրը՝ 5,5 անգամ
թանկ:

Որքան ավելի աճում էր անասունների դիտաքանակը,
այնքան ավելի մեծանում էր բնակչության արոտավայրեր
ձեռք բերելու պահանջը և այդ հասցնում էր նրանց գներն
անշեղորեն բարձրացնելուն: Այդ էլ հենց օգտագործում էին
Օրա-բաշիները: Նրանք, ինչպես մենք, նշել ենք, սկսեցին
լայն շափերով վերավաճառել իրենց տրամադրության տակ
գտնվող արոտավայրերը:

Նույն Զոլոտարյովը մեկ ուրիշ տեղ գրում է, որ քրդական
անասնաարդյունաբերողների ղեկավարները օգտվելով այն
բանից, որ արոտավայրերը վերցնում էին նրանք գանձարա-
նից, իրենց համարում էին նրանց փաստացի տերերը
և շահավետ գնով տալիս էին կարիքավորներին օգտագոր-
ծելու:

Այսպիսով, Հայաստանում կապիտալիստական հարաբե-
րությունների զարգացման զուգընթաց համայնական հի-
մունքները արոտային տնտեսության ընագավառում ևս ըս-
կըսեցին քայքայվել: 1884 թվականի օրենքը անհրաժեշտ է
դիտել որպես այդ հարաբերությունների զարգացման ար-
դյունք, իսկ վերևում բերված համայնական որոշումները՝
որպես համայնական հիմքերը կործանումից պահպանելու
վերջին փորձ:

3. Ապրանֆափողային հարաբերությունների աճումը

Մինչոչֆորմյան ժամանակաշրջանում առևտուրը երկրի ներսում շափազանց թույլ էր զարգացած: Ֆարքիկաների լիովին բացակայութունը, աննշան արդյունաբերութունը, քաղաքների հեռավորութունը առևտրական գործունեության գլխավոր կենտրոններից, հաղորդակցության ճանապարհների զարգացման բացակայութունը և այլն խանգարում էին առևտրի զարգացմանը երկրի ներսում: Առևտուրը ոչ միայն զարգացած չէր, այլև կատարվում էր ամենապրիմիտիվ ձևերով և կողոպտչական մեթոդներով: Տեղական առևտրականները՝ բազազները, ատարները, ալաֆները, բախկալները, դուքանչիները և շարլիները ամենացածր գներով գնում էին գյուղացիների արտադրանքները և մեծ շահույթով իրացնում քաղաքի բնակիչներին: Դրա հետ միասին (բազազները և շարլիները) եռապատիկ թանկ գներով գյուղացիների մեջ իրացնում էին արդյունաբերության արտադրանքները: Եվ դա հասկանալի է, «Ռոքան ավելի խուլ է դյուղը, որքան ավելի հեռու է կանգնած նա կապիտալիստական նոր կարգերից, երկաթուղիներից, խոշոր գործարաններից ու խոշոր կապիտալիստական հողագործութունից, — այնքան ավելի ուժեղ է շրջակա գյուղացիների ենթարկումը նրանց, այնքան ավելի բիրտ ձևեր է ընդունում այդ ենթարկումը»¹:

Հայկական գյուղերի հետամնացութունը և տեղական տգրուկ-առևտրականների ու վաշխատուների կողմից գյուղացիների շահագործման կոպիտ ձևերը պահպանվեցին բավականին երկար ժամանակ՝ Ռուսաստանում ճարտարատիրական իրավունքը վերացնելուց հետո էլ: Սակայն արդյունաբերական կապիտալիզմի զարգացումը համառ կերպով պահանջում էր տեղական շուկան, հետևապես նաև տեղական առևտուրը ենթարկել իր զարգացմանը:

«...Նրա (կապիտալիստական արտադրանքանակի Մ. Ե.)

¹ Վ. Ի. Աեհն, Երկեր, հատոր 3, էջ 486:

տենդենցն այն է, որ ամեն արտադրութիւնն ապրանքարտադրութեան փոխարկի ըստ կարելիութեան. սրան հասնելու համար նրա գլխավոր միջոցը նույն արտադրութիւնը կապիտալիստական շրջանառութեան մեջ ներքաշելն է հենց¹:

60-ական թվականներին առևտուրը Հայաստանում ոչ միայն սկսեց արագ կերպով դարգանալ, այլև արմատապես փոխվեց նրա բնույթը և նշանակութիւնը: Թուական արդյունարեքողները, առանձնապես ֆաբրիկատերերը, սկսեցին ուժեղ կերպով իրենց ապրանքները վաճառահանել ծայրամասային նահանգները, նվաճել տեղական շուկան և ավելի ու ավելի գյուղատնտեսական արտադրութիւնը վերածել իրենց արդյունարեքողութեան ապրանքա-հումքային բազայի:

Մյուս կողմից, այդ նույն պրոցեսը անխուսափելիորեն գյուղատնտեսութեան արտադրանքին տալիս է ապրանքային թեքում, ուժեղացնում է տնտեսական կապերը առանձին ռայոնների և գյուղերի միջև, հողագործութեան մեջ մտցնում է մասնագիտացման սկզբունք և այդ ամենով ընդարձակում ներքին շուկան: Այդ ֆոնի վրա էլ ծավալվում է առևտրական կապիտալի գործունեութիւնը:

Ճորտատիրական իրավունքի վերացումից հետո առևտրի արագ դարգացման մասին վկայում են հետևյալ թվականի տվյալները. կովկասյան օրացույցի տվյալներով Երևան և Ալեքսանդրապոլ քաղաքների ներքին առևտրի միջին տարեկան շրջանառութիւնը մինչև ռեֆորմը կազմում էր ոչ ավելի, քան 400 հազար ռուբլի: 1866 թվականի տվյալները ասում են, որ նրանց առևտրական շրջանառութիւնը ավելացել է ավելի քան 2 անգամ: Երևանում 1866 թվականին կար 480 առևտրական, որոնք ունեին 437 հազար ռուբլու տարեկան շրջանառութիւն: Նույնպիսի աճում ունեւր առևտուրը Ալեքսանդրապոլում: Բերենք այդ տվյալները: (Տե՛ս 90 էջը):

Այստեղ ուշադրութիւն պետք է դարձնել առևտրականների առաջին խմբի վրա, որոնց ձեռքին գտնվում էր ամբողջ ապրանքաշրջանառութեան ավելի քան 74 տոկոսը: Բանը ոչ

¹ Կ. Մարքս, Կապիտալ, 4. II, էջ 81:

Առևտրի տեսակները	Երևան		Ալեքսանդրապոլ		Ընդամենը	
	առևտրակրանոցներ	տարեկան շրջանառութ.	առևտրակրանոցներ	տարեկան շրջանառութ.	առևտրակրանոցներ	տարեկան շրջանառութ.
Բազազներ	253	353000	300	290000	553	643000
Աթթարներ	52	20000	150	55000	202	75000
Բախկալներ	67	16000	120	25000	187	41000
Դուրանչիներ	63	34000	100	60000	163	94000
Այլք	45	14000	—	—	45	14000
Ընդամենը	480	437000	670	430000	1150	867000

միայն նրա տեսակարար կշիռն է, այլև նրա բնույթը և նշանակութունը:

Բազազները առևտուր էին անում գլխավորապես ռուսական Ֆաբրիկաների (առավելապես Մոսկովայի և Նիժնի-Նովգորոդի Ֆաբրիկաների) արտադրած ապրանքներով:

Ռուսական Ֆաբրիկաների արտադրած բրդյա, բամբակյա, կիսամետաքսյա և մետաքսյա կտորեղենը աստիճանաբար ներքին շուկայից դուրս էր մղում տեղական արտադրության գործվածքները: Ռուսական Ֆաբրիկաների ապրանքներով առևտուր աճելը արագ կերպով սկսեց զարգանալ նաև գյուղում, որի հետևանքով գյուղացիները անձնական սպառման ասպարեզում աստիճանաբար ենթարկվում էին շուկային:

Հենց այդ է, իսկապես ասած, առևտրական կապիտալի հեղափոխականացնող դերը հետևաֆորմյան Հայաստանում: Կ. Մարքսը անգլիական առևտրի հեղափոխականացնող դերը Հնդկաստանում տեսնում էր նրանում, որ նա իր ապրանքների էժանությամբ ոջնչացրեց տեղական մանածագործությունն ու ջուլհակությունը, քայքայեց նաև արդյունա-

բերա-հողագործական արտադրութեան միասնութիւնը և, ալդպիսով քայքայման հասցրեց համայնքը: Սակայն Մարքսը, ելնելով Ռուսական առևտրի մինչոնֆորմայն վիճակից, դրա հետ մեկտեղ գրել է, որ «Անդիլիական առևտրի նկատմամբ հակադրութիւն կազմելով՝ ռուսական առևտուրը, ընդհակառակն, կանգուն է թողնում ասիական արտադրութեան տնտեսական հիմքը»¹:

Բայց, ելնելով ռուսական առևտրի հետոնֆորմայն ժամանակաշրջանի վիճակից, էնգելսը անհրաժեշտ համարեց ծանոթագրութեան մեջ գրել. «Այս էլ է սկսում փոխվել այն ժամանակվանից դեսը, երբ Ռուսաստանը ջղաձգական ջանքեր է անում դարգացնելու սեփական կապիտալիստական մի արտադրութիւն, որը նախանշված է բացառապես ներքին և սահմանամերձ ասիական շուկայի համար»²:

Առևտրական կապիտալի գործոններութիւնը Հայաստանում հետադաշում կապիտալիստական արտադրութեան ընդհանուր դարգացման հիման վրա արագ կերպով ընդարձակվում է: Մենք հնարավորութիւն շունենք մեր աշխատութեան մեջ ցույց տալու առևտրի աճման դինամիկան ըստ տարիների, նույնիսկ տասնամյակների, քանի որ դրա համար համապատասխան վիճակագրական տվյալներ չկան: Սակայն մեզ հաջողվեց թիֆլիսի պետական արխիվում առևտրի և առևտրա-արդյունաբերական հաստատութիւնների գլխավոր ստուգման ամսագրերից տվյալներ քաղել, որոնք վերաբերում են 1890 թվականին և դրա հիման վրա պարզել առևտրի վիճակը Հայաստանում (տե՛ս էջ 92):

Այդ թվերի մեջ մենք շենք մտցրել առևտրա-արդյունաբերական ձեռնարկութիւնները, թեև դրա համար անհրաժեշտ տվյալներ ունենք: Դժբախտաբար, մեզ չի հաջողվել պարզել ինչպես առանձին խմբի, այնպես էլ ամբողջ առևտրի շրջանառութեան գումարը: Սակայն մենք կարող ենք այդ թիւութիւնը վերացնել առևտրական միավորների քանակը շրջ-

1 Կ. Մարքս, Կապիտալ, հատոր III, մաս I, էջ 321:

2 Նույն տեղում:

Աստուծոյ վերահսկման շաբաթաթուղթ 1890 թվականին

Ընդամենը տակաբա- կանները	Միջակայք 500 ու										Ընդամենը	
	Միջակայք 500 ու	500-ից մինչև 1000	1000-ից մինչև 2000	2000-ից մինչև 3000	3000-ից մինչև 4000	4000-ից մինչև 5000	5000-ից մինչև 10000	10000-ից մինչև 15000	15000-ից մինչև 20000	20000-ից մինչև 30000		30000-ից մինչև 50000
Երևանի	116	155	273	88	62	11	17	—	—	—	9	84
Էջմիածնի	21	32	46	—	—	—	—	—	—	—	—	49
Նոր Բայազետի	29	42	51	11	—	—	—	—	—	—	—	15
Շարուր-Գարաշաղաղի	4	10	57	23	16	—	—	—	—	—	—	3
Նախիջևանի	67	68	61	89	61	6	3	—	—	5	—	—
Օրդուբադի	28	13	15	1	4	—	—	1	—	—	—	—
Սուրբաբի	63	18	44	16	4	—	—	—	—	—	—	35
Այրարատի գրադարանի	129	213	137	71	17	4	—	—	—	1	—	28
Կարսի շրջան	107	229	140	69	5	9	—	—	—	—	1	—
	667	752	801	446	198	30	20	1	1	11	10	208
Ընդամենը	3134											

շապտուկաների միջին թվաբանական գումարի հետ բազմապատկելու միջոցով և, դրա հիման վրա, որոշել նրանց տարեկան շրջանառությունը: Այդ դեպքում մենք կստանանք առաջին խմբին 166750 ռուբլի, երկրորդ խմբին՝ 563000 ռուբլի, երրորդ խմբին՝ 1201500, չորրորդ՝ խմբին՝ 1561000, հինգերորդ խմբին՝ 1410000, վեցերորդ խմբին՝ 375000, յոթերորդ խմբին՝ 35000, ութերորդ խմբին՝ 22500, իններորդին՝ 302000 և տասներորդ խմբին՝ 600000 ռուբլի: Բոլոր խմբերի ընդհանուր շրջանառությունը կկազմի 6551750 ռուբլի գումար:

Առևտրի ընդհանուր աճը ավելի ունի՞ պատկերացնելու համար մենք վերցնենք միայն քաղաքային առևտրի աճը և Երևանի ու Ալեքսանդրապոլի տվյալները համադրենք 1866 թվականի տվյալների հետ (տե՛ս էջ 94):

Կիրառելով յուրաքանչյուր խմբի տարեկան շրջապտուկայի գումարը՝ որոշելու այդ նույն մեթոդը, մենք կստանանք առաջին խմբին՝ 36000 ռուբլի, երկրորդին՝ 379500, երրորդին՝ 723000, չորրորդին՝ 1027500, հինգերորդին՝ 1117500, վեցերորդին՝ 325000, յոթերորդին՝ 332500, ութերորդին՝ 302500, իններորդին՝ 22500 և տասներորդին՝ 600000 ռուբլի: Քաղաքային ամբողջ առևտրի ընդհանուր տարեկան միջին շրջապտուկայը կկազմի 4888000 ռուբլի:

Այդ գումարից 2890000 ռուբլի ընկնում է Երևանին և Ալեքսանդրապոլին: Համեմատելով երկու քաղաքների 1890 թվականի առևտրի շրջապտուկայի գումարը 1868 թվականի շրջապտուկայի գումարի հետ, որը հավասար էր 867000, ապա քսանչորս տարվա աճը կկազմի ավելի քան 3,3 անգամ:

Այդ ժամանակաընթացքում առևտրի ձևերը և եղանակները արմատապես փոփոխվել էին: Վերջնականապես քայքայվել էր առևտրի ցեխային կարգը, անցյալի գիրկն էին անցել առևտրի տեսակների հին անվանումները, մեծացել էին առևտրական միավորները և շարչիները փոխարեն գյուղերում առաջ էին եկել առևտրական խանութները: Միաժամանակ քաղաքներում առաջ էին եկել առևտրական խոշոր հաստատություններ: Երևանում, օրինակ, հայտնի էին որ-

պիս խոշոր առևտրականներ Առաքել Աֆրիկովը, որի առևտրական շրջանառությունը հասնում էր մինչև 90000 ռուբ., Զաքարյա Գևորգյանը, Բարսեղ Եղիազարյանը, Ավետիս Ենգիբարյանը, Սարգիս Հախնազարյանը և ուրիշներ, որոնց առևտրական շրջանառությունը գերազանցում էր 50000 ռուբլուց:

Առևտրական կապիտալը ավելի ինտենսիվ զարգացավ 90-ական թվականներից հետո: 1902 թվականի Կովկասյան օրացույցի տվյալներով՝ 1900 թվականին, ընդհանուր առևտրական շրջապտույտը 1890 թվականի համեմատությամբ, Երևանի նահանգում աճեց ավելի քան 2 անգամ (շրջանառության ընդհանուր գումարը հավասար էր 14035120 ռուբլու), շահույթների ընդհանուր գումարը՝ 126557 ռուբլի: Ընդ որում առևտրական հաստատությունների ընդհանուր քանակը նվազեց, իսկ 50000 և ավելի ռուբլու շրջանառություն ունեցող առևտրականների թիվը տասնամյակի ընթացքում ավելացավ երեք անգամ: Այդ աճումը կատարվեց ոչ աճաքան բաղաբաշխ բնակչության ավելացման և նրա արդյունաբերական գործառնության ուժեղացման, որքան շնորհիվ այն բանի, որ փոփոխված պայմանների հետևանքով գյուղացին նախընտրում էր արտադրել շուկայի համար, և ստացած փողով գնել իրեն նահրաժեշտ արդյունաբերական առարկաները՝ իր սպառողական և արտադրական կարիքները հոգալու համար: Որ դա այդպիս է, այդ մասին վկայում է քաղաքային բնակչության համեմատաբար դանդաղ աճումը առևտրական շրջանառության աճի համեմատ: 1890 թվականի Կովկասյան օրացույցի տվյալներով 1865—1886 թվականներին Երևանի բնակչությունը աճել էր ընդամենը 25,1 տոկոսով: Այնքանորապուլինը՝ 44 տոկոսով: Այսպիսով, քաղաքային առևտրի շրջանառության աճի տեմպը ավելի քան 2 անգամ առաջ էր անցել քաղաքի բնակչության աճման տեմպերից: Հետագայում քաղաքային բնակչության աճման և քաղաքային առևտրական շրջանառության աճման տեմպերի տարբերությունը է՛լ ավելի արագ է ավելանում: Այստեղ հարկ չկա խոսել հետոնֆորմյան ժամանակաշրջանի քաղաքների աճման մասին: Անկասկածելի է, որ այդ աճումը տեղի էր

ունենում. Բայց մինք համաձայն շինք այն բանի հետ, որ քաղաքային բնակչության աճումը արդյունաբերության զարգացման ուղղակի հետեանքն է, - ինչպես այդ գրում է պրոֆ. Հ. Թումանյանը: 1865—1886 թվականների ժամանակամիջոցում Հայաստանի քաղաքներում արդյունաբերական որևէ տեղաշարժ տեղի չի ունեցել:

1890 թվականի գլխավոր ստուգման տվյալներով Երևանում գործում էին լիմոնադի 2 գործարան, աղյուսի 1 գործարան, օղու 1 գործարան, զարեջրի 1 գործարան, կաշվի 4 գործարան, տպարաններ 3, գինեգործական 1 գործարան, գաջի 7 գործարան և ջրային 11 հավանք: Բայց նրանցից յուրաքանչյուրի տարեկան շրջանառությունը, բացառելով Թախրովի գինեգործարանը, հավասար էր 1000-ից մինչև 5000 ռուբլու, իսկ բանվորների քանակը շէր անցնում հինգ մարդուց: Հետևապես քաղաքային բնակչության աճումը այդ ժամանակաշրջանում պետք է բացատրել քաղաքների առևտրական գործունեության ուժեղացումով և նրանց մեջ արհեստավորների կենտրոնացումով:

Անհրաժեշտ է նշել, որ քաղաքի առևտրականներից շատերը զբաղվում էին նաև արդյունաբերական գործունեությամբ: Այսպես, օրինակ, Կուլպինի աղահանքը վարձակալել և պահպանում էր II գիլդիայի առևտրական Ջաքարյա Ջանփոլադովը, Ալեքսանդրապոլի դարեջրի գործարանը պատկանում էր II գիլդիայի առևտրական Թելավցի Իվան Կլագովին, նրան էր պատկանում նաև լիմոնադի գործարանը: Երևանի տպարաններից մեկը գտնվում էր II գիլդիայի առևտրական Գյուլամիրյանի ձեռքում, համարյա բոլոր ջրասանդերը այստեղ պատկանում էին առևտրականներ Խ. Ավետյանին, Խուդաբաշյանին և Ավանիսյանին:

Նույնպիսի դրուժյուն հետոեֆորմյան ժամանակաշրջանում մենք նկատում ենք գյուղական վայրերում: Առևտրական կապիտալը սողոսկելով գյուղ, ոչ միայն էժան գներով գնում էր գյուղացիական արտադրության արդյունքները և թանկ գներով վաճառում նրանց արդյունաբերական արդյոճքներ, այլև հնարավոր բոլոր միջոցներով իր ձեռքն էր

վերցնում այգիները-աղացները, արոտավայրերը և այլն, և դրանք դարձնում շահի աղբյուր:

Ավելի մանրամասն քննարկենք առևտրական կապիտալի ազդեցությունը դյուղացիության քայքայման վրա: Ապրանքա-առևտրական կապիտալը կամ առևտրական կապիտալը, ինչպես հայտնի է, ընդգրկում է արտադրության զանազան եղանակների ապրանքները: Այդ դերը նա կատարում է նաև կապիտալիզմի դարաշրջանում: Բայց այստեղ նա ինքնուրույն չէ և ենթարկված է արդյունաբերական կապիտալին, ծառայում է նրան, նրա առանձնացած մասն է: Ընդ որում, նա իրացնելով արտադրողական կապիտալի արտադրանքը կապիտալիստական ոլորտից դուրս, «նպաստում է ամբողջ ապրանքային արտադրությունը կապիտալիստական ապրանքային արտադրության անցնելուն: Իսկ կապիտալիստական ապրանքային արտադրության զարգացումը քայքայում և կազմալուծում է արտադրության հին ձևերը, որոնք նկատի են առնված առավելագույն անմիջականորեն սեփական սպառման բավարարումը և ապրանք է դարձնում միայն արդյունքի ավելցուկը»¹:

Այսպիսով, արդյունաբերական կապիտալը, այն բանից հետո, երբ նա դառնում է տիրապետող կամ նույնիսկ լինելիության պրոցեսում, կործանում է արտադրության հին ձևերը և ոչ կապիտալիստական ապրանքային արտադրությունը դարձնում է կապիտալիստական, գլխավորապես արտադրության հին եղանակները իր շրջանառության պրոցեսը ներդրավելու միջոցով:

Հետոնֆորմյան ժամանակաշրջանում առևտրական կապիտալի թափանցումը հայկական համայնքի մեջ կատարվում էր երկակի եղանակով. մի կողմից՝ իրենք ունևոր գյուղացիները, վերցնելով գիլդիական վկայագրեր, դառնում էին առևտրականներ և մյուս կողմից՝ քաղաքի առևտրականները գնումների, գրավականների և այլնի միջոցով համաշխարհային դյուղացիական հողաբաժինները և դրանք դարձնում իրենց մասնավոր սեփականությունը:

¹ Տե՛ս Կ. Մարքս, Կապիտալ, հատոր II, էջ 14:

«Առևտրականները և կուլակները շրջանցում են օրենքը (1857 թվականի օրենքը հողաբաժինների անօտարելի լինելու վերաբերյալ—Մ. Ե.), նրանք չքավոր գյուղացիների հետ կնքում են այնպիսի պայմանագրեր, որոնցով վերջիններս ձևոք են բերում հողաբաժինները, առավելապես այգիները՝ անժամկետ-ժառանգաբար տիրելու և օգտագործելու իրավունքով... Իրա հետևանքով հարստացած գյուղացիները ունեն մի քանի այգի, մինչդեռ համայնքի չքավոր անդամները զրկվում են տնտեսական տեսակետից այդ ամեաարժեքավոր հողերից»¹—ասվում է ռուսական գյուղացիների տրեստեսական կենցաղի ուսումնասիրման նյութերի ամփոփագրի մեջ:

Արխիվային տվյալներով Դվինի գյուղական հասարակության Արխ-Քզովան գյուղը բաղկացած էր 60 ծխից, այդ թվում 20 ծուխ կողմնակի: 1909 թվականին արական սեռի 186 հոգուց 85 հոգի կողմնակիներ էին,² որոնք գրանցվել էին Արխ-Քզովան գյուղի հասարակությանը՝ այդ նույն զրխ-քզովանցիներից այդու հողամասեր գնելու հետևանքով: Այդ կողմնակիները քաղաքից եկած այն առևտրականները և վաճառատուներն էին, որոնք տիրացել էին գյուղացիների հողաբաժիններին:

Առևտրական կապիտալը այդ դեպքերում հանդես է գալիս ոչ միայն գնորդի և վաճառողի դերում, այլև վաճառուի և արտադրողի դերում: Փոքր Մարիարի հասարակությունը, — իր զեկուլցի մեջ գրում է Հատուկ հանձնարարությունների աստիճանավոր Զորչելյանին, — զայրացած են Չարուխյանի վաճառուի դերում, որը խանութից բնակիչներին ապրանքներ վաճառելով և նրանցից մուրհակներ վերցնելով այնպես էր կապկապել բնակիչներին, որ նրանք՝ սարիարցիները, ներկայումս գտնվում են նրա անվճարելի պարտքերի տակ³: Քնորոչ է, որ Հովհաննես Չարուխյանը սկզբից ձեռք բերեց հա-

¹ Ռուսական գյուղացիների տնտեսական կենցաղի ուսումնասիրման նյութերի ամփոփագիր, Հատր 1, էջ 16—17:

² Հայկական ՄԻԻ, ՊՎԵ, ք. 131, ք. 33, ք. 73—90:

³ Տե՛ս Հայկական ՄԻԻ, ՊՎԵ, ք. 133, ք. 2153, Լրջյնականի զեկուլցագիրը:

սարակութեան աղացքը, հետո աղացին կից կառուցեց խանութ, իսկ այնուհետև սկսեց աստիճանաբար զավթել գյուղացիական հողերը: Այդ ցույց է տալիս բազմաթիվ աճն եղանակներից մեկը միայն, որոնց օգնութեամբ առևտրական կապիտալը արտադրողներին ենթարկում է իրեն:

Այստեղ առանձնապես կարևոր է նշել այն հանգամանքը, որ ինչպես առաջին դեպքում, երբ արտադրողը դառնում է առևտրական, այնպես էլ երկրորդ դեպքում, երբ քաղաքի առևտրականը թափանցում է համայնք, գյուղացիների հողերի հափշտակման պրոցեսը տեղի է ունենում կապիտալիստական հիմքի վրա: Երկու դեպքում էլ, մի կողմից քայքայվում են շքավոր գյուղացիները և այդ բաղալի վրա ստեղծվում է կապիտալիստական խոշոր ապրանքային արտադրություն և, մյուս կողմից, քայքայված գյուղացիները դառնում են վարձու բանվորներ:

Իսկ ասածից ինչ հետևություն կարող ենք անել.

1 Ճորտատիրական իրավունքի վերացումը 1861 թվականին հասցրեց արդյունաբերական կապիտալի արագ զարգացմանը Ռուսաստանում: Իսկ վերջինիս զարգացումը անխուսափելիորեն առաջ քաշեց ծայրամասերի տնտեսական ենթարկման հարցը:

2 Մայրամասային նահանգների տնտեսական ենթարկումն արդյունաբերական կապիտալիզմին սկսվեց տեղական առևտրի փոփոխություններից, զարգացումից և իր շարժմանը ենթարկելուց, որն իր հերթին ենթարկեց և շահագործեց մանր ապրանքարտադրողներին:

3 Առևտրի աճումը, տեղական շուկայի ընդարձակվելը և, վերջապես, գյուղացիական ու արհեստավորական արտադրողներին առևտրին ենթարկելը, մի կողմից, հանգեցրեց ապրանքային արտադրության ընդարձակմանը և, մյուս կողմից, կապիտալիստական հիմքի վրա նրանց անխուսափելի շերտավորմանը և քայքայմանը:

4. Վաշխառուական կապիտալի ազդեցությունը գյուղացիների քայքայման վրա

Արտադրութեան բոլոր հակամարտ եղանակների ժամանակ վաշխառուական կապիտալը նպաստում է շահագործողների կողմից աշխատավոր մասսաների շահագործման ուժեղացմանը: Դրա հետ միասին, նա մի կողմից՝ քայքայում ու ոչնչացնում էր տիրապետող դասակարգերի սեփականութեան հին ձևերը և, մյուս կողմից՝ անխնա կերպով քայքայում էր մանր արտադրողներին: Նույնիսկ բուրժուական հասարակութեան մեջ վարկային սխտեմը, որը արդյունաբերական կապիտալի առանձնացած մասն է, նպաստելով կապիտալի համակենտրոնացմանը և կենտրոնացմանը, մի կողմից՝ հանգեցնում է արտադրութեան ավելի և ավելի մեծ շափով հանրայնացմանը քչերի ձեռքում և, մյուս կողմից՝ միլիոնավոր մանր ապրանքարտադրող մասսաների քայքայմանը:

Մեր խնդիրը չէ մանրամասն վերլուծել վաշխառուական կապիտալի էությունը և գործունեությունը՝ մարդկային հասարակութեան զարգացման տարբեր աստիճաններում, և այսպատճառով մենք սահմանափակվում ենք միայն նրա դերը վերլուծութեամբ՝ Հայաստանում Ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու ժամանակաշրջանում:

Երևանի նահանգը և Կարսի մարզը ցարական կայսրութեան ամենահետամնաց նահանգներից ու մարզերից մեկն էին: Այստեղ իշխում էր աղքատությունն ու քայքայումը: Գյուղական արտադրողները, ճնշող մեծամասնությամբ, զրտնըվում էին մշտական կարիքի մեջ: Փող ունենալու կարիքը առանձնապես ուժեղացավ 1840-ական թվականներից հետո պետական հողի վրա ապրող գյուղացիներին դրամական բահրայի փոխադրելու կապակցությամբ: Հայկական գյուղերի կտրվածությունը միմյանցից, ավելի կամ պակաս խոշոր քաղաքների բացակայությունը և, վերջապես, հարկերի ու բահրանների անընդհատ ավելացումը գործունեության լայն ասպարեզ ստիղծեցին վաշխառուական կապիտալի համար: Վաշխառուական կապիտալի կողմից կատարվող ան-

դուստը շահագործումը առաջ բերեց համաժողովրդական դայ-
րույթի: Նույնիսկ ցարական կառավարութեան աստիճանա-
վորները, որոնք ուսումնասիրել էին գյուղացիների տնտե-
սական վիճակը, իրենց հաշվետվութիւններէ մեջ վաշխա-
ռուական կապիտալի մասին դատապարտութեամբ էին
գրում:

«Գյուղացիների պարտքերն ընդհանրապես և կուլակների
ու գյուղական ցեղերի կողմից ստրկացված գյուղացիների
թիւը աճում է արտասովոր արագութեամբ: Վերջիններս տո-
կոսների բարձրացման գործում համնում էին վիրտուոզու-
թեան: Բավական է, որ չքավոր-հողագործը գյուղական «բա-
րերարից» վերցնի 15—20 ռուբլի, որ վստահ կերպով ասվեր,
թե մի ինչ-որ 5—8 տարի հետո նա կդառնա նրա ճորտը»:
Չքավորի լավագույն հողաբաժինը, նրա բանող անա-
սունները, մի խոսքով կենդանի և անկենդան ամբողջ գույ-
քը և, ընդհանրապես, նրա աշխատանքը անցնում է «բարե-
բարի» ձեռքը»¹, գրում էր ցարական ծառայող Վերսալաձեն:

«Աղքատութիւնը և պարտքը՝ ահա այն ամենը, որ նա
(րճակչութիւնը, Մ. Ե.) այստեղ ունի»², գրում է Մեդձիխովս-
կին, որը հետազոտել է Նոր Բայազետի գավառը: Այդ նույն
բանի մասին է գրել Լ. Սեդալը. «Գյուղացիական հողագոր-
ծական տնտեսութեան համար կրիտիկական պահը,—գրում
է նա,—փող ունենալու կարիքն է, երբ տնտեսութիւնը դի-
մում է հողերի գրաւ դնելուն: Իսկ մի անգամ, երբ գյուղացին
հրապուրանքի ենթարկվեց, նա այլևս ելք չունի, կապիտալի
տոկոսները, անխուսափելի երկարաձգման միջոցով, շարու-
նակ աճելով ու ավելանալով, տուժանքի հետ միասին, ժա-
մանակի ընթացքում հասնում է այնպիսի շափերի, որ պար-
տատուին վճարման ոչ մի միջոց չի մնում, և հողը, ամենից
հաճախ գյուղատնտեսական գործիքների հետ միասին, վերջ
ի վերջո, անցնում է փոխատուին, շարունակելով մնալ այն

¹ Версаладзе, Краткий обзор Александропольского податного участка, Александрополь, 1910 г., стр. 39—40.

² Медзиховский, Краткий очерк Ново-Баязетского уезда, СПб. 1908 г., стр. 3.

մարդու անձնական հաշվին, որը ստացել է համայնական հողերի բաժանման ժամանակ»¹։

Վաշխատուն գյուղացուն հասցնում էր քայքայման աստիճանի ոչ միայն իր տված կապիտալի տոկոսների, այլև նրա աշխատուժը շահագործելու և ապագա բերքը էժան գնելու միջոցով։

Ահա թե ինչ է հաստատում իր եզրակացության մեջ «Գյուղատնտեսական արդյունաբերության կարիքների Երևալանի նահանգային կոմիտեն»։ «Լավատեղյակ մարդկանց բոլոր ցուցմունքների մեջ վառ շարքով անցնում է կուլակ-մեծագնսորդների գործունեության վերաբերյալ հաղորդագրությունը... ըստ ցուցմունքների, գյուղացիներին զարնանք հարկավոր է վճարել իրենց հարկերը, հարկավոր է սննդամթերք գնել իր համար և անասնակեր, քանի որ թե՛ մեկի, և թե՛ մյուսի պաշարները զարնան մոտեքքը սպառվում են, հենց այդ ժամանակ էլ սկսվում են աշխատանքները խաղողի այգիներում և դաշտերում, պահանջվում է բանվորներ վարձել։ Փողի կարիքը շատ խիստ է, իսկ այն վերցնելու ոչ մի տեղ չկա։ Դրանից էլ հենց օգտվում են կուլակ՝ վաշխատունները։ Հարկերը հավաքելու ժամանակ նրանք գտնվում են նույն տեղում և առաջարկում պարտք վերցնել։ Քանի որ այլ ելք չկա, սպա գյուղացիները անհավատալի տոկոսներով պարտք փող են վերցնում։ 16—24 տոկոսը համարվում է բարեբարություն։ 10 ուրբլուց ամսական 30 կոպեկ գանձելը սովորական բան է, սակայն լինում են նաև ուրբլուց ամսական 5 կոպեկ, այսինքն՝ տարեկան 60 կոպեկ։ Այդպիսի խոշոր տոկոս ստանալու հնարավորությունը դրդում է մանուֆակտուրային ապրանքներով առևտուր անող գյուղական առևտրականներին, բանկերից դրամական փոխառություն և փող վերցնել, որոնց համար իրենք վճարում են տարեկան 7—8 տոկոս, եռակի և քառակի բարձր տոկոսներով բաժանել բնակչությանը։ Պարտքի պայմանները է՛լ ավելի ծանրանում են, երբ վարկատուն փողը տալիս է ոչ թե մուրհակով, այլ բերքը վաճառելու պայմանով։ Այն ժամանակ

¹ Л Сегаль, Крестьянское земледелие в Закавказье, Тифлис, 1912 г., стр. 47.

հարկադրված է ապագա բերքը վաճառել այնպիսի գնով, ինչպես հարմար է առաջարկել վաշխառուին: Այսպես, գարնանը մեկ խալվար (30 փութ) խաղողը վաճառում են 8 ուրլի, մինչդեռ աշնանը սովորական գինը հասնում է մինչև 30 ուրլու: Նույն բանը կատարվում է մյուս առարկաների հետ: Վարկի այդքան ծանր պայմանների շնորհիվ հաճախ հողաբաժինները անցնում են վաշխառուների ձեռքը: Եթե փոխատվությունը գրված է հողի գրավականում, ապա պարտքը չվճարելու դեպքում հողը սկսում է մշակել վաշխառուն, իսկ նրա տերը իրոք դառնում է հողագուրկ: Այդպիսի դրուժյան պատճառով գյուղի պարտքը տարեցտարի աճում է:

Նահանգի տարբեր տեղերից կանչվել էին գյուղացիներ և նրանք ցուցմունք տվեցին, որ ներկայումս համարյա ամեն մի գյուղում պարտք ոճնեցող տնտեսությունների թիվը հասնում է իրենց գյուղի ընդհանուր թվի մեկից երկու երրորդին»¹:

Վաշխառության մասին բավականին ճշմարտացի շարադրել է Իվ. Սոլոմատինը, որը ուսումնասիրել է Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի գյուղական հողային համայնքները:

«Ամենաբազմազան հարցերի վերաբերյալ հսկելով տարբեր գյուղերի ժողովներին,— գրում է նա,— ես չեմ կարող չհաստատել մի այնպիսի տխուր երևույթ՝ այսպես կոչված «ցեցերի» ազդեցությունը շինականների վրա... «Ցեցերի» ազդեցությունը կախված է բացառապես հեշտ և էժան վարկի բացակայությունից... փոխարինաբար վերցրած փողի պայմանները՝ պե՞տք է արդյոք այն հատուցվի փողով, աշխատանքով կամ հացահատիկով՝ ամենածանր պայմաններն են: Մի խոսքով, այստեղ կրկնվում է վաշխառության ամենատևրական և միևնույն ժամանակ ամենաանորսալի ձևը: Նշված կապիտալիստները, օգտվելով պարտատուների վրա ունեցած ազդեցությունից, ժողովներում խոշոր դեր են խաղում»²:

¹ Памятная книжка Эриванской губернии на 1904 г., стр. 7—8.

² Памятная книжка Эриванской губернии на 1908 г., стр. 240.

Իհարկե, իվ. Սուլումատինը, վերևում բերված հեղինակները, ինչպես նաև «Գյուղատնտեսական արդյունաբերություն» կարիքների կոմիտեն» շին համարձակվում կամ շին ուզում ասել գյուղացիների քայքայման և երկրամասի հետամնացության իսկական պատճառների մասին: Հակառակ դեպքում նրանք պետք է մերկացնեին նաև ցարական կառավարության ռեակցիոն քաղաքականությունը:

Բերված տվյալները միանգամայն բավական են ցույց տալու համար, թե ինչ ձևով է վաշխառությունը դառնում կապիտալիզմի առաջացման և կազմավորման շարժիչ ուժերից մեկը:

Եվ իրոք: Եթե առաջ վաշխառուները փողի փոխատվություն տալով ֆեոդալին և նրան ենթակա արտադրող-գյուղացուն, նպաստում էին աշխատավորների շահագործման ուժեղացմանը և երկրի տնտեսական անկմանը, ապա նոր պայմաններում, երբ արդյունաբերական կապիտալը արդեն նվաճել էր տիրապետող դիրք և մանր արտադրողներին ներգրավել իր շրջապտույտի մեջ, վաշխառուական կապիտալը, ոչնչացնելով սեփականության հին ձևերը և քայքայելով մանր արտադրողներին, մի կողմից՝ կապիտալի համար ստեղծում էր վարձու բանավորներ և, մյուս կողմից՝ նպաստում էր աշխատանքի պայմանների կենտրոնացմանը: Ինչպես այդ երևում է վերևում բերված դրույթներից, վաշխառուի դերում, հիմնականում, հանդես էին գալիս ունևոր գյուղացիները, կուլակները և առևտրականները:

Կատարելով վաշխառուի ֆունկցիա, նրանք աշխատանքի պայմանների կենտրոնացման և գյուղացիների քայքայման հետ միասին աշխատանքի այդ պայմանները դարձնում էին ապրանքային արտադրության օբյեկտ, իսկ քայքայված գյուղացիներին՝ իրենց վարձու բանավորներ: Այդ պրոցեսը հասցրեց գյուղացիների ճորտատիրական կախվածության վերացման և հողային ռեֆորմի գոտիներում՝ հին շահագործողին նոր շահագործողով և հին արտադրողին նոր արտադրողով փոխարինելուն: Արտահայտվելով Մարքսի խոսքերով, ֆեոդալը իր տեղը զիջեց վաշխառուին, որը և ինքը դառնում է հողագործ: Հին շահագործողի տեղը, որի շահա-

դործումը կրում էր շատ թե քիչ նահապետական բնույթ, հանդես է դալիս դաժան, փողի ազահ շահագործողը:

Քանի որ Հայաստանում գյուղացիները շղարձան իրենց հողարածինների սեփականատերեր, ապա վաշխառուական կապիտալի դործողութունները շհասցրին կապիտալիստական արագ կազմավորման: Այն ավելի շատ կործանում և քայքայում էր ու դրանով հենց մաքրում կապիտալիստական նոր հարաբերութունների ուղին, քան այդ հիման վրա ստեղծվում էին տնտեսության կապիտալիստական ձևերը:

5 Հարկերը և նրանց ազդեցությունը գյուղացիների ֆայֆայման վրա

Առևտրի զարգացման բաժնում մենք ասել ենք, որ բնեղեն հարկերի փոխարինումը դրամականով անցյալ հարյուրամյակի 40-ական թվականներին զգալի շահով նպաստեց ապրանքային արտադրության և փոխանակման զարգացմանը:

Քայց այնտեղ մենք արատրահել էինք գյուղացիության տնտեսական վիճակի վրա նրա ազդեցութունից: Այստեղ մեր առջև խնդիր ենք դնում ցույց տալ, թե ինչ կերպ հարկերը և պարհակները արագացնում են գյուղացիների քայքայման պրոցեսը:

Հարկերը և պարհակները ինքնին շին կարող լինել գյուղացիության քայքայման ո՛չ ցուցանիշը, ո՛չ էլ կապիտալիստական հարաբերութունների կազմավորման պատճառը, բայց այնտեղ, որտեղ ապրանքային տնտեսութունը զարգանում է կապիտալիստական ուղիով, նրանց ազդեցութունը անտարակույս է, նրանք արագացնում են գյուղացիության քայքայման և կապիտալիզմի գոյացման պրոցեսը: Հարկերի այդ դերը կարելի է նույնիսկ համեմատել որոշ շահով վաշխառուական կապիտալի դերի հետ, սակայն այն տարբերությամբ, որ առաջինները պարզապես գյուղացուց խլում են նրա եկամտի մի մասը, իսկ երկրորդը այդ անում է ստրկացուցիչ տոկոսներ գանձելու միջոցով: Թե՛ մեկը, և թե՛ մյուսը տնտեսապես թուլացնում են մանր արտադրողներին և նրանց մղում են անխուսափելի կործանման հոր-

ձանուտը: Բացի դրանից, հարկային ծանրությունը խիստ քարենպաստ հող է ստեղծում վաշխառուի գործունեության համար: «Հարկերը հավաքելու ժամանակ, — ասվում է գյուղատնտեսական արդյունաբերության կարիքների Երևանի նահանգային կոմիտեի եզրակացության մեջ, — նրանք (վաշխառուները և կուլակները, Մ. Ե.) տեղավորվում են հենց այստեղ և առաջարկում են վերցնել: Քանի որ ուրիշ ելք չկա, ապա գյուղացիները անհավատալի տոկոսներով վերցնում են փողը»¹:

Հարկերը և պարհակները արագացնում են մանր արտադրողների քայքայման պրոցեսը կամ նրանով, որ ավելանում էին ավելի արագ, քան աճում էր նրանց եկամուտը, կամ նրանով, որ տիրող դասակարգը նրա հիմնական ծանրությունը դնում է աշխատավորների վրա, կամ թե երկու գործոնների միաժամանակյա գործողությամբ: Հայաստանում, մի կողմից՝ հարկերն ու պարհակները տարեցտարի ավելանում էին գյուղացիների եկամուտների աճման անհամաչափ և, մյուս կողմից՝ գյուղական բնակչության իշխող վերնախավը ավելի ու ավելի մեծ շահով նրանց ծանրությունը դնում էր չքավորության վրա:

Վ. Ի. Լենինը «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» աշխատության մեջ, վերլուծելով գյուղացիների բյուջենների վերաբերյալ ղեմստվային վիճակագրական տվյալները, գրում էր. «Ինչպես հայտնի է, գյուղացիք բոլոր հարկերն ըստ հողի են բաժանում, հարկերի բաժինը և հողի բաժինը նրանց համար միաձուլվում է մեկ «շունչ» գաղափարի մեջ: Մինչդեռ գյուղացիության քայքայումը, ինչպես տեսանք, տանում է դեպի բաժնեհողի դերի նվազումը ժամանակակից գյուղի երկու բևեռներում: Բնական է, որ այսպիսի պայմաններում հարկերի բաշխումն ըստ բաժնեհողի (որ ամբակտեղիորեն կապված է համայնքի պարտադիր բնույթի հետ) հարկերի ծանրությունն ունևոր գյուղացիներից չքավորության վրա է գցում: Համայնքը (այսինքն փոխադարձ երաշխավորությունն ու հողից հրաժարվելու իրավունքի բա-

¹ Երևանի նահանգի 1904 թվականի հուլիսի 7, էջ 7:

ցակայությունը) ավելի ու ավելի վնասակար է դառնում գյուղացիական շրջավորության համար»¹:

Տեսնենք, ինչպե՞ս էր վիճակը Հայաստանում: Հայաստանում գյուղական համայնքը իր ներքին կարգ ու կանոնով ու իրավունքներով շարունակում էր գոյություն ունենալ ցարիզմի գոյության ամբողջ ժամանակաշրջանում: Յարիզմը համայնական սիստեմն օգտագործում էր որպես մի պատենել դժո՞հ գյուղացիների էքսցեսներից և որպես հուսալի միջոց հարկերը և պարհակները դանձելու համար:

Հարկերը և պարհակները ցարական կառավարողները բաշխում էին ոչ թե ելնելով գյուղացիների տնտեսական վիճակից, այլ ելնելով առանձին գավառների ու շրջանների տնտեսական վիճակից, ընդ որում ամբողջովին ձևական բնույթ էր կրում, և այդ պատճառով իրավացի է Ձեյլինսկին, երբ նա գրում է, որ «հարկերը բաշխելու ժամանակ հաշվի չէր առնվում ո՛չ շրջանը, ո՛չ գյուղերի տնտեսական բարեկեցության վիճակը, ո՛չ բաժնեհողի քանակը, ո՛չ էլ մյուս պարհակներով ծխի հարկման շափը»²:

Բայց նույնիսկ եթե ենթադրենք, որ հարկերի բաշխումը կատարվեր շրջանների, գյուղերի և գյուղակների տնտեսական վիճակը հաշվի առնելով, հարկերի հիմնական ծանրությունը շրջավորության վրա դնելու տեսակետից գրովթյունը չի փոխվի: Գյուղական համայնքը հարկերը և պարհակները բաշխելու ժամանակ հիմնականում ելնում էր յուրաքանչյուր գյուղացու հողաբաժնի չափից: Բայց քանի որ բաշխումը կատարում էին համայնքի ունևոր և ազդեցիկ անդամները գյուղական ավագի գլխավորությամբ, ապա բնական է, որ նրանք պարհակների հիմնական ծանրությունը գցում էին շունևոր գյուղացիների ուսերին, առանձնապես, երբ գործը վերաբերում էր գանձարանի համար բնակաճ պարհակների կատարմանը: Այդ չարաշահմանը առանձնապես նպաստում էր Հայաստանում մինչև 1906 թվականը ներառյալ պար-

¹ Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 3, էջ 179—180:

² Зелинский, Земельная неурядица в Закавказье, Тифлис, 1901 г., стр. 26.

հակները կատարելու գոյություն ունեցող համապարտ երաշխավորությունը:

Անկախ սրանից, հարկերը հողաբաժնի շահերին համեմատ բաշխելու բուն սկզբունքը իր մեջ պարունակում էր մեծ անհավասարություն, որը անխուսափելիորեն տանում էր դեպի գյուղացիության շերտավորումը: Եթե, օրինակ, արտադրության հիմնական միջոցներից և աշխատուժից զուրկ գյուղացիները ստիպված իրենց հողաբաժինը վարձակալության էին տալիս ունևոր գյուղացիներին, ապա այդ դեպքում նրանք, ստանալով միայն համախառն արտադրանքի մի մասը, պարտավոր էին հարկ վճարել ամբողջ հողի կամ, որ նույն բանն է, հողից ստացվող ամբողջ եկամտի համար: Եվ ընդհակառակն, ունևոր գյուղացիները, սակավազոր գյուղացիներից ու գանձարանից վարձակալելով հողը՝ շէժն վճարում ոչ մի հարկ:

Այդպիսի դեպքերում շունևոր գյուղացիները, դառնալով անվճարոճակ, ստիպված էին էժան գնով գրավ դնելու հողից ստացվելիք ապագա եկամուտը և ապա հենց ինքը հողը: Այդպես էին վարվում նաև այն գյուղացիները, որոնք թեև իրենք էին մշակում իրենց հողը, բայց հավիվհազ կարողանում էին հաղթահարել կարիքը: Հողի զիջումը վարձակալին, հողից ստացվող ապագա բերքի գրավ դնելը և վաշխատուժից փող պարտք վերցնելը գյուղացիների քայքայման միայն առաջին քայլերն էին: Հետագայում պարտքերը աճում էին, տոկոսները բազմապատկվում, ապառիճները աճում էին, և կյանքը դառնում էր բոլորովին անտանելի: Այս վիճակից դուրս գալու համար գյուղացին սկսում էր աշխատել զիջելու ցերեկ, դրսից աշխատանք էր վերցնում, ընտանիքի անդամներին ուղարկում էր վաստակի և այլն: Սակայն այս բոլոր միջոցները նրան փրկում էին միայն ժամանակավորապես և սովորաբար գործը վերջանում էր նրանով, որ քոխվան և հարկահավաքները խլում էին նրա վերջին անասունը, տնային կահ-կարասիքը և, այսպիսով, հասցնում լրիվ քայքայման:

Այդ եզրափակիչ պրոցեսի ծանր պատկերը լավ է նկարագրել գյուղացիական կենցաղը հետազոտողներից մեկը՝ Ի. Գ.

նրիցեր: «Հարկերի և պարհակների գանձման պրոցեսը,—
դրում է նա,— ուղեկցում է մի շարք տխուր արարվածներով:
Այստեղ հարկահավաքները փոխադարձաբար հայհոյում են
գոռգոռացող ծերուկի հետ, որը նրանց մերկացնում է գերա-
գանձման մեջ, այնտեղ վայնասուն է բախճրացնում այրին,
որից ավագը խլում է պղնձի կաթսան՝ վաճառելու համար,
այստեղ ծեծում են գյուղացուն, որը համոզում է թե փող չու-
նի, իսկ կողքին, գոմից դուրս են բերում գրաված կովը. մերթ
լսվում է հարկահավաքներին ուղղված անեծքներ, որ նրանք
անարդարացի են բաժանել հարկերը, մերթ նրանց բարձրա-
ձայն մերկացնում են շարաշահումների մեջ, մերթ, վերջա-
պես, աղաչում են նրանց՝ խնայել կամ խնդրում երկարաձեռն
որևէ անդորրագրային գրքի և հաշվեմատյանի բացակայու-
թյունը բնակչության անգրագիտության պայմաններում, ան-
տարակույս, հեշտ առիթ է տալիս շարաշահումներ անելու
այն ընտրյալ ցեղերի ու տնօրենների կողմից, որոնց համար
հարկերի հավաքումը որոշակի տոն էր»¹:

Համայնական կարգի ողբերգությունը, ի միջի այլոց, այն
էր, որ բանի դեռ հողը հողաբաժանման ցուցակով հաշվում
էր գյուղացու վրա, վերջինս պարտավոր էր կրել պարհակ-
ների բոլոր տեսակները: Գյուղացին կարող էր այն գրավ
դնել, վաճառել, գյուղում շունենալով ոչ մի բան, բացի կի-
սախարիսուղ խրճիթից և կիսաքաղց ընտանիքից, իսկ ինքը
գտնվի քաղաքում, բայց միևնույն է, ճա պարտավոր էր հար-
կերը վճարել այնքան ժամանակ, քանի դեռ հողի նոր բա-
ժանում չի կատարվել և նա չի հանվել հարկային դասից: Իս-
կապես ասած, հենց դրանումն էր Վ. Ի. Լենինի արտահայ-
տությունը, համայնքի վնասակար լինելը գյուղացիական
չբավորություն համար:

Այժմ քննարկենք հարցի երկրորդ կողմը՝ հարկերի և
պարհակների ավելացումը անհամաչափ էր գյուղացու եկա-
մտի աճման հետ (տե՛ս էջ III):

Բերված թվերը ցույց են տալիս, որ հետոեֆորմյան
ժամանակաշրջանի 44 տարվա ընթացքում բնակչության մեկ

¹ Материалы, том II, часть II, стр. 212—213.

շնչին ընկնող հացահատիկային կուլտուրաների արտա-
դրանքը կրճատվել էր ավելի քան կիսով չափ, ձիերը՝ 3 ան-
գամ, խոշոր եղջերավոր անասունը՝ 42 տոկոսով, մանր եղ-
ջերավոր անասունը՝ 40 տոկոսով, բամբակի և խաղողի ար-
տադրութունը մնացել էր նախկին մակարդակի վրա, իսկ
պետական հարկերը այդ ժամանակամիջոցում ավելացել էր
47 տոկոսով:

Բայց այս դեռ բոլորը չէ: Բանն այն է, որ մենք այստեղ
վերցրել ենք միայն այն հարկերը, որ դանձվում էր պետու-
թյան կողմից, մինչդեռ մուքադարական, թիուլային և մա-
սամբ պետական-մուքադարական գյուղերի գյուղացիները
բնական և դրամական պարհակներ էին կատարում հիմ-
նականում իրենց հողատերերի համար, պետութայնը վճա-
րելով միայն աննշան հողային հարկ և զինվորական հարկ
(մուսուլմանները): Եթե վերանանք տերերի կողմից տիրա-
կան գյուղացիների շահագործման շափից և Ֆրանց հողերը
փոխադրենք բահրա վճարելով, ապա վերևում բերված ընդ-
հանուր հարկերի գումարը կավելանա մոտավորապես մեկ
երրորդով: Այսպես, օրինակ, արխիվային նյութերի տվյալ-
ներով հարկման ենթակա պետական հողերի քանակը 1908
թվականին կազմում էր 1073325 դեսյատին, նրանց ընդ-
հանուր եկամտաբերութունը սահմանվում էր 6052144 ռուբ-
լի գումարով, իսկ պետական բահրային հարկերի շափը՝
598217 ռուբլի գումարով: Նույն թվականին մասնատիրա-
կան հողերի քանակը հավասար էր 340980 դեսյատինի, իսկ
նրա եկամտաբերութունը սահմանվել էր 2814592 ռուբլի:
Բահրան հարկի փոխադրելու ժամանակ հարկերի բաժինը
մասնատիրական հողերի ընդհանուր եկամտի մեջ կազմում
էր 279207 ռուբլի, մինչդեռ պետութունը հողային հարկ էր
հավաքում 17638 ռուբլի գումարով:

Այդ գումարների տարբերութունը կկազմի 261574 ռուբ-
լի և պետական հարկերի ընդհանուր գումարը կավելանա
30,4 տոկոսով:

Այդ, իհարկե, չի փոխի աղյուսակում բերված հարա-
բերակցութունը, բայց զգալի շափով կավելացնի բնակչու-
թյան մեկ շնչին ընկնող հարկերի շափը:

Գյուղատնտեսության նիւնական ճյուղերի և պետական հարկերի անասնը

Տարիներ	Կազմակերպություն																		
	Կազմակերպություն																		
1870	14765,7	33,7	39,6	8,7	274,7	61,6	688,3	150,0	276,9	052	994,5	2,2	445,7	548,0	1,24				
1914	16777,7	16,4	29,0	2,8	444,6	43,3	1009,6	98,5	496,5	048	291,3	2,8	1025,4	1581,6	1,53				

1. 1870 թվականի հաշվետու տվյալներ չլինելու պատճառով վերջին և նր 1867 թվականի հարկերի գումարը
 2. Բնակչության և հարկերի քանակի թվերն իրենց մեջ ներառում են թե՛ բաղադրված, և թե՛ գյուղական սեկտորը,
 նկատի ունենալով, որ բաժանված տվյալներ չկան:

Հարկերի արտակարգ ավելացման մասին բազմաթիվ անգամ իրենց հաշվետվությունների մեջ գրել են տեղամասերի պրիստավները և Երևանի նահանգի գավառապետները: «Ազգաբնակչության աճման հետ համաշափորեն ավելացել էին նաև նրա պահանջմունքները, զգալի շափով ավելացել էին նաև պետական հարկերը և հասարակական ծախսերը, բայց պիտանի հողերը և ոռոգելի ջրերը, որը կազմում է նրա գոյության միակ աղբյուրը, մնացել են նույն քանակով, որ պիսին գոյություն ուներ 50—60 տարի առաջ»¹:

Հարկերի ավելացումը ազգաբնակչության աճման հետ մեկտեղ այն ժամանակի գյուղատնտեսական հետամնաց տեխնիկայի պայմաններում հողի բարբարոսական շահագործման ու ուժասպառման հիմնական պատճառ ծառայեցին: Փաստաթղթերից մեկում կարդում ենք. «Գավառի բնակչությունը Պարսկաստանից և Թուրքիայից 1826—1850 թվականների գաղթելու ժամանակից ավելի քան եռապատկվել է, իսկ հողաբաժինը մնացել է նախկինը, ահա ինչ պատճառով էլ բնակչությունը հարկադրված է համարյա ամեն տարի հացահատիկ ցանել միևնույն հողի վրա, որը, այսպիսով, ուժասպառ է լինում առանց որևէ պարարտացման, լավ բերք չի տալիս»²:

Ցարական կառավարությունը տարեցտարի առանձնապես ավելացնում էր զեմստվային զանձումները, որոնք ծախսվում էին ուռճացած վարչական-ոստիկանական ապարատը պահպանելու համար և ծառայում էին որպես աշխատավոր մասսաների շահագործումն ու ժեղացնելու միջոց: Բնորոշ է, որ 1864 թվականի զեմստվային ռեֆորմը շտարածվեց Անդրկովկասի և Հայաստանի վրա, որտեղ ոչ մի զեմստվային գործունեություն երբեք գոյություն չի ունեցել, մինչդեռ զեմստվային հարկերը և պարհակները տարեցտարի ավելանում էին: Եթե 1866 թվականին գյուղացիներից զանձված զեմստվային հարկերը կազմում էին 257 հազար ռուբլի, ապա 1914 թվականին այդ գումարը հասավ 526815 ռուբ-

¹ Հայկական ՍՍՌ ՊԿԱ, ֆ. 102, գ. 840, ք. 43:

² Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 102, գ. 840, ք. 5:

լու Իսկ ինչի՞ վրա էին ծախսվում ղեմստվային պարհակները: էջմիածնի գավառի ղեմստվային ծախսերի 1883—1886 թվականների նախահաշիվը ցույց է տալիս ծախսերի հետեյալ տեսակները.

1 Փոստային ձիերի, սայլակների և փոստի ուղեկցորդների պահպանում:

2 Ձեմստվային պահակութայան՝ դիստանցիաների պետերի, ուրյադնիկների ու հեծյալների պահպանում:

3 Վերակացունների և նրանց օգնականների պահպանում:

4 Էտապային շենքերի վարձման և բանտարկյալների, ինչպես նաև նրանց շղթայակապելու և շղթաները բաց անելու պահպանման վրա:

5 Տեղական ջոկատների համար շենքերի վարձում, նրանց տաքացում և անցնող ջոկատների համար կերակրի պատրաստում:

6 Ձեմստվային պահակակետերը սարքին պահելու վրա:

7 Գավառային ոստիկանակաճ վարչութայն և հաշտարար բաժնի համար շենքեր վարձելու վրա:

Ահա ղեմստվային գանձումների ծախսերի ոչ լրիվ թվարկումը: Բացի նշված հոդվածներից, ղեմստվային գանձումների մի մասը ծախսվում է պետական ապարատի նահանգային մարմինները պահպանելու վրա:

Պատկերը լրիվ լինելու համար անհրաժեշտ է առանձնապես կանգ առնել այսպես կոչված հասարակական և բնական պարհակների վրա, որոնք պետական ապարատի էթանացման և աշխատավոր մասսաների լրացուցիչ շահագործման միջոց էին:

Հասարակական վճարումները կատարվում էին անկախ պետական հարկերի, ղեմստվային գանձումների, հողային ու զինվորական հարկերի և բնական-դրամական պարհակների շափից, որոնք գյուղացիները կատարում էին հողատիրոջ օգտին: Դրանք, այդ բոլորից դուրս, հատուկ գանձումներ էին, որոնք պետք է ծածկեին մի կողմից՝ գյուղացիական կառավարչութայն ծախսերը և, մյուս կողմից՝ գյուղական կառավարչութայն մեջ մտնող առանձին գյուղերի ծախսերը:

Անհրաժեշտ է նկատել, որ համախնական պարհակները,

հատկապես, ավելացան հետոնֆորմյան ժամանակաշրջանում՝ կապված հողաշինարարական աշխատանքների և տեղական կառավարչության ապարատի ուժացման հետ: Այդ պարհակները գնում էին գյուղական կառավարչությունների պահպանման, գյուղական ավագի և առանձին գյուղերում եղած նրա օգնականների աշխատավարձին, գրագիրներին, հատկահավաքներին, միրաբներին, ջուլարներին, քահանաներին վճարելու համար, եկեղեցիների պահպանման, սայլեր և հեծնելու ձիեր մատակարարողներին, հասարակական հովիվներին վճարելու համար և այլն:

Ակնառու լինելու համար բերենք գյուղական մեկ կառավարչության նախահաշիվը.

1. Ալեքսանդրապոլի գավառի, Արթիկի գյուղական հասարակության (1913 թվականի) նախահաշիվը: Ամբողջ հասարակության կարիքներին՝ 457 ուրլի 65 կոպեկ, հողաշահման փող՝ 197 ուրլի 12 կոպեկ, պաշտոնական անձերի պահպանում՝ 43 ուրլի 26 կոպեկ, կատարածուններին՝ 40 ուրլի, հարկահավաքներին՝ 30 ուրլի, պահակներին՝ 162 ուրլի, ջուլարներին՝ 15 ուրլի 62 կոպեկ, հավատարմատարներին՝ 62 ուրլի 48 կոպեկ, աղքատներ փոքրոք բանվորների համար՝ 91 ուրլի, մեկուսացված կետերի պահակներին՝ 30 ուրլի, անասնաբուժական աստիճանավորի բնակարանի վարձ և տաքացման՝ 26 ուրլի 75 կոպեկ, ձիատերերին՝ 28 ուրլի 80 կոպեկ, հիվանդանոցի վարձ՝ 7 ուրլի, Կիպչախի վանքի օգտին՝ 151 ուրլի 80 կոպեկ, հող շահող բանվորներին՝ 7 ուրլի 03 կոպեկ, արոտատեղի համար՝ 171 ուրլի 82 կոպեկ, այլ ծախսեր՝ 50 ուրլի: Ընդամենը հասարակական վճարումներ՝ 3402 ուրլի 34 կոպեկ¹:

Այժմ մեկ գյուղական հասարակության օրինակով ցույց տանք հասարակական վճարումների շահիք, այն պարհակների բոլոր տեսակների և հարկերի շահիք ընդհանուր գումարի մեջ, որ ընկնում է բնակչության մեկ ծխին (տե՛ս էջ 115)²:

¹ Տե՛ս Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 91, դ. 188, թ. 101—104:

² Գյուղական հասարակությունը մի քանի գյուղերի վարչական միավորումն է (Մ. Սգ.):

Բերված աղյուսակը ցույց է տալիս հասարակական վճարումների գումարի խիստ մեծ շափը: Այդ գանձումները ոչ մի տեղ և երբեք չեն հետազոտվել. հետազոտողները, սովորաբար, ուսումնասիրելով հարկերի հարցը, բավարարվել են պետական և զեմատվային պարհակներին վերաբերող տվյալներով, մինչդեռ հասարակական գանձումները նկատի ունենալով, հարկային ճնշումը համարյա կրկնապատկվում է:

Թվերը, այնուհետև, ցույց են տալիս, որ հասարակական վճարումները բաշխելու ժամանակ գյուղական կառավարչությունը հաշվի էր առնում յուրաքանչյուր գյուղի տնտեսական վիճակը, այդ պատճառով էլ, ինչպես հասարակական գանձումների տեսակարար կշիռը՝ պարհակների բոլոր տեսակների ընդհանուր գումարի մեջ, այնպես էլ մեկ ծխին ընկնող պարհակների շափը տարբեր գյուղերում տարբեր էին: Իսկ գյուղի ներսում գանձումների բոլոր տեսակների բաշխումը կատարվում էր գյուղական ժողովի քննարկմամբ¹, ըստ որում կապիտալիստական հարաբերությունների զարգացման համեմատ գյուղական ժողովներում ուժեղների ազդեցությունը աստիճանաբար մեծանում էր և հարկային ծանրությունը փոխադրվում էր չբավորության վրա:

Մանր բեռով գյուղացիների վրա էր ընկնում նաև գանձարանի օգտին կատարվող զանազան բնական պարհակերը: Այդ պարհակները Հայաստանում գոյություն ունեին ինչպես մինչև նրա միացումը Ռուսաստանին, այնպես էլ մինչոսֆորմյան ժամանակաշրջանում, բայց հետոսֆորմյան ժամանակաշրջանում դրանք շափազանց աճեցին: Մեր ձեռքի տակ շատ նյութեր չկան, որոնք արտացոլելին իրերի իսկական վիճակը այդ ասպարեզում: Սակայն արխիվից մեր հանած թվական տվյալները լրիվ շափով բնութագրում են այդ պարհակների ծանրության աստիճանը էջմիածնի գաղափարում:

¹ «Պետական և հասարակական գանձումների բաշխումը, գրում է էջմիածնի գավառապետը, բաժանվում է միատեսակ... ըստ համփաշարերի, այսինքն ըստ սենեցվածքի կամ ըստ հողաբաժնի քանակի, իսկ գավառի հարթավայրային տաք գոտում՝ ըստ ջրի քանակի, որ ստանում են ցանքերը ջրելու համար: Իսկ քոչվոր գյուղացիների մոտ՝ ըստ անասունների քանակի...»: Տե՛ս Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 102, գ. 712, ք. 7:

էշմիածնի գավառը մտնում է Երևանի նահանգի մեջ և այդ պատճառով, ուսումնասիրելով կոնկրետ այդ հարցը մեկ գավառի մասշտաբով, մենք հեշտ կերպով կարող ենք պատկերացնել իրերի վիճակը ամբողջ նահանգում:

Էշմիածնի գավառապետի 1870 թվականի հաշվետվությունից հետևում է, որ տարվա ընթացքում գյուղացիները, գանձարանի տրամադրության տակ էին դնում 235 սալ, փոխադրում էին 500 բեռ և զանազան հանձնարարություններ կատարելու համար տալիս էին 2650 մարդ¹: Իսկ ինչպե՞ս էր դրությունը հետագայում, հետոեֆորմյան ժամանակաշրջանում: Ամենից առաջ տվյալները բերենք ամբողջ գավառի մասշտաբով, որոնք ցույց են տալիս բնական պարհակների անկասկածելի աճումը (տե՛ս էջ 118):

Առանձնապես խիստ տուժում էին այն գյուղական հասարակությունները, որոնք տեղավորված էին խճուղային հիմնական ճանապարհների և հանգուցային կետերի վրա: Վերևում ասածը հաստատելու համար բերենք հետևյալ տրվյալները:

Գյուղական 8 հասարակությունների բնական պարհակները

Գյուղական հասարակություններ	Փուլբեր-ներ և սայ-լեր	Հեծնելու ձիեր	Բանող կենդանի-ներ	Բենավող կենդանի-ներ	Մխեր
Աշտարակի	24	115	393		1646
Նղվարդի	13	131	392		1426
Փարբու	19	36	399		1203
Վաղարշապատի	142	192	—		—
Ղզլ-Քամուրի	147	60	1600		
Հայթաղի	55	121	4596	7	764
Քալեֆի	9	57	1316		1316
Բաշ-Ապարանի	54	41	481		841

¹ Տե՛ս նույն տեղը, դ. 299, թ. 29:

Բնական պարհակները էջմիածնի զավառում¹

Տարիներ	Սուլ	Բնակիչ անտուրն	Ձիւր	Նժույգներ	Աշխատող
1870	285	500	—	—	2650
1880	1605	154	215	—	1266
1890	17428	100	358	266	42763
1900	1274	67	815	—	4374
1913	916	7	880	—	10204

Բացի նշված բնական պարհակներից, բնակչութունը կատարում էր նաև բնակարանային պարհակ, բայց մենք այդ մասին ունենք աղքատիկ տեղեկութուններ, ուստի այդ հարցին չենք անդրադառնում:

Ամբողջ ասածից հետևում է, որ Հայաստանում, գաղութային ճնշման պատճառով, հարկերը և պարհակները ծանր բեռ էին գյուղական բնակչության համար, և նրանց աճումը, որ զուգորդվում էր երկրի տնտեսական անկման հետ, հասցրեց շունեոր գյուղացիների քայքայման արագացմանը և նրանց հողերի կենտրոնացմանը ունեորների ձեռքին: Պարհակները սկսեցին առանձնապես ավելանալ 1900 թվականի հունիսի 12-ի որոշման համաձայն, դանձարանի օգտին գյուղացիներից դանձվող ծխային պարհակը փոխարինվեց պիտական բահրային պարհակի: Եվ այդ այն ժամանակ, երբ գյուղացիները իրենց հողի հասարակ օգտագործողներն էին և ոչ թե սեփականատերերը, և երբ նրանց հողարածինները դեռևս հայտնի չէին և չէին ամրացվել իրենց:

Նահանգային գրասենյակի հաշվումներով դա բերում էր գյուղացիական տնտեսութունների հարկերի նորմալների նոր բարձրացում՝ մոտավորապես 38—50 տոկոսով:

¹ Տե՛ս Հայկական ՍՍԻ ՊԿԱ, ֆ. 102, գ. 299, ք. 290, գ. 421, ք. 48, գ. 751, ք. 22—25, գ. 983, հաշվետվութուն, գ. 1267:

Այդ նորմաները, ըստ գավառի բաշխման, ցուցակներ կազմելու ժամանակ որոշ փոփոխութիւններ կենթարկվեցին պակասեցնելու իմաստով, բայց ամբողջապես վերցրած զգալի չափով բարձր էին նախկին ծխային պարհակներից:

Պետական բահրա տուրքի և հողային հարկի ընդհանուր գումարի բաշխումը հարկային տեղամասերի միջեկատարվում էր նահանգի պետական պալատում, ելնելով ընդհանուր եկամտաբերութիւնից, իսկ տեղերում, նրանց բաշխման ժամանակ, ստացվում էր տարբեր տոկոսային հարբերութիւն: Տվյալներից երևում է, որ պետական բահրա հարկը կազմում էր. էջմիածնի գավառում՝ եկամտի 10,39, Ալեքսանդրապոլինը՝ 8,94, Շարուր-Պարալազյազինը՝ 10,39, Սուրմալուինը՝ 9,93, Նոր Բայազետինը՝ 8,96, Զանգեզուրինը՝ 10,88 և Երևանի գավառինը՝ 10,15 տոկոս: Նույնպիսի տարբերութիւն ստացվում է, երբ մենք բացառում ենք հողային հարկի գումարը տարբեր գավառներում, ելնելով նրանց հողերի եկամտաբերութիւնից: Քանի որ զեմստվային հարկը դանձվում էր պետական հողի վրա ապրող գյուղացիներից, բահրատուրքի մեկ ուրբուց 57 կոպեկի չափով, իսկ մասնատիրական գյուղերի գյուղացիներից հողային հարկի մեկ ուրբուց՝ 4 ուրբ. 50 կոպեկի չափով, ապա առաջինների տոկոսային տարբերութիւնը առաջ էր բերում երկրորդների տոկոսային տարբերութիւն: Արդունքը լինում էր այն, որ շատ բահրատուրք և շատ հողային հարկ վճարող գավառը նույնպես վճարում է զեմստվային ավելի հարկ: Միայն այդ արդեն ասում էր հարկի անհամաչափ բաշխման մասին:

Եթե բահրատուրքը և հողային հարկը գումարենք, ապա պարզվում է, որ հարկերը կազմում են զուտ եկամտի 15,68 տոկոսը: Իսկ իրականում գյուղացիները վճարում էին զգալի չափով ավելի: Այդ բանը տպացուցելու համար քննարկենք եկամտի բաղկացուցիչ մասերը և նրանց չափի մեթոդը:

Պետական պալատի պաշտոնական տվյալներով Երևանի նահանգի բնակավայրերում կար 1179760 դեսյատին պիտանի հող, այդ թվում՝ արքունի՝ 861131 դեսյատին, մուլքադարական՝ 222206, արքունի-մուլքադարական՝ 56837, թիուլ-մուլքադարական՝ 13945, թիուլ-մուլքադարական՝ 662,

եկեղեցա-վանքապատկան՝ 10692, արքունի-վանքապատկան՝ 10692 և գյուղացիական-սեփականատիրական՝ 5774 դեսյատին հող: Նույն աղյուսակից երևում է, որ 1908 թվականին հարկման ենթակա էր՝ 1483623 դեսյատին, այդ թվում արքունի՝ 891073 և մասնատիրական՝ 410298 դեսյատին հող: 305863 դեսյատին հողի տարբերությունը բացատրվում էր նրանով, որ հարկման ենթակա քանակի մեջ մտցրել էին պիտանի և անպետք, բնակելի և անբնակ հողեր: Հարկման ենթարկվում էին, ինչպես այդ ցույց են տալիս հարկերի բաշխման ցուցակները, ջրովի և անջրդի հողերը, կալվածքային և բանջարանոցային հողերը, խաղողի պտղատու և թթենի այգիները, ձմեռային-ամառային արոտները, նախրատափի հողերը և այլն:

Սակայն գյուղացիներին բաժանված հողն էլ լրիվ չի կարելի մտցնել հարկման ենթակա հողերի մեջ, քանի որ այդ հողերի մի մասը այս կամ այն պատճառով գտնվում էին տնտեսական շրջանառությունից դուրս: Այդ մասին վկայում է այն փաստը, որ բոլոր կուլտուրաների տարեկան ցանքսերի և այգիների տարածությունը Երևանի նահանգում կազմում էին ոչ ավելի, քան 400 հազար դեսյատին:

Այնուհետև, հարկի շափը որոշելիս ցարական կառավարության աստիճանավորները ամեն կերպ աշխատում էին տարբեր հողերի եկամտաբերությունը ցույց տալ բարձրացված նորմայով: Այսպես, օրինակ, առաջին կատեգորիայի վարելահողի մեկ դեսյատինի միջին զուտ եկամտաբերությունը 1907 թվականին սահմանվել էր. էջմիածնի գավառին՝ 55 ռուբլի, Սուրմալույին՝ 37 և Շարուր-Պարալագյալին՝ 59 ռուբլի, իսկ խաղողի այգիների զուտ եկամուտը համապատասխանորեն՝ 100, 60 և 76 ռուբլի այն ժամանակ, երբ, փաստացի տվյալների համաձայն, հաճախ, նույնիսկ համախառն եկամուտը շէր հասնում այդ գումարին:

Այնուհետև, պետք է նշել, որ եկամտաբերությունը հաշվելու ժամանակ հողի մշակման ծախսերը բացահայտորեն նվազեցվել էին: Ակնառու դարձնելու համար բերենք տրվյալներ Ալեքսանդրապոլի գավառի վերաբերյալ (տե՛ս էջ 122):

Աղյուսակը ցույց է տալիս, որ ցարական կառավարողները բացահայտորեն ձգտում էին պակասեցնել հողի մշակման ծախսերը: Ամենից առնչ նշենք, որ ծախսերի կազմի մեջ, նախ, շնն մտել աշխատանքի այնպիսի տեսակներ, ինչպես ցանք, քաղհան, ցանքերի խնամք և այլն, երկրորդ, մեկ դեպքատին հողը վարելու համար, որը մինչ այդ մի տարի մնացել է խոպան, պահանջվում է երեք օր առաջին անգամ վարելու համար և 2 օր երկրորդ վարի համար, ըստ որում առաջին անգամ գործադրվել է գութան, որը բաշխման ցուցակներ կազմողների տվյալներով լծում էին 8—12 զույգ հզ և ամեն օր նվազագույնը պահանջում էր երեք աշխատող: Իսկ երկրորդ վարի ժամանակ պահանջվում էր 2—4 զույգ հզ և օրական 2 աշխատող:

Եթե մեկ աշխատողի օրական վարձը սահմանենք 70 կոպեկ, ինչպես այդ նույն տարին հաշվել էին Ջանգեզուրի գավառում, ապա այս դեպքում ևս միայն աշխատուժի արժեքը կարտահայտվի $13 \times 70 = 9$ ռուբլի 20 կոպեկ գումարով: Ուրեմն, 13 զույգ հզների մեկ օրվա աշխատանքի վճարը (3×10 և 2×3) և գործիքների մաշվածության համար մնում է 2 ռուբլի 80 կոպեկ, որը, իհարկե, անիմաստ է: Միծաղելի է նաև վարի երկրորդ տարվա համար այդ գումարի կրճատումը կիսով չափ: Նույն բանը վերաբերում է աշխատանքի մյուս տեսակներին: Հնձված հացահատիկը մեկ հեկտար դաշտից 4—5 կմ հեռավորության վրա սայրով փոխադրելու համար պահանջվում է մեկ աշխատողի առնվազն երեք օրվա աշխատանք և օրական երկու զույգ հզ, մինչդեռ դրա համար նախատեսված է ընդամենը 1 ռուբլի 50 կոպեկ: Այսպիսով, տարակույս չկա, որ ցարական կառավարողները հարկերը հաշվելու ժամանակ դիտավորյալ կերպով մշակման ծախսերը նվազեցրել էին, որպեսզի եկամտաբերությանը արհեստականորեն ավելացնեն և դրա հիման վրա բարձրացնեն հարկման նորման:

Եթե բացառենք այն բոլոր հողերը, որոնք չէին մտնում գյուղացիական հողաբաժնի մեջ, գյուղացիական հողերի ընդհանուր քանակից վերցնենք միայն փաստորեն օգտագործվող մասը, ճշգրտենք հողադաշտերի միջին զուտ եկա-

**Մեկ դեպատին հողի մշակման ծախսերը Ալեքսանդրապոլի գավառում
(ապր. և կոպ.)**

Աշխատանք- անվանում	1-ին գոտի		2-րդ գոտի		3-րդ գոտի		4-րդ գոտի	
	1-ին ասորի	2-րդ ասորի	1-ին ասորի	2-րդ ասորի	1-ին ասորի	2-րդ ասորի	1-ին ասորի	2-րդ ասորի
Վար և տա- փան	12,0	6,0	12,0	6,0	12,0	6,0	12,0	6,0
Հնձել, խուրձ կապել և դի- ղել	5,4	4,0	3,50	2,80	3,50	2,80	3,0	2,40
Տեղափոխել	1,50	1,20	1,0	0,80	1,50	1,0	1,50	1,0
Կալսել և մաք- րել	4,0	3,0	3,0	2,0	3,0	2,0	3,0	2,0
Յորհնի և դա- րու և բեկու տարվա սերմ	9,30	9,30	9,30	9,30	7,60	7,60	5,40	5,40

մտաբերությունը, երկրի փաստացի վիճակի հիման վրա
ցույց տանք հողի մշակման իսկական ծախսերը և կենտրո-
նացված հարկերին ավելացնենք տեղական, այսպես կոչված
հասարակական գանձումները, ապա հարկերի ու պարհակ-
ների վերոհիշյալ բաժինը գյուղացու զուտ եկամտի մեջ կե-
ռապատկվի:

Այժմ քննարկենք գյուղական առանձին համայնքների, իսկ
ապա նաև չքավոր, միջակ և ունևոր գյուղացու բյուջեն:

Քանի որ գյուղացիական բյուջեների վերաբերյալ զեմստ-
վային վիճակագրական տվյալները բացակայում են, ապա
մենք ի վիճակի չենք տալ այդ հարցի մանրամասն և ավելի
կոնկրետ վերլուծումը: Հայաստանում գոյություն ունեւ մի
շարք աղքատացած և շունևոր գյուղեր: Այդ գյուղերից յուրա-
քանչյուրում, իհարկե, կային թե՛ միջակ, և թե՛ ունևոր տըն-
տեսություններ, սակայն այդ հանգամանքը միայն ասում է
այն մասին, որ աղքատացած գյուղերում գյուղացիության
չքավոր մասի վիճակը ավելի վատ էր, քան մյուս գյուղե-

յում: **Յ. Մարկոսը**, որը 80-ական թվականներին ուսումնասիրել է Երևանի գավառի գյուղացիների վիճակը (որպես օրինակ բերում է 9 գյուղ), որտեղ բնակչության մեկ շնչի ծախսերը 13 ուրբլով դերադանցում են նրա եկամուտներին: Բերենք նրա հաշվարկումները:

Ընդամենը 9 գյուղ, երկու սեռի շնչերի թիվը 7654 մարդ է, վարելահողի ու խոտհարքի քանակը 9270 դեսյատին, բնակչության մեկ շնչին ընկնում է 1,29 դեսյատին, այդ թվում պիտանի տարածությունը՝ 1,13 դեսյատին: Հողի այդ քանակից ցորեն ցանված էր 0,85 դեսյատին և դարի՝ 0,28:

Բնակչության մեկ շնչի եկամուտը

1 Մեկ դեսյատին հողում ցանվող հացահատիկի քանակը.

ա ցորեն 13 փութ,
բ դարի 13 փութ:

2 Բերքատվությունը

ա ցորեն 4,5 փութ,
բ դարի 5,0 փութ:

3 Շնչապատկան հողից ստացվող բերքը.

ա ցորեն 49,73 փութ,
բ դարի 21 փութ:

4 Մեկ փթի գինը

ա ցորեն 55 կոպեկ,
բ դարի 25 կոպեկ:

5 Բերքի արժեքը

ա ցորեն 27 ուրբ. 35 կոպ.
բ դարի 5 ուրբ.

Ընդամենը 32 ուրբ. 35 կոպ.

Նկատի ունենալով, որ հողը շորթորդ տարին հանգստանում է և կոտ միայն խոտ, որը արժև 5 ուրբլի, հողից ստացված տարեկան եկամուտը կլինի 25 ուրբլի 70 կոպեկ: Անտուեններից ստացած եկամուտը հավասար է 6 ուրբլի 09 կոպեկ:

Ընդամենը մեկ շնչին ընկնող եկամուտը հավասար է 31 ուրբլի 79 կոպեկի:

Բնակչության մեկ շնչի ծախսը

Նվազագույն սնունդը 27,5 զուլտոնիկ, սպիտակուցային նյութեր 13 գուլտոնիկ ճարպ և 1,25 ածխաջուր: Այս հիման վրա տարվա ընթացքում պահանջվում է 104, 54 գրվանքա սպիտակուցային նյութեր, 49, 43 գրվանքա ճարպ, 456, 25 ածխաջուր: Դրա համար հարկավոր է գործածել 26,14 փութ ցորեն, 33,75 գրվանքա կսվի յուղ և վուշի ձեթ:

Մաքուր ցորենի արժեքը 26,14 × 60 = 15 ուրբլի 68 կոպեկ:

Կովի 20,07 գրվանքա յուղի արժեքը՝ 4 ուրբլի 63 կոպեկ և 13,56 գրվանքա վուշի ձեթը՝ 1 ուրբլի 64 կոպեկ:

Աղի փութը արժև 30 կոպեկ: Ցորենի աղալը 26,14 փութը՝ 1 ուրբ. 01 կոպ.:

Լուսավորությունը՝ 50 կոպեկ

Օճառ 75 կոպեկ:

Հագուստի մաշվելը 7 ուրբ. 70 կոպ.:

Կես փութ պղնձե ամանեղեն 10 կոպ.:

Հովիվների պահելը 50 կոպ.:

Աշխատող անասունների պայտելը 60 կոպ.:

0,85 դես. ցորենի ցանելը 6 ուռը-
 03 կոպ...
 0,28 դես. գարի ցանելը 4,2 փութ
 1 ուռը. 05 կոպ...
 Հարկ 1 ուռը. 74 կոպ...
 Ընդամենը ծախսեր 44 ուռըլի
 75 կ...

Ծախսի գերազանցումը եկամտից՝ 12 ուռըլի 99 կոպեկ:
 Այստեղ Մարկովը վերցրել է գյուղացու նվազագույն
 ծախսերը, սակայն այդ դեպքում ևս բոլոր 9 գյուղերի ամ-
 բողջ միջին ծախսերը զգալի շափով գերազանցում են նրանց
 եկամուտներին: Այդ գերազանցումը 9 գյուղերի համար կազ-
 մում է 99425 ուռըլի 46 կոպեկ: Եթե նկատի ունենանք, որ 5
 տոկոս ունևոր գյուղացիների եկամուտները գերազանցում
 են ծախսերին միջին հաշվով 15 ուռըլով և 35 տոկոս միջակ
 գյուղացիության եկամուտը հավասար է նրանց ծախսին,
 ապա եկամտի նկատմամբ ծախսերի գերազանցումը, որը
 ամբողջովին ընկնում է 60 տոկոս մնացած շքավոր բնակ-
 չության վրա, կազմում է 105155 ուռըլի: Այդ դեպքում
 բնակչության մեկ շնչի ծախսը գերազանցում է նրա եկա-
 մտին 22 ուռըլի 90 կոպեկով: Այսպիսի վիճակը չի կարող
 շրջել մասն արտադրողների մասսայական քայքայում: Պա-
 տահական չէ, որ տարագնացությունը գլխավորապես հտ-
 տուկ է տնտեսապես շուևոր գյուղերին: Եվ այդ հասկանա-
 լի է, քանի որ ունևոր գյուղում քայքայվող գյուղացիները
 հիմնականում վարձվում են իրենց գյուղի հարստացած գյու-
 ղացիների մոտ: Այդ հարցը քննարկենք շերտավորված կեր-
 պով, այսինքն՝ վերցնենք ունևոր, միջակ և շքավոր ընտա-
 նիքի բյուջեները: Այդ ընտանիքների բյուջեն կազմել է Պար-
 վիցկին, որը 80-ական թվականներին ուսումնասիրել է Նոր
 Բայազետի գավառի գյուղացիության կենցաղը (տե՛ս
 էջ 125):

Բերված տվյալները չի կարելի լրիվ հավաստի համա-
 բել, քանի որ շքավոր ընտանիքի պահպանման ծախսերը
 բացահայտորեն նվազեցվել են, իսկ ունևոր ընտանիքի
 ծախսերը՝ արտասովոր չափազանցվել: «Կապիտալիզմի զար-
 դացումը Ռուսաստանում» Վ. Ի. Լենինի գրքում բերված

Նոր Բայազետի գավառի Ղալալի գյուղի գյուղացիական բնագրի բյուշեն

	Չքափոր	Միջակ	Ունեւոր	Ծանոթութիւն
Ենչի թիւը	5	6	9	
Հողի քանակը	4 դես., 496 կվ (հանձնում է վարձակալ- ման)	5 դես.	12 դես. 209	
Տնային անասուն		14 խոշ. եղ. 10 մանր եղջ.	24 խոշ. եղ. 240 մանր եղ.	
Արժեքը	—	738 ո.	4742 ո. 90 կ.	
Բնակ. պահ. շենք արժ.	10 ո.	100 ո.	2141 ո. 20 կ.	
Գյուղ. դորձիք.	—	77 ո. 20 կ.	281 ո. 20 կ.	ունեւորն
Տնային կահ.				ունեւորն
կար., ամանեղեն և այլն	10 ո.	179.50	355 ո. 70 կ.	3 զուլթան, 3 արոր, 3 սայլ, 1 հարկանի տուն քարից, 2 հարկանի տուն, 2 զոմ, հացատուն, չրաղաց, ձիթհանք և այլն
Մեկ աշխատող. ընկնող	—	1	3	
Միջին քանակը	—	1	3	
Հողի եկամուտը	40 ո.	260 ո. 90 կ.	848 ո. 05 կ.	
Անասուններից ստ. եկամուտը	—	56 ո. 75 կ.	411 ո.	
Այլ եկամուտներ	—	—	94 ո.	
Ընդամենը	40 ո.	317 ո. 65 կ.	1333 ո. 05 կ.	
Անաս. պահպ. և պայտում	—	71 ո. 36 կ.	375 ո. 90 կ.	
Գյուղ դորձիքն. նորոգում	—	9 ո.	35 ո.	
Բատրակ և հա- սարակ. հովիվ- ների պահպան. Հագուստ	—	29 ո. 80 կ.	143 ո. 78 կ.	
	ստանում է բանիվ.	օրավարձու —	194 ո. 20 կ.	
Կերակ. և խմել. չուսակ. և շե- սուց.	32 ո. 44 կ. 5 ո.	140 ո. 56 կ. 2.	472 ո. 08 կ. —	
Միայն հարկ	7 ո. 50 կ.	9 ո. 80 կ.	36 ո.	
Ընդամենը ծախ- սեր	44 ո. 94 կ.	259 ո. 96 կ.	1256 ո. 06 կ.	

տվյալներով, ամենաաղքատ ընտանիքի մեկ շնչին ընկնող սնունդը և անձնական պահանջմունքները կազմում էր 19 ուրլի 21 կոպեկ, իսկ ամենահարուստ ընտանիքին՝ 36 ուրլի 21 կոպեկ, իսկ Մարկովի կազմած բյուջեները ցույց են տալիս աղքատ ընտանիքի մեկ շնչի սնունդը և անձնական պահանջմունքները 7 ուրլի 49 կոպեկ և ունևոր ընտանիքին՝ 74 ուրլի 02 կոպեկ: Այս, իհարկե, նվազեցնում է մի կողմից՝ չքավոր ընտանիքի ծախսերի գերազանցման չափը նրա եկամուտներից և, մյուս կողմից՝ նվազեցնում է ունևոր ընտանիքի եկամտի չափը:

Սխալ է նաև չքավոր ընտանիքի ծախսերի թվում հապուստ և կոշիկ ցույց տալը: Բայց բերված բյուջեներում կա մի խիստ կարևոր մոմենտ, որի վրա չի կարելի ուշադրութուն չդարձնել: Դա այն է, որ չքավոր գյուղացիական ընտանիքի հարկը կազմում է բոլոր ծախսերի 16,7 տոկոսը և կլանում է նրա եկամուտների 18,7 տոկոսը, իսկ ունևոր գյուղացու ընտանիքի համար այն կազմում է ծախսային մասի 2,9 տոկոսը: Սա մի ավելորդ անգամ հաստատում է վ. Ի. Լենինի այն դրույթը, թե որքան ավելի ունևոր է գյուղացին, այնքան նրա ամբողջ ծախսի մեջ փոքր բաժին են կազմում հարկերը:

6. Կապիտալիստական վարձակալության զարգացումը

Նախորդ գլուխներից մեզ հայտնի դարձավ, որ հողատերերը իրենց հողերի մի մասը, յուրաքանչյուր ախշայից՝ 2 խալվար, թողնում էին իրենց տրամադրության տակ: Այնուհետև, հետազոտությունը ցույց տվեց, որ, օգտագործելով իրենց իշխող դրույթունը, նրանք հնարավոր բոլոր միջոցներով ավելացնում էին այդ հողի չափը: Այդ առանձնապես նկատվում էր Անդրկովկասում գյուղացիների հողաշինարարության դեկրետ հրատարակելուց հետո: Հողատերերը հույս ունեին, որ գյուղացիներից խլած հողերը կճանաչվեն որպես իրենց սեփականութուն:

Սակայն Հայաստանում կալվածատերերը, որպես կանոն, իրենք գյուղատնտեսությամբ չէին զբաղվում: Նրանց անձ-

նական տիրապետման տակ թողնված հողերը մշակում էին կախյալ գյուղերի գյուղացիները, աշխատանքային պարհակի կտրգով:

Ռեֆորմից հետո գյուղացիների անձնական կախումը կալվածատերերից զգալի շափով փոփոխվել էր: Թեպետ բաժանված հողերը առաջիկայում ևս մինչև փրկագնումը չէր համարվում գյուղացիների սեփականությունը, նրանց անձնական ուղղակի կախումը ֆեոդալից դադարել էր: Գյուղացին մինչև իր հողարածնի լրիվ փրկագնելը, առաջվա նման պարտավոր էր հողատիրոջ համար բնական ու դրամական պարհակ կատարել, բայց աշխատանքային պարհակը, հիմնականում, վերացվել էր: Հողի կալվածատիրական մասի մշակումը չէր մտնում նրա պարտականություն մեջ: Ուստի այն կալվածատերերը, որոնք չէին ցանկանում անձամբ դբադվել տնտեսության կազմակերպումով, իրենց հողերը վարձակալական հիմունքներով զիջում էին մասնավոր անձանց կամ գյուղական համայնքներին: Նույն բանն էլ անում էր կառավարությունը պետական հողերի նկատմամբ: Դրա հետևանքով Հայաստանում առաջ եկավ վարձակալություն կրկնակի տեսակ: Ունեոր գյուղացիները իրենց տնտեսությունը փոխադրելով առևտրա-արդյունաբերական ռելսերի վրա, մի կողմից՝ վարձակալում էին տնտեսապես շունևոր գյուղացիների հողերը, գյուղացիներ, որոնք բավարար միջոցներ և աշխատանքային ուժ չունեին իրենց հողաբաժինները մշակելու համար, և, երկրորդ կողմից, խոշոր հողատերերի և պետական գերատեսչությունների հողերը, որոնք չէին զբաղվում տնտեսությունը վարելու գործով: Հողատերերը իրենց հողերը վարձակալման տալիս, նայած նրանց պտղավետությունը, ստանում էին մաքուր բերքի կեսից մինչև երկու երրորդը:

Մեզ համար այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ աշխատավճարումները դադարեցնելու շնորհիվ կալվածատիրական հողերը սկսեցին մշակել ունևոր գյուղացիները, որոնք իրենց տնտեսությունը վարում էին կապիտալիստական հիմունքներով: Այս լրացուցիչ գործոն ծառայից կապիտալիզմի

զարգացման ուղիով գյուղական համայնքի դասակարգային շերտավորումն ուժեղացնելու համար:

Հայաստանում բավականին ուժեղ շահով զարգացած էր նաև ենթավարձակալությունը: Ենթավարձակալման աղբյուրը հիմնականում պետական, տիրական հողերն էին: Իր ձեռքին կենտրոնացնելով մեծ քանակի հողամասեր, ցարական կառավարությունը դրանք տալիս էր վարձակալման մասնավոր անձանց և առանձին գյուղական համայնքներին:

80-ական թվականներին Երևանի գավառում պետական հողերի առավել խոշոր վարձակալներ էին Երևանի բնակիչ Ստեփան Եղիազարյանը, որը վարձակալել էր 533 դեսյատին, գեներալ-լեյտենանտ Կախանովը՝ 10022 դեսյատին, Ղամարյու գյուղի բնակիչ Տեր-Գրիգորյանը՝ 125 դեսյատին, Ախամզալու գյուղի բնակիչ Հումբաթ Քյալբալայ Զիալ օղլին, Հայրապետ Պողոսյանը և Խաչատուր Տեր-Պողոսյանը՝ 504 դեսյատին:

Ալեքսանդրապոլի գավառում կային. Դյուզբյանդի բնակիչ Միքայել Մաթևոսյանը՝ 300 դեսյատին, Ալեքսանդրապոլի բնակիչ Իվան Կապուտտովը՝ 242, Հովհաննես Նալբանդյանը՝ 584 դեսյատին և երկրորդ Գիլդիայի առևտրական Իսայ Խոյցևը՝ 600, Բողաքյանդ գյուղի բնակիչ Ղազար Քաջախյանը՝ 650, Նիկիտին գյուղի բնակիչ Վասիլի Ռուդոմեակինը՝ 819 դեսյատին¹:

Նոր Բայազետի գավառում կային. Ալուշալու գյուղի բնակիչ 233 դեսյատին, Ղարաղուա գյուղի բնակիչ Մուլա Հասան Աբդուլլա օղլին՝ 580, Օրդաքլու գյուղի բնակիչ Քադևո Մուրադյանը՝ 431, Աղբուլաղ գյուղի բնակիչ Իրզա Հասան օղլին՝ 138, Թոխլուչա գյուղի բնակիչ Քյալբալայի Հումբաթ Իբրահիմ օղլին՝ 394, Նորագյուղ գյուղի բնակիչ Հակոբ Ղազարյանը՝ 269, Նոր Բայազետ քաղաքի բնակիչ Մաթևոս Նիկողոսյանը՝ 1117 դեսյատին²: Նույն գավառի Զոտ գյուղի բնակիչ Զավադ Համո Աղա օղլին 1882 թվականին պետական հող էր վարձակալել 1148³:

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 133, գ. 1405 և 1410:

² Տե՛ս Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 133, գ. 1405:

³ Նույն տեղում, գ. 1538:

Շարուր-Գարալագյազի գավառում պալատական-խորհրդական Շանգիրեյը պետական հող վարձակալել էր 1950 դեպյատին, ննգիշա գյուղի բնակիչ Իսկանդյար Ռուստամ օղլին՝ 150 խալվար, Քաթիա գյուղի բնակիչ Բարաբեկ Հաջի Արաս Ալի բեկ օղլին՝ 1091 դեպյատին:

Այդ հողամասերը, որոնք վարձակալվել էին շատ շահավետ պայմաններում, տրվում էին հիմնականում խոշոր անասնատերերին և ունևոր գյուղացիներին, որոնք իրենց հերթին շահագործում էին տնտեսական տեսակետից շունևոր գյուղացիներին և բատրակներին: Բայց նրանց մեջ կային այնպիսի անձինք, որոնք գանձարանից վարձակալված հողերը դարձնում էին կապիտալիստական շահույթ ստանալու աղբյուր:

Բերենք Երկու օրինակ:

Արագդայանի տափաստանը 70-ական թվականներին տրվել էր գեներալ Ն. Ն. Կախանովին 65 տարվա ժամկետով վարձակալման: Վարձակալման պայմաններն էին. 6 արտոնյալ տարիներից հետո, առաջին 24 տարին դեպյատինը տարեկան 15 կոպեկ, դրանից հետո հաջորդած 10 տարվա ընթացքում վարձակալման վճարը պետք է հասներ մինչև 30 կոպեկի, հետագա 15 տարվա ընթացքում՝ մինչև 50 կոպեկ և մնացած 10 տարիներին՝ մինչև 80 կոպեկ դեպյատինը: Ժամկետը ավարտվելուց հետո հողը բոլոր կառուցումների հետ պետք է դառնար գանձարանի լրիվ սեփականություն:

Գեներալ Կախանովը կառուցեց Արագդայանի ջրանցքը՝ դրա համար ծախսելով 200 հազար ռուբլի, որից հետո հողի կես մասի օգտագործման իրավունքը 250000 ռուբլով նա վաճառեց հայ կալվածատեր Ամիրխանյանին, ուս կալվածատերեր Շերեմետևին, Բորբինսկուն և Զուբկովին, իսկ մյուս կեսը թողեց իրեն: Այդ բոլոր հողամասերը այնուհետև տրվում էին գյուղական համայնքներին և առանձին գյուղացիների, որոնք մշակելով այն, կալվածատիրոջը տալիս էին բոլոր կուլտուրաների մաքուր բերքի կեսը և ավելին¹:

¹ См. Сагатов, Экономич. очерки Эрив. губернии и озеро Гогча, Тифлис, 1879 г., стр. 12.

Ոչ պակաս բնորոշ օրինակ է Նախիջևանի նախկին գա-
վառապետ, Ղրիմյան կալվածատեր Շանգիրեյի գործունեու-
թյունը: 1872 թվականին Շանգիրեյը գանձարանից վարձա-
կալից՝ 24 տարվա ժամկետով մոտ 2000 դեսյատին ընդհա-
նուր տարածութուն ունեցող «ղռեր» կոչված հողային մաս-
սիվը և անցկացրեց ոռոգման ջրանցք, ծախսելով այդ գործի
վրա բավականին մեծ գումար: Բայց ինքը՝ Շանգիրեյը
անձամբ տնտեսությամբ չէր զբաղվում և երբեք ոչ մի ցանք
չի ունեցել և հողը վարձակալման է տվել Փուսան, Թաղա-
քյանդ, Խամուխար, Քյարիմբեկլի և Այծորամ դյուղերի
բնակիչներին՝ ստանալով վերջիններից բերքի կեսը, իսկ
որոշ տեղերում բերքի մեկ երրորդը՝ յուրաքանչյուր կուլտու-
րայից: Հնդ որում Շանգիրեյը իր հաշվին պահում էր պա-
հակներ և ջուվարներ ջուրը բաշխելու և գործակատարներ՝
հողը բաշխելու ու բնակիչներից բերքի սահմանված մասը
հավաքելու համար: Իսկ բնակիչները, բացի կալվածատիրոջ
օգտին բերքի սահմանված բաժինը վճարելուց, պարտավոր
էին յուրաքանչյուր տարի մարտ ամսին որոշ քանակի բան-
վորներ առանձնացնել ջրանցքը մաքրելու համար:

Այս օրինակները ակներևորեն ապացուցում են նշված
կալվածատերերի ձեռնարկումների կապիտալիստական բնույ-
թը: Այն կալվածատերերը, որոնք վարձակալում էին պետա-
կան հողը, կառուցում ոռոգման ջրանցքներ և հայտնի վճա-
րով հողը տալիս էին ենթավարձակալներին, դրանով հենց
իրենց փողը դարձնում էին կապիտալ, կապիտալիստական
հիման վրա ուրիշի աշխատանքը շահագործելու աղբյուր:
Ճիշտ է, տվյալ դեպքում կալվածատերերը իրենք չէին զբաղ-
վում գյուղատնտեսական արտադրությամբ և, հետևապես,
շուկայի համար ապրանք չէին արտադրում, բայց այդ դրու-
թյունը չի փոխում: Կարևորն այն է, որ իրենց փողը ներդնե-
լի՞ ջրանցքի կառուցման վրա, նրանք դրանով իսկ գանձարա-
նից վարձակալած հողը դարձնում էին հավելյալ արժեքի
յուրացման աղբյուր: Չի կարելի մոռանալ, որ հիշյալ օրինակ-
ներում բերված կալվածատերերը, նախ, հողի մասնավոր սե-
փականատերեր չէին, հողը պատկանում էր գանձարանին, և,
երկրորդ, նրանց անցկացրած ջրանցքները բացառապես վար-

ձու աշխատանք կիրառելու արդյունք էին և, վերջապես, գյուղացիներին ստացվող իրենց բաժին բերքը վաճառում էին: Չի կարելի մոռանալ նաև այն հանգամանքը, որ այդ ջրանցքները պահվում էին պատրաստի վիճակում և նրանց ջրերը բաշխվում էին ենթավարձակալներին վարձու աշխատողների՝ ջուլարձների և գործակատարների միջոցով:

Վիճակը շի փոխում նաև այն հանգամանքը, որ ջրանցքի մարքումը կատարվում էր ենթավարձակալների միջոցներով, երբեմն էլ նրանց անձնական աշխատանքով: Վ. Ի. Անիխը ասում է, որ ժամանակակից կալվածատիրական տնտեսության տնտեսական կազմակերպումը կարող է լինել աշխատավճարային և կապիտալիստական և որ այդ երկու սիստեմը իրականություն մեջ հաճախ միահյուսվում են¹:

Վերջապես, վիճակը շի փոխում նաև կալվածատիրոջ յուրացրած հավելյալ արժեքի արտադրության ձևը, կալվածատերը արդյոք իր եկամուտը ստանում է Ֆերմեր-կապիտալիստից, որ իր տնտեսության մեջ վարձու աշխատանք է կիրառում, հենց անմիջական արտադրող գյուղացուց կամ թև գյուղական համախմբից, որ միայն միջնորդի դեր է խաղում գյուղացու և կալվածատիրոջ միջև: Մենք կարող ենք միայն ասել, որ եթե կալվածատիրոջ վարձակալած հողը տրվում է ենթավարձակալ՝ մասնատիրոջը և վերջինս այն մշակում է վարձու աշխատանքի միջոցով, ապա արտադրվող հավելյալ արժեքը բաժանվում է վարձակալի և ենթավարձակալի միջև, և նրանք երկուսն էլ կապիտալիստական ձեռնարկատերեր են, իսկ եթե այն տրվում է ենթավարձակալ՝ մասնատիրոջը (որը, ի միջի այլոց, հազվագյուտ երևույթ է) և նա հողը մշակում է իր անձնական աշխատանքով, ապա վերջինս մասամբ դառնում է վարձու բանվոր և արտադրվող հավելյալ արժեքի մի մասը յուրացնում է վարձակալ-կապիտալիստը: Իհարկե, տնտեսության կապիտալիստական սիստեմը ենթադրում է բանվորների անմիջական վարձում և հողի մշակումը հողատիրոջ գործիքներով (ինվենտարով),

¹ Տե՛ս Վ. Ի. Անիխ, կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում, Երկ., հ. III, էջ 227:

բայց այն ժամանակ, երբ մենք գործ ունենք կապիտալիստական պատրաստի մաքուր հարաբերությունների հետ:

Իսկ տվյալ դեպքում մենք գործ ունենք ֆեոդալիզմից կապիտալիզմին անցնելու հետ, և այդ անցման ժամանակաշրջանը չի կարող իր վրա չկրել անցյալի որոշ գրոշմ:

Հարցը ավելի կոնկրետ քննելով, կարելի է ասել, որ ենթավարձակալները, հազվագյուտ բացառությամբ, մասնավոր հողատերեր՝ ունևոր գյուղացիներն էին, որոնք իրենց տնտեսությունը վարում էին կապիտալիստական հիմքի վրա: Նույնիսկ այն հողը, որը գյուղական հասարակությունը վարձակալում էր անմիջապես գանձարանից, հիմնականում ընկնում էր ուժեղների ձեռքը և դառնում էր աշխատանքի շահագործման օբյեկտ: Այդ շին բացասում նաև ցարական կառավարության առանձին ներկայացուցիչներ: Ահա, օրինակ, ինչ է գրել հողագործության մինիստր Երմոլովը 1896 թվականին իր շրջաբերական նամակում. «Ամբողջ հասարակության կողմից վարձակալած պետական հողամասը դեպքերի մեծամասնությամբ բաշխվում է առավելապես ունևոր տնտեսատերերի միջև, քանի որ սակավաուժ համայնակիցները պետական հողի օգտագործման համարյա թույլ շին տրվում»¹:

Երևանի նահանգի պետական գյուղացիների տնտեսական կենցաղի շատ հետազոտողներ աշխատում էին շնկատել գյուղացիների քայքայումը և կապիտալիստական հարաբերությունների ստեղծումը և այդ պատճառով վարձակալությունը դիտում էին ոչ այլ կերպ, քան երկրամասում գոյություն ունեցող սակավահողության տեսակետից:

«Գյուղացիների կենցաղում, — գրում է Ս. Եղիազարովը, — վարձակալված հողը կիրառվում է բավականին հաճախ... վարձակալների գլխավոր կոնտիգենտը համենայն դեպս բաղկացած է սակավահող գյուղացիներից... Գլխավոր պատճառների շարքում, որոնք հարկադրում են գյուղացիներին դիմել մասնավոր տիրույթների հողերը վարձելուն, առաջին տեղը գրավում է սակավահող և ջրասակավ լինելը»²:

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 133, գ. 2309.

² Свод материалов по изучению экономич. быта госуд. крестьян, т. 1, стр. 53.

«Հողերի վարձակալումը, — գրում է Պարվիցկին, — առաջ է գալիս հետևյալ պայմաններից. ա) վարելահողի անբավարարությունից, վարելահողի քիչ արտադրողական լինելուց և բ) ավելորդ աշխատուժի պայմաններում մեծ եկամտաբերություն ստանալու ցանկությունից»¹:

Նույն կարծիքին են Ֆ. Տ. Մարկովը և ուրիշներ: Մարկովը, օրինակ, գտնում էր, որ գյուղացիները վարձակալում են կալվածատիրոջ հողը այն պատճառով, որ նրանց նյութական միջոցները և աշխատանքային ուժը ավելին է, քան այդ պահանջում է իրենց սեփական հողաբաժինների մշակումը:

Այսպիսով, ստացվում է, որ ոչ թե տնտեսության առևտրա-արդյունաբերական հիմքը և ոչ թե գյուղի տնտեսապես առավել ունևոր տարրերի կուտակման ձգտումն է վարձակալման սիստեմի ծագման ու զարգացման պատճառը, այլ ընդհակառակն, գյուղացիական ընտանիքի նյութական միջոցների և աշխատանքային ուժի ավելցուկը վարձակալության դրրդիչ պատճառ է ծառայում:

Կասկած չկա, որ ունևոր գյուղացիները մեծ միջոցներ ունեին, քան այն պահանջում էր իրենց սեփական հողաբաժինների մշակումը, բայց նրանք ի վիճակի էին իրենց արտադրության ընդարձակման համապատասխան քանակապես ավելացնել նաև աշխատանքային ուժը, վարձելով այն դրսից: Հողը վարձակալում էին ոչ թե նրանք, որոնք ունեին քիչ հող, այլ հիմնականում նրանք, ովքեր վարում էին առևտրական հողագործություն, արտադրելով շուկայի համար:

7 Գյուղացիության ֆայֆայումը և պրոլետարիատի առաջացումը

Հողի համակենտրոնացումը կուլակների, վաշխառուների և առևտրականների ձեռքում և վերջիններիս կողմից գանձարանին, հողատիրական դասակարգին և աղքատացած գյուղացիությանը պատկանող հողերի վարձակալումը զուգակցվում էր տնտեսապես շունևոր գյուղացիների քայքայմամբ:

¹ Свод материалов по изучению экономич. быта госуд. крестьян, т. 1, стр. 336.

Առաջինները իրենց տնտեսութիւնը վարում էին կապիտա-
լիստական հիմունքներով, լրացուցիչ աշխատանքային ուժի
պահանջ էին ներկայացնում, իսկ երկրորդները, գտնվելով
խիստ ծայրահեղ կարիքի մեջ, աշխատանք էին փնտրում
իրենց տնտեսութիւնից դուրս: Տնտեսական անհաջողու-
թիւնները, արժեքի օրենքի գործողութիւնը, առևտրական կա-
պիտալի շահագործումը, վաշխառուական կապիտալի ստոր-
կացուցիչ տոկոսները և ծանր հարկերը ծոռւմ էին շունևոր
գյուղացիների թիկունքը և ստիպում էին նրան և նրա ընտա-
նիքի անդամներին վաճառելու իրենց աշխատանքը:

Սովորաբար ավելցուկ բնակչութեան առաջացումը գյու-
ղում տեղի է ունենում ավելի խտնեմանի վերապով, քան նրան
կլանում է համեմատաբար դանդաղ զարգացող կապիտալիս-
տական արդյունաբերութիւնը և դյուղատնտեսութիւնը: Այս
առանձնապես շոշափելի է այն երկրներում և երկրամասե-
րում, որտեղ զանազան խոշոր գոտիների և արտաքին արդիւն-
թիւնների առկայութեան պատճառով արտադրողական ուժե-
րը զարգանում են ծայրահեղ դանդաղ կերպով: Այդ պատճա-
ռով աշխատավորների աղքատացումը սարսափելի շափերի է
հասնում:

Հայաստանը ցարիզմի տիրապետութեան ժամանակ պատ-
կանում էր այդ երկրների թվին: Մասնավոր գյուղացիական
հողային սեփականութեան բացակայութեան, զանազան հար-
կերի ու պարհակների հարկման բարձր նորմաների, բանկա-
յին վարկի բացակայութիւնը և, վերջապես, գաղութային քա-
ղաքականութեան պատճառով արտադրողական ուժերը այս-
տեղ աճում էին խիստ դանդաղ կերպով: Մինչդեռ, թվարկ-
ված գործոնների արդիւնքութեան շնորհիւ, հասարակութեան
ցածր խավերի քայքայումը և պրոլետարացումը կատարվում
էր արտակարգ արագ կերպով: Վիճակագրական տվյալների
բացակայութիւնը մեզ հնարավորութիւն չի տալիս այդ
դրույթը լուսաբանել զգալի թվական տվյալներով, բայց, այ-
նուամենայնիւ, մեր տրամադրութեան տակ կան փոքր-ինչ
տեղեկութիւններ, որոնք ցույց են տալիս նրա ճշտութիւնը:
Այդ տեղեկութիւնները ամենից առաջ վերաբերում են տա-
րագնացութեանը: Տարագնացութիւնը գյուղացիների շերտա-

վորման և գյուղում ավելցուկ բնակչություն ստեղծվելու վաղ ցուցանիշներից մեկն է: Այն մասին, որ տարազնացութունը Հայաստանում վիթխարի շահերի է հասել, մեզ ցույց կտան հետևյալ աղյուսակները, որոնք կազմվել են փաստացի տրվյալների հիման վրա: Բերենք, ամենից առաջ, ամփոփիչ թվեր, որոնք վերցված են «Կովկասյան օրացույցից»:

Տարազնացների թիվը Երևանի նահանգում 1914 թվականին:

Գավառներ	Այն գյուղ. թիվը որտ. վաստակելու են գնում	Վաստակի գնացող թիվը	Նահանգի ամս.	Նահանգից գուրս	Արտաստման	Միջին հաշվով մեկ գյուղին հասնում է
Երևանի	79	1959	1759	195	6	25
Էջմիածնի	120	4606	3121	1157	329	38
Ն. Բայազետի	132	10451	3049	7361	41	79
Ալեքսանդրապոլի	145	9578	3841	5237	515	65
Շարուր-Պարազյազի	96	2305	554	1750	1	24
Սուրմալուի	126	1321	820	351	150	11
Նախիջևանի	127	6418	1424	3917	1077	51
Ընդամենը	828	36638	14547	19968	2118	44

Թվերը ցույց են տալիս, որ տառացիորեն բոլոր գյուղերը առանձնացնում էին մեծ քանակով տնտեսապես շունկոր մարդկանց, որոնք աշխատանք չէին գտնում գյուղում և այդպիսին որոնում էին դրսում:

Վերևում մենք վերցրել ենք միջին ցուցանիշներ, իսկ այժմ վերցնենք առանձին գյուղերի տվյալները, որոնք ցույց են տալիս տարազնացության տնտեսական հիմքը, նրա անհամաշարժությունը և խիստ բարձր տոկոսը առանձին գյուղերում:

¹ ՏՄ. „Кавказский календарь на 1914 г.“, стр. 14.

Ամենից առաջ նկատենք, որ մեկ ժխին ընկնող արտագր-նացնների թիվը զգալի չափով կբարձրանա, եթե մենք ժխերի ընդհանուր թվից դեն նետենք միջակ և կուլակային ժխերը: Կուլակները և միջակ գյուղացիների մի մասը ոչ միայն տարագնացներ չեն տալիս, այլ և վարձում են աշխատողներ: Աղյուսակը ցույց է տալիս, որ տարագնացութան պատճառը գյուղացիների տնտեսապես ապահովված շինելն է: «Կապիտալիզմի դարգացումը Ռուսաստանում» աշխատութան մեջ Վ. Ի. Լենինը, բնութագրելով գյուղացիների կենսամակարդակը, ցույց տվեց, որ բնակչության «ա» խմբի, որի մեջ մտցրված են մի ձի ունեցող և ձիազուրկ գյուղացիները, և մեկ շնչին ընկնում է 17,4 փութ հաճար, իսկ մեր աղյուսակներում բերված թվերը ցույց են տալիս, որ նշված 20 գյուղերի բնակչության մեկ շնչին միջին հաշվով արտադրվում էր 8,8 փութ հացահատիկ, ըստ որում 11 գյուղերում բնակչության մեկ շնչին արտադրվում էր 5 փթից պակաս հացահատիկ: Աղյուսակում մենք վերցրել ենք ամբողջ բերքը, եթե այդ քանակից հանենք սերմֆոնդը և հարկերին ու պարհակներին տրվող բաժինը, և, վերջապես, գյուղական վերնախավի բերքը, ապա պարզ կդառնա, թե ինչպիսի սարսափելի չափի էր հասել աշխատավոր գյուղացիների աղքատությունը: Գյուղացիությունները, չհաշվելով աննշան մաս կազմող կուլակները և ունևոր գյուղացիները, սիստեմատիկ սովահար էին լինում և ճզմվում ուժից վեր հարկերի ու պարհակների ծանրության տակ: Միայն դրանով է բացատրվում արտագնացության մեծ տոկոսը:

«Այն մասին, որ այս տարվա բերքը կբավարարի միայն կերակրման համար, — գրում է Երևանի գավառի տեղամասային պրիստավը, — ինձ թույլ կտան վկայակոչել լավ բերք ունեցող գյուղերից մեկը՝ Բաշ-Ապարանը, որտեղ ընթացիկ տարվա գարնանացանից հավաքված է 1800 փութ ցորեն, երկու սեռի շնչերի թիվը 4974, հանելով կրծքի երեխաներին, մոտավորապես 250, կմնա 1718 շունչ, տրամադրելով ամեն մի շնչին ամսական առնվազն կես փութ: 1718 շնչի համար անհրաժեշտ է ամսական 859 փութ, իսկ տարեկան՝ 10308 փութ, այնպես որ բերքից ստացած նման հաշվումների դեպ-

Վարձու բանվորների օգտագործումը

Գավառանքը	Չրկու սեռի շնչեր	Տոսկուսութիւնը	1				2-ից 3				4-ից 5				6-ից 10				10-ից ավելի	Ձեռքարկում	Տոսկուսութիւնը, արհեստագործական, ընդհանուր թիվը: նկատմամբ
			1	2-ից 3	4-ից 5	6-ից 10	1	2	3	4	5	6	7	8	9	10	1	2			
Երևանի	գյուղ	121873	1774	838	3	1	1	15	942	5,2											
	քաղաք	29106	4535	714	225	19	2	70	1040	21,3											
	ընդամ.	150879	22612	1553	308	22	3	85	1972	8,7											
Ալեքսանդրապոլի	գյուղ	134887	16189	211	33	4	1	14	263	1,6											
	քաղաք	30816	4271	291	55	5	—	30	381	8,9											
	ընդամ.	165503	20460	502	88	9	1	44	644	3,3											
Նախիջևանի և Օրբուսի.	գյուղ	87370	15060	395	45	7	1	20	468	3,1											
	քաղաք	13401	2855	180	37	3	—	13	213	7,5											
	ընդամ.	100771	17915	555	82	10	1	33	681	3,9											
Ն. Յայթախի	գյուղ	114087	13127	203	39	4	—	6	252	1,9											
	քաղաք	8486	1328	163	11	—	—	2	181	13,6											
	ընդամ.	122573	14455	371	50	4	—	8	433	3,0											
Էջմիածնի	124437	17464	807	77	5	3	14	906	5,2												
Սուրմալուի	80055	12521	212	42	5	—	10	269	2,1												
Շարուր-Քարալաղաղի	124237	11161	319	43	6	1	15	384	3,4												
Ընդամենը	գյուղ	787846	103295	2986	362	34	7	94	3484	3,4											
	քաղաք	81509	13292	1333	328	27	2	115	1805	13,5											
	ընդամ.	869355	116587	4319	690	61	9	209	5289	4,5											

Ստոր. — Բովերը վերցված են 1897 թ. մարտահամարի տվյալներից

քում կմնա միայն 2619 փութ¹։ Միայն ցարական աստիճանավորը կարող էր մեկ շափահաս մարդու համար ամսական 3 կիլոգրամ հաց առանձնացնել և ուրիշ ոչինչ։ Սակայն այս դեպքում էլ սերմֆոնդը առանձնացնելուց հետո հարկերի և պարհակների վճարման համար ոչինչ չի մնում։

Տարագնացների այդ հսկա բանակը չէր կարող աշխատանքի վարձվել երկրի սահմաններում՝ արդյունաբերությունը ծայրահեղ դանդաղ զարգանալու և գյուղատնտեսությունը բնագավառում արտադրողական ուժերի լճացման բնույթի հետևանքով, ուստի նա աշխատանք էր փնտրում հիմնականում նրա սահմաններից դուրս։

Քննարկենք վարձու աշխատողների օգտագործման աստիճանը տնտեսություններում (տե՛ս էջ 138)։

Գծբախտաբար այդ բնագավառում ևս բացակայում են անհրաժեշտ թվական տվյալներ, ուստի մենք շենք պատրաստվում տալ այդ հարցի մանրամասն վերլուծությունը։

Աղյուսակից երևում է, որ գյուղական տնտեսությունների ընդհանուր թվից միայն 3,4 տոկոսը կիրառում էին վարձու աշխատուժ, ըստ որում վարձու աշխատանք կիրառող տնտեսություններից 2,9 տոկոսը միայն ունեին մեկական բանվոր։ Այդ ցույց է տալիս գյուղատնտեսության կապիտալիստականացման ծայրահեղ դանդաղ պրոցեսը և այն տրնտեսությունների աննշան լինելը, որոնք օգտագործում էին վարձու բանվորներ։ Թվերը այնուհետև ցույց են տալիս, որ դարգացած չէր նաև քաղաքային արդյունաբերական տրնտեսությունը։ Աղյուսակում նշված 180560 բանվորից ավելի քան 50 տոկոսը պետք է վերագրել տնային ծառայողների կարգին և այն անձանց, որոնք աշխատում էին վարձով գյուղատնտեսության ասպարեղում, որովհետև այն ժամանակ քաղաքի բնակիչներից շատերը զբաղվում էին գյուղատնտեսությամբ։

¹ Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 102, գ. 1135, թ. 10—15 (այստեղին են վերաբերում նույնպես հացահատիկի և անասնապահության վերաբերող հետևյալ աղյուսակի տվյալները)։

Այս բոլորը ասում են, որ Հայաստանի գյուղատնտեսութ-
թյան մեջ ավելցուկ բնակչության գոյացումը գյուղացիութ-
յան աղքատացման ու քայքայման հետևանքով կատարվում էր
ավելի լարված կերպով, քան կապիտալիստական արտադրու-
թյան մեջ ներգրավվելը նրա սահմաններում, այստեղից էլ
մյուս նահանգները գաղթողների մեծ թիվը:

ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԱՃԸ

1 Բամբակի արտադրությունը

Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուն զուգընթաց երկրի տնտեսական յուրացումը նրա համար դարձել էր հրատապ հարց: Ցարական Ռուսաստանը իր առաջ խնդիր էր դրել այն դարձնել ռուսական զարգացող արդյունաբերության հումքային կցորդ և վաճառահանման շուկա:

Իհարկե, ցարիզմը հետապնդում էր նաև մի այլ, ավելի հեռու գնացող նպատակ: Նա ձգտում էր Անդրկովկասից դուրս մղել ոչ միայն իր եվրոպական մրցակիցներին, մասնավորապես Անգլիային ու Ֆրանսիային, այլև իր առևտրական քաղաքականությամբ ընդլայնել իր ազդեցության ոլորտը Իրանում, առանձնապես նրա հյուսիսային մասում: Սակայն այդ հարցը մեր հետազոտության օբյեկտը չի հանդիսանում:

Նրկիրը տնտեսապես յուրացնելու նպատակով ցարական կառավարությունը, առանձնացված հատուկ աստիճանավորների միջոցով, XIX դարի 30-ական թվականների առաջին կեսին սկսեց ուսումնասիրել Անդրկովկասի ժողովրդական տնտեսության վիճակը և միջոցառումներ ընդունեց այն բանի համար, որ ամենից առաջ զարգանային տնտեսության այն ճյուղերը, որոնք կարող էին ռուսական արդյունաբերությանը հումք տալ: Այդ ճյուղերին վերաբերում էին բամբակագոր-

ծությունը, շերամապահությունը, խաղողագործությունը, տարոնի մշակումը և յուղատու կուլտուրաները:

Սակայն մինչև ֆորմյան ժամանակաշրջանում ցարական Ռուսաստանը նշված և ոչ մի բնագավառում լուրջ արդյունքի չհասավ: Երկրի տնտեսական յուրացման հարցը դուրս չեկավ իր հանձնաժողովների ուսումնասիրությունների և բյուրոկրատիկ քաշքշուկների շրջանակներից: Միայն հետևեց ֆորմյան ժամանակաշրջանում է, որ այդ հարցի լուծումը ստանում էր տեղի հիմք:

Ռուսական արդյունաբերության համար այդ կուլտուրաներից առավել կարևոր նշանակություն ստացավ բամբակի արտադրությունը: Բամբակագործությունը գոյություն ուներ նաև պարսկական տիրապետության ժամանակ, բայց այն արդյունաբերական լայն նշանակություն չուներ, և բամբակը գործածվում էր գլխավորապես տեղական բնակչության տնային տնտեսության պահանջները բավարարելու համար: 1863 թվականին լույս տեսած «Կովկասից այն կողմը գտնվող ռուսական տիրույթի տեսության» տվյալներով Երևանի և Նախիջևանի մարզերը միջին հաշվով տարեկան արտադրում էին 65 հազար փութ բամբակ¹:

Այն ժամանակ էլ ձեռնարկվեցին առաջին քայլերը բամբակի արտադրությունը բարձրացնելու համար: Այսպես, օրինակ, դուրս գրվեցին բրազիլական, հյուսիս-ամերիկյան և եգիպտական սերմեր: Իվանովյան ֆարրիկատեր Բաբուրինը, գնելով 400 փութ բամբակ, ձգտում էր ընդարձակել բամբակի պլանտացիաները և բարձրացնել բամբակի որակը: 1840 թվականին հայերեն լեզվով թարգմանվել և հրատարակվել է մի բրոշյուր՝ բամբակը մշակելու մեթոդների մասին և այլն: Սակայն այդ միջոցառումները շոշափելի արդյունքներ չտվեցին: Երկրամասի ընդհանուր հետամնացությունը բնակչության ժայրահեղ ձեռնկալությունը, բամբակի ցածր գները, այդ գործի նկատմամբ ռուսական արդյունաբերողների անբավարար շահագրգռվածությունը բամբակագործության դանդաղ զարգացման պատճառներն էին:

¹ См. «Обозрение Российских владений Закавказья», ч. IV, стр. 340.

Անդրկովկասի անտեսական նվաճումը Ռուսաստանի կողմից, Վ. Ի. Լենինի կարծիքով, կատարվել է շատ ավելի ուշ և կապված է ճորտատիրական իրավունքի վերացման ու ռուսական կապիտալիզմի զարգացման հետ: Անցյալ հարյուրամյակի 60-ական թվականներից սկսած բամբակի արտադրությունը աստիճանաբար դառնում է Հայաստանի գյուղատնտեսական արտադրության հիմնական ճյուղերից մեկը: Այդ բանին արտաքին մղում տվեց եվրոպա-ամերիկյան բամբակի ներմուծման դադարեցումը՝ Ամերիկայում բռնկված պատերազմի հետևանքով: Այդ հասցրեց նրան, որ աճեց հայկական բամբակի պահանջը, սկսեցին բարձրանալ գները և տեղական բնակչության շահագրգռվածությունը բամբակի մշակման գործում:

Այսպես, բամբակի փութը Անդրկովկասում, Պ. Պետրովիչի տվյալներով, 1861 թվականին արժեք 3—4 ուրլի, իսկ 1862 թվականին՝ 17—18 ուրլի: Բուխարական բամբակի մեկ փութը ռեֆորմի թվականին նիժնի-նովգորոգի և Մոսկվայի շուկաներում հավասար էր 4—6 ուրլու, իսկ 1864 թվականին՝ 22—23 ուրլու¹:

Արդյունաբերողների կողմից մեծ քանակի արտասահմանյան սերմերի բազմիցս ստացումը և դրանց անվճար բաժանումը բամբակագործությամբ զբաղվող գյուղացիներին, նույն արդյունաբերողներին բամբակ հանձնելու պարտավորությունը, զնման գրասենյակների հիմնումը, բամբակի փորձնական պլանտացիաների կազմակերպումը, բազմաթիվ կետերում բամբակադաշտի տարբեր մեքենաների սարքավորումը և այլն վկայում է հայկական բամբակի նկատմամբ ռուսական արդյունաբերողների արթնացող մեծ շահագրգռվածության մասին:

Ներքոհիշյալ աղյուսակը ցույց է տալիս բամբակի արտադրության աճման դինամիկան հետոեֆորմյան ժամանակաշրջանում:

¹ См. П. Петрович, Хлопководство в Закавказье, Тифлис, 1912 г., стр. 19.

Բամբակի արտադրությունը Երևանի նահանգում (1000 փ.)

Տարիներ	Արտադրության ծավալը								
1861	30,0	1886	157,0	1894	396,0	1902	469,4	1910	361,6
1870	276,9	1887	326,6	1895	364,1	1903	426,2	1911	
1880	81,1	1888	338,4	1896	386,3	1904	413,8	1912	467,7
1881	42,8	1889	508,8	1897	386,3	1905	411,0	1913	
1882	74,2	1890	852,0	1898	383,0	1906	386,8	1914	496,5
1883	73,3	1891	464,4	1899	406,1	1907			
1884	98,9	1892	557,3	1900	375,3	1908	381,0		
1885	147,9	1893	553,0	1901		1909	343,3		

Թվերը ցույց են տալիս 60-ական թվականներից հետո բամբակի մշակման գործում գոյություն ունեցող մեծ թուլչքի մասին:

1884 թվականից սկսած բամբակի արտադրությունը տարեցտարի ավելանում է և 1892—1893 թվականներին արդեն հասնում է իր ամենաբարձր կետին: 1893 թվականից հետո Հայաստանը տարեկան արտադրում էր միջին հաշվով 410 հազար փութ բամբակ: Բամբակի արտադրության հետագա աճի դադարեցումը և նույնիսկ որոշ անկումը բացատրվում է համաշխարհային, մասնավորապես ամերիկյան բամբակի արտարության արագ աճումով, նրա գների իջեցումով, կայսրության սահմաններում նոր բամբակացան շրջանների երևալան գալով, ռուսական տեքստիլ արդյունաբերության համեմատաբար դանդաղ աճով:

Սակայն մեզ համար այստեղ կարևոր է այն անվիճելի փաստը, որ 60-ական թվականներից հետո բամբակի արտադրությունը աճել է ավելի քան 13 անգամ և դարձել Հայաստանի

տանի բնակչության տնտեսական գործունեության հիմնական կողմերից մեկը:

Այնուհետև կարևոր է, որ բամբակը արտադրվում էր բացառապես իբրև ապրանք և այդ ուժեղացնում էր գյուղատնտեսական արտադրության ապրանքային ուղղությունը: Բամբակի մշակմամբ զբաղվում էին հետևյալ գավառները. Երեվանի, Նախիջևանի, Էջմիածնի, Սուրմալուի և Շարուր-Պարալազյաղի գավառները: Հետևապես, Երևանի նահանգի գավառներից այդ կուլտուրայի աճեցմամբ չէին զբաղվում միայն Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի գավառները:

Այս էջում բերված աղյուսակը ակնառու կերպով ցույց է տալիս բամբակի արտադրության աճումը գավառային հատվածքով:

Աղյուսակից պարզ երևում է Սուրմալուի գավառի տեսակարար մեծ կշիռը, Շարուր-Պարալազյաղի գավառի տեսակարար կշռի ցածրացումը 1893 թվականից հետո, և Էջմիածնի գավառինը 1893 թվականից հետո: Այն ցույց է տալիս բամբակագործության զարգացման արագ տեմպը Երևանի գավառում:

Բամբակի արտադրությունն ըստ գավառների (1000 փ.)

Գավառներ	Տարիներ	1887	1889	1891	1893	1895	1897	1899
Երևանի		25,4	35,8	63,4	72,9	60,7	57,1	59,6
Նախիջևանի		11,1	39,0	46,8	51,3	30,0	50,0	9,8
Էջմիածնի		40,0	87,0	86,4	87,1	102,0	17,5	38,4
Սուրմալուի		200,1	167,0	170,0	238,3	101,1	197,5	270,8
Շարուր-Պարալազյաղի		50,0	180,0	97,8	103,4	70,4	64,2	27,5
Ընդամենը		326,6	508,8	464,4	553,0	364,2	386,3	406,1

Նշված գավառների բամբակի արտադրության մակարդակի իջեցումը բացատրվում է մի կողմից՝ հողի ուժասպառ լինելու և վնասատուների դեմ թույլ պայքարելու հետևանքով բերքատվության իջեցումով և, մյուս կողմից՝ առանձին տարիներին բամբակի ընդհանուր տարածության կրճատումով:

	1897 թ.		1898 թ.		1899 թ.		1908 թ.		1909 թ.		1910 թ.		1897	1898	1899	1908	1909	1910	1911
	Պարտքեր	Իրավունքներ																	
Պարտքեր	4389	197,5	7250	145,0	6324	270,0	4990	107,4	6990	99,4	6990	93,4	45,0	20,0	42,8	21,5	14,2	13,3	13,3
Մարտիրոսյան	3091	64,2	5500	110,0	6524	27,5	2300	55,2	2370	47,4	4290	51,4	20,0	7,20	4	24,0	20,0	12,0	12,0
Երևանի	3728	57,1	3780	59,0	3740	59,6	4577	128,3	5050	131,7	5631	136,7	15,3	15,3	15,3	26	26	24,2	24,2
Էջմիածնի	2790	17,5	4500	45,0	3459	38,4	3050	55,3	3096	34,4	3334	42,7	4	20,0	11,0	14,0	14,0	12,5	12,5
Նախիջևանի	650	50,0	1250	25,0	977	9,6	1933	34,8	1934	30,4	2383	37,5	76,9	20,0	10,3	18,0	15,7	15,7	15,7
Ընդամենը	14646	336,3	22260	393,0	21054	406,1	15050	361,0	19470	343,3	22620	361,7	26,4	17,1	19,3	21,0	17,0	15,9	15,9

Անկ զնայալիս բնութագրող
Քյուրդ փնջերով

Փալատներ

Վերջինս իր հերթին բացատրվում է ինչպես բամբակի գն-
քի տատանումներով, այնպես էլ նախորդ տարիների խիստ
ցածր բերքով:

Բերքի տատանումները կարելի է տեսնել 145-րդ էջի
աղյուսակում: Բերված թվերը լրիվ բնութագրում են այդ տա-
տանումները: Մենք այստեղ վերցրել ենք ոչ բոլոր տարիները,
որովհետև, նախ, ոչ բոլոր հաշվետվությունների մեջ է նշված
բամբակի ցանքատարածությունը, առանձնապես շրջանային
հատվածքով, երկրորդ, եթե նույնիսկ հաջողվեր բերել այդ
տվյալները, դրանք ոչ մի կերպ չեն փոխի դրությունը: Բե-
րենք նաև բերքի տատանումը մեկ դեպքատիմի հատվածով
(տե՛ս էջ 146):

Աղյուսակը ցույց է տալիս բերքի խիստ տատանումնե-
րսւոր գավառներում: Այդ հանգամանքը շէր կարող շանդրա-
դառնալ այդ գավառների բնակչության տնտեսական վիճակի
և բամբակագործության զարգացման վրա:

Բամբակագործության աճմանը զուգընթաց լավանում էր
նաև բամբակի որակը, տեղական կոպիտ կարճաթել տեսակը
աստիճանաբար դուրս էր մղվում ամերիկյան տեսակի կող-
մից: Այդ մասին խոսում են հետևյալ տվյալները:

Բամբակի ամերիկյան տեսակի տեսակաբար կշռի աճը
(հազար փթերով)

Գավառներ	1889 տարի			1914 տարի		
	Ընդամենը բամբակ	Այդ թվում		Ընդամենը բամբակ	Այդ թվում	
		Ամերիկ- յան տե- սակ	Տեղա- կան տե- սակ		Ամերիկ- յան տե- սակ	Տեղա- կան տե- սակ
Սրբանի	35,8	11,3	24,5	61,5	150,8	10,7
Պուրմաչուի	167,0	38,0	129,0	133,8	129,3	4,5
Նախիջևանի	39,0	17,0	21,3	55,4	49,5	5,8
Շարուր-Գարա- լազյազի	180,0	165,0	15,0	68,9	68,7	0,2
Էջմիածնի	87,0	—	—	70,8	68,5	2,3
Ընդամենը	509,8			490,4	466,8	23,5

Բամբակագործության զարգացումը ոչ միայն խոսում է այդ գավառների հողագործության առևտրա-արդյունաբերական բնույթի, այլև այդ հիման վրա գյուղացիության անխուսահելի շերտավորման և կապիտալիստական շահագործման օգտին: Այդ կուլտուրայի աճեցմամբ, հիմնականում, զբաղվում էին վարձակալները և ունեւոր գյուղացիները: Այսպես, օրինակ, հղբայրներ Շերեմետևները, Երևանի գավառի «Արագդայան» կալվածքում վարձակալական հիմունքներով 19 գյուղեր մշակում էին 836 դեսյատին բամբակ: Ընդ որում Շերեմետևները ստանում էին բամբակի ամբողջ բերքի մեկ երրորդը¹:

Դժբախտաբար, որևէ թվական տվյալ չի պահպանվել պլանտացիաներում շահագործվող բանվորների քանակի մասին, սակայն մենք ունենք նահանգային հաշվետվությունների կազմողների հայտարարությունները այն մասին, որ ամբողջ բամբակի մեկ երրորդը մշակվում էր վարձու աշխատանքով (տե՛ս 1899 թվականի հաշվետվությունը):

Բամբակագործության զարգացումը հասցրեց բամբակի նախնական վերամշակման կազմակերպմանը, որը հիմնված էր վարձու աշխատանք կիրառելու վրա: Այսպես, օրինակ, 1912 թվականին Հայաստանում կար 328 բամբակագտիչ մեքենա, այդ թվում 108 նավթով աշխատող, 43՝ գոլորշու, 153 ջրի և 24՝ ձիու: Այդ բոլոր մեքենաները պատկանում էին ունեվոր գյուղացիներին, որոնք հատուկ վճարով կատարում էին համագյուղացիների բամբակի բերքի զտում: Էջմիածնի գավառապետի հաշվետվության տվյալներով 100 փութ բամբակ զտելու համար գանձվում էր. 60 փորոտ ջիլով 1 փութ, 30 փորոտից՝ 1 փութ 26 գրվանքա և 25 փորոտից 2,5 փութ բամբակ:

Պ. Պետրովիչը գրում է, որ երբեմն բամբակագտիչ մեքենատերերը և այլ ունեւոր գյուղացիներ գնում էին գյուղացիների ամբողջ բամբակը և տանում Երևան վաճառելու: Սակավազոր բամբակագործների վրա քայքայիչ ազդեցություն էր թողնում նաև ավանսավորման սխտեմը, որի ժամանակ

¹ См. там же, стр. 53.

արտագրողը, սուր կարիքի մեջ գտնվելով, դեռ մինչև բամբակի հասունանալը և հավաքելը ավանս կամ կանխավճար է վերցնում բամբակի համար և պարտավորվում է բամբակի բերքը հավաքելուց հետո այն վաճառել իջեցրած գներով: «... էջմիածնի գավառի Ղղըլ-Քեմուրի գյուղական հասարակութունում, — գրում է Պետրովիչը, — բամբակի համար կանխավճար տրվում էր բամբակի հավաքման ժամանակ գոյութուն ունեցող գներից, փթին 2 ուրլի զիջելու պայմանով, ընդ որում ամեն մի առանձին տնտեսությանը տրվում է մինչև 150 ուրլի: Նույն գավառի Շահրիար գյուղի թղթակիցը ասում է, որ իրենց մոտ մեկ դեսյատին բամբակի ցանքի համար կանխավճար տալիս են 80—100 ուրլի, իսկ բամբակը գնվում է շուկայի գնից 2 ուրլով պակաս, որի հետևանքով տնտեսատերը պարտք է մնում երբեմն խոշոր գումար, որը վճարում է մի քանի տարի անընդհատ»¹:

Այսպիսով, բամբակագործութունը ձեռք է բերում արդյունաբերական նշանակութուն, դառնում է առևտրական հողագործության ճյուղերից մեկը և այդ արագացնում է գյուղացիների քայքայման և գյուղում կապիտալիստական հարաբերութունների կազմավորման պրոցեսը:

2. Խաղողագործություն

Հետևեցորմյան ժամանակաշրջանում փոխվում է նաև այգեգործության, առավելապես խաղողագործության բնույթը: Այն աստիճանաբար ստանում է արդյունաբերական նշանակութուն: Եթե առաջներում խաղողի աճեցումը հիմնականում սպառողական բնույթ ուներ և միայն մի աննշան քանակ վաճառվում էր շուկայում, ապա այժմ այն մշակվում է գլխավորապես վաճառելու նպատակով:

1870 թվականի համեմատությամբ, 1903 թվականին խաղողի տարեկան միջին բերքը ավելացավ ավելի քան 3 անգամ: Համոզվելու համար բերենք հետևյալ տվյալները:

¹ См. там же, стр. 128.

Խաղողի արտադրության անք
(հազ. ֆթերով)

	1870 թ.	1880 թ.	Միջին տարեկան			
			1881-ից մինչև 1885 թ.	1891-ից մինչև 1895 թ.	1901-ից մինչև 1905 թ.	1908-ից մինչև 1913 թ.
Խաղողի բերքը	984,2	1584,2	1360,0	1400,0	2510,0	3395,0

Բնորոշ է, որ խաղողի բերքը ավելացավ ոչ այնքան այգիների ընդհանուր տարածության ավելացման հաշվին, այլ բերքատվության բարձրացման շնորհիվ: Դա ցույց են տալիս հետևյալ թվերը (տե՛ս էջ 151):

Մենք այստեղ վերցրել ենք միայն այն տարիները, որոնց վերաբերյալ նահանգային հաշվետվությունների մեջ տվյալներ կան ինչպես խաղողի բերքի, այնպես էլ այն տարածության մասին, որը զբաղեցնում էին խաղողի այգիները առանց պտղատու այգիների:

Նթե նույնիսկ վերանանք 1910 թվականից, որը տվել է արտասովոր բարձր բերք, թվերը ցույց են տալիս խաղողի բերքատվության անընդհատ բարձրացում:

Խաղողագործությանը հիմնականում զբաղվում էին այն նույն շրջանները, որոնք զբաղվում էին բամբակագործությամբ: Այդ շրջանների տեսակարար կշիռը ընդհանուր արտադրության մեջ ցույց է տրված հետևյալ աղյուսակում (տե՛ս էջ 153):

Բերված տվյալները ցույց են տալիս, որ խաղողի ընդհանուր արտադրության մեջ տեսակարար մեծ կշիռ ունի Երևանի գավառը: 1913 թվականին նրա տեսակարար կշիռը բարձրանում է մինչև 71 տոկոսի: Երևանի գավառից հետո գալիս է էջմիածնի գավառը: Խաղողագործության արագ զարգացումն այդ երկու գավառներում բացատրվում է գլխավորապես ըսպառման շուկաներին նրանց մոտ գտնվելով: Պետք է հաշվի առնել, որ 90-ական թվականներին Երևանում կազմակերպվե-

Խաղողի բերեալութեան տներ

	1870 թ.	1889 թ.	1891 թ.	1892 թ.	1898 թ.	1908 թ.	1909 թ.	1910 թ.
Արգինների տարածումը (դեռայտերիցներով)	8458	7697	6206	6203	8431	9765	9892	9742
Խաղողի բերքը (փթեքով)	984172	117173	1329846	1119339	2015227	3175570	2904720	4759971
Մեկ դեռայտերի բերքը	115	152	214	180	239	325	294	488

ցին կոնյակի մի շարք բավականին խոշոր գործարաններ, որոնք տարեցտարի ավելացնում էին խաղողի իրենց պահանջը:

Խաղողագործության զարգացման հիման վրա առաջ եկավ գինեգործական արդյունաբերությունը:

Դժբախտաբար, թվական տվյալներ չլինելու պատճառով, մենք ի վիճակի չենք վերականգնել արդյունաբերության այդ նոր ճյուղի զարգացման լրիվ պատկերը և տալ զարգացման դինամիկան XIX հարյուրամյակի վերջին քառորդում, ուստի այստեղ բերում ենք այն տվյալները, որոնք վերաբերում են գինեգործության զարգացմանը սկսած 1895 թվականից հետո:

«Երևանի նահանգի 1902 թվականի հուշագրքում» բերված տվյալների համաձայն խաղողի վերամշակումը հետևյալ պատկերն ուներ:

Խաղողի վերամշակումը Երևանի նահանգում

	1895 թ.	1896 թ.	1897 թ.	1898 թ.	1899 թ.	1900 թ.	1905 թ. ¹
Խաղողի բերքը փթերով	1771430	1374923	1823304	1778102	1944598	2664587	2541000
Քամված (զույլերով)	589200	217000	865000	745000	902970	1180114	1310000
Ծխված է աստիճան.	5639544	4807833	5493112	5428717	7872085	8537644	13543000

«Նույն հուշագրքի» տվյալներով 1899 թվականին կոնյակի խոշոր գործարաններում ծխել են 666215 աստիճան կոնյակ, որը կազմում է ծխված ամբողջ սպիրտի 8,5 տոկոսը:

Այդ քանակից ծխված է. Աֆրիկովի գործարանում՝ 69518 աստիճան, Տեր-Մկրտչյանի գործարանում՝ 25449, Թայիրովի

¹ 1905 թվականին վերաբերող թվերը վերցված են հաշվետվությունից տե՛ս Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 124, գ. 26, թ. 54:

Խաղողի արտադրությունն ըստ գավառների

Հազար փմերով

	1897 թ.		1898 թ.		1899 թ.		1908 թ.		1909 թ.		1910 թ.	
	միջին մտմտկոտոցա	միջին վեցերտոյ										
Գավառները												
Երևանի	677,9	53,7	1041,4	51,8	1011,0	57,2	2138,2	67,3	1815,3	62,5	2478,1	52,1
Նախիջևանի	60,0	4,7	81,0	4,0	143,0	8,1	198,3	6,2	198,3	6,8	181,9	3,8
Սուրբաթուի	222,1	17,6	224,4	11,1	210,0	11,9	155,5	4,9	412,7	14,2	271,7	5,7
Էջմիածնի	247,2	19,6	639,2	31,7	384,8	21,8	519,7	16,4	324,0	11,2	1735,1	36,4
Մարտի-Գարաշաղաղի	53,3	4,4	29,2	1,4	17,0	1,0	163,9	5,2	134,4	5,3	92,2	2,0
Ընդամենը	1260,5	100	2015,2	100	1765,8	100	3175,6	100	2904,7	100	4759,0	100

գործարանում՝ 173882, հուրլարովի գործարանում՝ 133061, Սողոմոնյանի գործարանում՝ 214235 և Սարաջևի գործարանում՝ 50052 աստիճան: Գինու սպիրտի մնացած մասը ծրված էր ավելի քան 400 մանր պրիմիտիվ գործարաններում:

1900 թվականից սկսած խաղողի վերամշակման գործուտեղի են ունենում մեծ փոփոխություններ, մանր գործարանները համարյա լիովին վերանում են, և կոնյակի ու գինու արտադրությունը ամբողջովին կենտրոնացվում է առավել խոշոր կապիտալիստների ձեռքին:

Տարեկան հաշվետվությունների հիման վրա մեզ հաջողվեց պարզել խաղողը սպիրտի վերամշակելու 1911 թվականի իսկական պատկերը:

Սպիրտի արտադրությունը Երևանի նահանգի գործարաններում

Ձեռնարկությունների անվանումը	Սպիրտի մնացորդը 1911/11 աստիճաններով	1911 թ. արտադրվել է սպիրտ	Ընդամենը 1911 թ.	Ակտիվ գույք	Սահմանափակ
1	2	3	4	5	6
Կոնյակի գործարաններ Ն. Լ. Շուստովի ընկ.	1728696	2094695	3823391	267638	
Դ. Զ. Սարաջևի ընկ.	190411	1057349	1247660	77343	
Հովհաննիսյանի և Եղիզարով «Արարատ» ընկ.	480308	41108	521416	36504	
Կ. Աֆրիկովի ընկ.	3574	151082	154656	10928	
Տեր-Մկրտչյանի ընկ.	19372	—	19372	1456	
Գյուղալովի ընկ.	14665	—	14665	1027	
Եղբայրներ Հախնազարովիների ընկ.	170150	—	170150	11910	

1	2	3	4	5	6
Բ. Բարախանյանի ընկ.	63613	343477	407096	25940	
Նղբայր. Չալարյան- ների ընկ.	30286	166572	197158	13501	
Պ. Արրամովի ընկ.	55960	1069185	1224045	78683	
Ա. Բարախանովի ընկ.	29076	204092	239159	16301	
Գ. Խուզավերդյանի ընկ.	24559	53951	63509	5846	
Նղբ. Ամիրխանյան- ների ընկ.	50755	364755	415540	29088	
Ա. Արրամովի ընկ.	6703	348702	355405	24578	
Օ. Վարտանովի ընկ.	—	98221	98221	6575	
Ս. Կարիրովի ընկ.	46233	209418	255651	17596	
«Արար» ընկ.	—	421615	421615	29513	
Մնացած բոլոր գի- նու-կոնյակ գործ.	—	375552	375552	26299	
Ընդամենը	2914296	6999064	9913354	684266	

Բերած աղյուսակից երևում է, որ կոնյակի արտադրութիւնը 1899 թվականի համեմատութեամբ 1911 թվականին ավելացել է ավելի քան 14 անգամ: Այնուհետև, թվերը ցույց են տալիս, որ կոնյակի երեք գործարանները, այն է՝ Շուստովի, Սարաջևի և Արրամովի գործարանները միասին վերցրած արտադրում էին ամբողջ պատրաստի կոնյակի 64,9 տոկոսը, ըստ որում Շուստովի գործարանին բաժին էր ընկնում 40,1 տոկոս: Եւ, վերջապես, այդ թվերը համադրելով 1899 թվականի թվերի հետ, պարզ է դառնում, թե ինչու ասպարեզից վերացան մանր ձեռնարկութունները: Այսպես, օրինակ, եթե մանր ձեռնարկութունների բաժինը սպիրտի ընդհանուր արտադրութեան մեջ, 1899 թվականին կազմում էր 91,5 տոկոս, ապա 11 տարի հետո նրանց բաժինը հավասարվեց ընդամենը միայն 3,8 տոկոսի:

153 էջի աղյուսակից մենք տեսանք խաղողի ընդհանուր արտադրութեան մեջ Երևանի գավառի տեսակարար մեծ կշի-

որ: Իսկ այս աղյուսակից մենք տեսնում ենք խաղողի վերամշակման մեջ նրա տեսակարար մեծ կշիռը:

Խաղողագործությունը Երևանի նահանգում 1909 թվականին:

Գավառներ	Այգիների քանակը	Պայրով ալյուրների տարածությունը, գեոյառ.	Պայրով բերքը, փմբրով	Շերտայի բանակը, գուլմբրով	Մրված սպիրտի տարեկանը	Սպիրտի արտադրության, կգ., տոնոսը
Երևանի	6973	5111	1738000	923000	1098300	67,7
Էջմիածնի	4205	2693	326000	147000	1191000	9,5
Սուրմալուի	2194	654	131000	95000	94000	0,7
Նախիջևանի	2875	993	199000	66000	225000	1,8
Շարուր-Պարալագյազի	1700	441	110000	66000	32000	0,3
Ընդամենը	17947	9892	2504000	1297000	12525000	100

Սույն աղյուսակում բերված թվերը մի քիչ տարբերվում են 153-րդ էջի աղյուսակի թվերից: Այդ բացատրվում է նրանով, որ առաջին աղյուսակը կազմել ենք նահանգի տարեկան հաշվետվությունների հիման վրա, իսկ այս աղյուսակի թվերը վերցված են անմիջականորեն նահանգի համար կազմված ցուցակներից²:

Ինչ են ասում այդ թվերը: Նրանք ասում են, որ նահանգում սպիրտի ընդհանուր արտադրության մեջ Երևանի գավառը տեսակարար մեծ կշիռ ունի, Երևան քաղաքը դարձել է խաղողի վերամշակման կենտրոն:

Այնուհետև, տվյալները ցույց են տալիս, որ խաղողագործությունը բացարձակորեն տարվում է առևտրա-ապրանքային հիման վրա:

¹ Տե՛ս Հայկական ՍՍՌ, ՊԿԱ, ֆ. 124, գ. 26, ք. 54.

² Տե՛ս նույն տեղը:

Գծրախտաբար մեզ շահաշողիկեց գտնել համապատասխան թվական տվյալներ, որոնք լուսաբանեին խաղողագործների շերտավորումը և վարձու աշխատանքի կիրառման շափը: Բայց անտարակույս է, որ նահանգի 1712 այգետերերի մեջ կային նաև խոշոր այգետերեր, որոնք վարձու աշխատանքային ուժ էին կիրառում, առանձնապես խաղողի վազերը թաղելու և այգիները փորելու ժամանակամիջոցում:

3. Մխախտտի արտադրությունը

Մխախտագործությունը Հայաստանում մինչև ֆորմյան ժամանակամիջոցում հատուկ զարգացում չի ունեցել: Այդ, ըստ երևույթին, բացատրվում է, որ նրա զարգացումը շահավետ չէր և արդյունաբերական անբավարար պահանջ ուներ: Սակայն XIX դարի 80-ական թվականներից սկսած այդ բրնազավառում նկատվում է զգալի աշխուժացում և ընդհուպ մինչև 1906 թվականը ծխախոտի արտադրությունը վերելքի շրջան է ապրում: Այդ բնորոշվում է հետևյալ աղյուսակով (տե՛ս 158 էջը):

Ինչպես ցույց է տալիս աղյուսակը, 1887 թվականի համեմատ 1906 թվականին ծխախոտի ընդհանուր տարածությունը ավելացել է ավելի քան 6 անգամ, իսկ ծխախոտի արտադրությունը՝ ավելի քան 7 անգամ: Այդ նույն ժամանակաշրջանում երկու (առանձին տարիներին երկուսուկես) անգամ աճել է ինչպես ծխախոտ մշակող գյուղերի քանակը, այնպես էլ տարածությունների քանակը: Թվերը, այնուհետև, վկայում են մեկ դեպյատինի և մեկ պլանտացիայի բերքատվության բարձրացման մասին:

Անհրաժեշտ է նաև նշել, որ եթե առաջ ծխախոտ արտադրում էին հիմնականում սեփական կարիքները բավարարելու և նրա աննշան մասը գնում էր վաճառելու համար, ապա նոր պայմաններում ծխախոտի մշակումը հիմնականում ապրանքային նշանակություն ուներ և տրվում էր արդյունաբերական վերամշակման: 1900-ական թվականներից Երևանում ըսկըսեց գործել Գևորգյանի ծխախոտի ֆաբրիկան և գոյություն ունեին ծխախոտ լցնող արհեստանոցներ, որոնք զբաղված

Միախոտագործությունը Երևանի նահանգում

Տարիներ	Միախոտագործ դու.դ. բանակը	Պանասպիտանիքի բանակը	Փեոյատիճների բանակը	Միախոտի ար- տադր. փերեզով	Մեկ տղանուս- ցիական	Մեկ դեոյատի- նին
1	2	3	4	5	6	7
1887	77	593	37	1600	1,8	43,2
1889	80	1137	103	4031	3,5	39,7
1891	—	1597	81	2517	1,6	31,0
1892	—	1261	103	3935	3,2	38,2
1893	—	1783	130	6244	3,5	48,0
1894	137	1521	114	6916	4,5	60,6
1895	144	1582	157	8880	5,6	56,6
1897	164	2435	196	5745	2,3	29,3
1898	—	2168	186	6116	2,8	32,8
1899	—	—	176	6054	—	34,3
1900	—	—	192	6585	—	34,2
1901	—	—	173	6233	—	36,0
1902	—	2308	200	10575	4,6	52,8
1903	178	2794	218	9649	3,5	44,2
1904	197	1968	198	9635	4,9	54,2
1905	114	1181	203	10134	8,5	49,0
1906	166	1696	240	11660	6,9	46,5
1907	—	2029	195	9717	4,8	50,0
1908	140	1350	—	7696	5,7	—
1909	121	1203	167	8241	6,8	49,3
1910	111	1260	174	9116	7,2	52,3
1911	114	958	156	3673	4,9	23,5
1912	137	958	99	4886	4,6	33,8
1913	—	994	163	5505	5,5	33,8
1914	117	1147	170	6172	5,4	36,3

էին տեղական ծխախոտի արդյունաբերական վերամշակումով:

Չնայած այդ բանին, ծխախոտագործությունը Հայաստանում զարգանում էր խիստ դանդաղ տեմպերով, և կապիտալիստական խոշոր պլանտացիաներ առաջ չեկան: Այդ, հիմնականում, բացատրվում է հողի մասնավոր սեփականությունը բացակայությամբ, գյուղացիների խիստ դանդաղ շերտավորման պրոցեսով և բախվելով քաղաքային արդյունաբերության սպառման նեղ սահմաններին, ծխախոտի արտադրությունը. սկսած 1906 թվականից, աստիճանաբար նվազում է:

Ծխախոտագործությամբ զբաղվում էին Երևանի, Սուրմալուի, Նոր Բալաղետի և Շարուր-Գարալագյաղի գավառները:

Գավառային հատվածում ծխախոտի մշակման պատկերը հետևյալն է.

Գավառներ	Պլանտացիաների թիվը	Ծխախոտի տարածության միավոր	Քեթրը գլխերով	Մեկ գն.	Մեկ պլանտացիային	Տեսակարար կշիռը ծխախոտի արտադրության մեջ
Երևանի	442	60	3351	55,8	7,6	76,3
Սուրմալուի	145	35	633	18,1	7,8	14,4
Շարուր-Գարալագյաղի	259	2	273	133,8	1,1	6,2
Նախիջևանի	109	2	130	65,0	1,2	3,1
Ընդամենը	958	99	4357	44,3	4,6	100

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ ծխախոտի արտադրությունը արդյունաբերական նշանակություն ունեւր միայն Երևանի և Սուրմալուի գավառներում:

Այդ գավառներում ոչ միայն արտադրվում էր նահանգի ամբողջ ծխախոտի ավելի քան 90 տոկոսը, այլև կային համեմատաբար խոշոր պլանտացիաներ:

1913 թվականին Սուրմալուի գավառը Երևանի գավառից առաջ անցավ ինչպես ցանվող ծխախոտի տարածությամբ, այնպես էլ նրա արտադրության մակարդակով, ծխախոտի

տարածությունները հասցնելով մինչև 98,5 դեսյատինի և արտադրելով երեք հազար փութ ծխախոտ:

Բերված աղյուսակի թերությունն այն է, որ ծխախոտագործությունը չի քննարկում պլանտացիաների շափի և ծխախոտի արտադրության տեսակետից: Մեզ հաջողվեց արխիվային տվյալների հիման վրա որոշ շափով վերացնել այդ թերությունը: Այդ տվյալները բերված են 161 էջի աղյուսակում:

Աղյուսակը ակնառու կերպով ցույց է տալիս, որ մեր հաշվի առած 523 ծխախոտագործներից 250 ծխախոտագործ, միջին հաշվով ունենալով 24,6 սաժենից մինչև 110,1 սաժեն և հավաքելով 26,5 գրվանքայից մինչև 1 փութ 22 գրվանքա, ծխախոտը հիմնականում արտադրում էին սեփական կարիքները հոգալու և ոչ թե վաճառելու համար: Իսկ մնացած ծխախոտագործները ծխախոտը արտադրում էին շուկայի համար, ըստ որում նրանց մեջ կային համեմատաբար խոշոր ծխախոտագործներ, որոնք տարեկան արտադրում էին 10, 20, 43 փութ: Այդ ծխախոտագործները շէին կարող կառավարվել առանց վարձու աշխատանք կիրառելու:

4. Ենթամալախություն

Մինչև 60-ական թվականները շերամապահությամբ ըզբաղվում էին Օրդուբադի, Նախիջևանի, Շարուրի, էջմիածնի շրջանները և բուն Երևան քաղաքը, սակայն, շնայած ցարական աստիճանավորների և ռուսական արդյունաբերողների ջանքերին, հողագործության այդ ճյուղը բավարար զարգացում չստացավ: 1860-ական թվականներին դուրս գրվեցին բուխարական, Խորասանի, ճապոնական որդի սերմեր: Դուրս գրվեցին նաև սնկասերմեր Ֆրանսիայից: Այդ միջոցառումները և մետաքսագործական ֆաբրիկաների շինարարությունը Անդրկովկասում որոշ մղում տվեցին մետաքսի արտադրմանը: Սակայն մետաքսագործությունը Հայաստանում, հասնելով որոշ մակարդակի, ավելի առաջ չգնաց:

Մեր տրամադրության տակ եղած որոշ թվական տվյալները վկայում են մետաքսի արտադրության լճացման վիճակ: Այդ տվյալները հետևյալներն են. 1868 թվականին հումքա-

Միասնական արտադրությունը 1913 թվականին երևանի գավառի երկու շրջանում և Սուրմալայի գավառում

Նորոգանքների անունները	50 սամ.	100 "	200 "	300 "	400 "	500 "	600 "	800 "	1000 "	1500 "	2000 "	2500 "	Բերք
Ղամաղյուզի	158	37	5	7	5	2	—	—	—	—	—	—	214 12586 314 26
Ղամաղյուզի Պլանտ. թիվը	3276	2520	640	2080	2550	1500	—	—	—	—	—	—	—
Տարածու.թ. սամ.	81	36	53	20	63	30	37	20	—	—	—	—	—
Բերքի հավաք.	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Գյուղակուրի	—	2	12	33	39	35	16	17	5	3	3	162	162
Պլանտ. թիվը	—	200	1953	10794	20337	22506	15050	20410	8972	10000	110222	1292	27
Տարածու.թ. սամ.	—	2	16	23	32	127	2	229	11281	1	164	32233	1
Բերքի հավաք.	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Սուրմալայի	25	5	6	15	56	3	19	14	3	1	1	147	147
Պլանտ. թիվը	985	600	1050	4610	28140	2160	19000	19450	6000	2400	84395	633	25
Տարածու.թ. սամ.	32	30	7	15	11	25	45	20	220	28	29	25	120
Բերքի հավաք.	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Ընդամենը	173	44	33	55	100	40	35	31	8	4	4	523	523
Պլանտ. թիվը	4251	3320	3643	17484	51027	26166	34050	39860	14972	12400	207188	2240	38
Տարածու.թ. սամ.	114	26	63	11	51	17	234	22513	29348	6	285	27351	26131
Բերքի հավաք.	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
Մեկ անասնու.թ. ընկնող տարածու.թ. յուրեքը	24,6	75,5	110,1	317,8	510,0	654	973	1285	1871	3100	—	—	—
Մեկ անասնու.թ. ընկնող տարածու.թ. յուրեքը	26,6	1	16	1	22	4	11	5	5	8	28	8	6
Մեկ անասնու.թ. ընկնող տարածու.թ. յուրեքը	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—

Մասնաբ. — Բերքի արդյունքները և գործարարների անունները

ցին բոժոժի արտադրութիւնը հավասար էր 1250 փթի, 1883 թվականին՝ 6000, 1887 թվականին՝ 1200, 1889 թվականին՝ 1400, 1891 թվականին՝ 1500, 1898 թվականին՝ 9000, 1899 թվականին՝ 3600, 1900 թվականին՝ 5400, 1901 թվականին՝ 5500, 1904 թվականին՝ 6500, 1905 թվականին՝ 4336, 1906 թվականին՝ 5092, 1912 թվականին՝ 4713, 1914 թվականին՝ 5945 փթի:

5. Հացահատիկային կուլտուրաների և անասնապահության վիճակը Հայաստանում

Գյուղատնտեսութեան պատկերը լրիվ լինելու համար համառոտակի կանգ առնենք նաև հատիկային կուլտուրաների արտադրութեան և անասնապահութեան զարգացման հարցերի վրա:

Դժբախտաբար գյուղատնտեսութեան այդ երկու ճյուղերի վերաբերյալ վիճակագրական տվյալները վերին աստիճանի խղճուկ, ցրված և ոչ լիարժեք են: Ուստի դժվար է տալ նրանց բազմակողմանի բնութագիրը: Մենք կաշխատենք միայն նրկարագրել այդ ճյուղերի ընդհանուր վիճակը և դրանից որոշ հետևություններ անել:

Վերջենք ցորենի և գարու արտադրութեան բացարձակ աճը և համեմատենք բնակչութեան աճի հետ (էջ 163):

Թվական տվյալները ցույց են տալիս, որ 44 տարվա ընթացքում ցորենի և գարու արտադրութեանն աճել է ավելի քան երկու անգամ: Բայց այդ կատարվել է բացառապես ցանքսի էքստենսիվ աճի միջոցով: Այդ նույն ժամանակաշրջանում բերքատվութիւնը ոչ միայն չի աճել, այլ անգամ միջին տարեկանի առումով զգալիորեն իջել է: Դա բացատրվում է մի շարք հանգամանքներով: Այդ հանգամանքները հիմնականում շարագրել ենք գյուղացիական ռեֆորմի կապակցութեամբ: Երկրորդ հետևությունը, որը կարելի է անել աղյուսակում բերած տվյալներից, դա այն է, որ հացահատիկի արտադրութեան աճը հարաբերականորեն հետզհետե ետ է մնում բնակչութեան աճից և այդ պատճառով էլ մեկ շնչին ընկնող արտադրանքը

Տարեկան և քառամսյա արտադրությունը երևանի նահանգում

Տարիներ	Ցանկանալի և փթեթով				Ստացված և բերք					
	զգման	վճար	մարտի 4-ից հոկտեմբերի 31-ը	մոզր-տեղի	զգման	վճար	(մյտ) բոս	մոզր-տեղի	միվթ-նիտրի	չ բարդ-հոկտեմբերի 31-ը
1870	1184,4	3221	3,4	1506,5	85530,0	3536,6	8,0	12089,6	445,7	27,3
1882	1928,1	496,1	4,0	2424,2	9622,7	2397,1	5,0	12019,8	611,6	19,6
1883	2157,9	512,2	4,3	2669,9	11543,6	2619,3	5,3	14162,3	621,5	22,8
1884	2306,5	576,1	4,6	2882,6	12962,2	3244,5	5,5	16206,7	631,6	25,7
1885	2270,5	554,1	4,4	2824,6	13083,9	2899,7	5,6	15983,6	642,0	24,9
1886	2113,0	599,6	4,2	2712,6	9029,7	2318,4	4,2	11348,1	652,1	17,4
1892	2776,7	879,9	5,2	3656,6	9492,2	2503,6	3,4	12295,8	701,3	17,5
1893	2231,1	635,5	4,1	2866,6	6839,9	2138,6	3,1	8978,5	703,5	12,8
1894	1892,6	753,0	3,7	2645,6	8269,3	3563,1	4,5	11832,4	716,3	16,5
1895	1733,5	769,1	3,4	2502,6	9652,8	4502,5	5,7	14185,3	728,3	19,4
1896	2175,3	993,4	4,2	3155,7	9941,5	5700,0	5,0	15641,5	741,7	21,0
1902			3,6	3131,7			5,6	15980,0	866,3	21,9
1903			3,6	3184,9			5,1	16047,4	875,3	18,3
1904	2317,6	814,6	3,5	3132,2	9402,3	3688,2	4,2	13090,5	886,8	11,7
1905	2105,3	886,9	3,3	2842,3	9169,1	3970,5	4,5	13139,6	895,8	14,6
1906	2371,8	885,3	3,5	3207,1	8001,7	2773,2	3,4	10774,9	913,6	11,8
1912	2193,3	899,9	3,1	3093,2	12929,4	5513,2	6,0	18442,6	991,5	18,6
1914	2306,1	918,1	3,1	3224,2	12017,8	4417,4	5,1	16435,2	1025,4	16,0

պակասում է: Մեկ շնչին ընկնող արտադրանքը 44 տարվա ընթացքում 27,3 փթից իջել է 16 փթի: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ քանակը կփոքրանա, եթե մենք սերմացուն հանենք:

Նյունպիսի վիճակ էր տիրում անասնապահության ասպարեզում: Հայաստանի բնակլիմայական պայմանները բարենպաստ են անասնապահության զարգացման համար, հատկապես եթե նկատի ունենանք նրա հարուստ ամառային արոտավայրերը: Սակայն անասնապահությունը զարգանում էր ավելի դանդաղ և ավելի զգալի նահանջներ կատարելով, քան հյատիկային կուլտուրաները:

Այդ մասին է խոսում հետևյալ աղյուսակը.

Անասնապահությունը Հայաստանում

Տարիներ	Ընդամենը անասուն	Այդ թվում					Բնակչ. ընդ. թիվը	Բնակչ. 100 հոգի ընկն. է		
		ձիեր	խոզեր եղջ. անասուն	մանր եղջ. անաս.	ջորիններ, էջեր, ուղտեր	խոզ		ձի	խոզեր եղջ. անասուն	մանր եղջ. անասուն
1870	1038,7	39,6	274,7	699,3	32,9	3,2	445,7	8,9	61,6	154,7
1886	1047,0	40,0	270,0	700,0	34,0	3,0	652,1	6,1	41,4	107,3
1887	1188,0	45,0	278,0	820,0	41,0	4,0	662,2	6,8	42,0	123,8
1889	1065,0	43,4	318,1	667,6	35,3	06	679,7	6,4	46,8	98,2
1891	1074,6	35,6	336,1	664,0	32,2	2,7	690,5	5,2	48,7	96,7
1899	1488,3	39,0	448,0	966,9	32,7	2,7	818,3	4,5	54,7	118,1
1901	1165,9	39,0	441,0	650,0	33,2	2,7	628,7	4,7	55,2	78,5
1902	1256,3	33,4	444,4	755,2	35,6	2,7	853,4	4,5	49,7	88,4
1903	1375,7	39,1	516,1	782,3	35,5	2,7	866,3	4,5	59,5	90,0
1904	1770,4	49,7	521,9	1163,5	32,6	2,7	875,3	5,7	59,6	133,0
1904	2007,3	48,9	633,8	1284,6	33,3	2,7	986,8	5,6	71,5	145,3
1905	1975,3	45,9	613,8	1290,8	32,1	2,7	895,8	5,1	68,5	143,0
1906	1731,6	36,7	606,7	1054,3	31,2	2,7	913,6	4,0	66,4	115,4
1906	1354,2	39,9	442,3	835,0	33,8	2,7	942,6	4,2	47,0	89,6
1909	420,8	41,1	486,2	854,7	36,1	2,7	955,2	4,3	50,9	89,5
1910	1367,0	42,7	464,0	821,4	36,2	2,7	966,9	4,4	48,0	85,0
1911	1380,2	44,0	479,9	817,5	36,1	2,7	978,1	4,5	49,0	85,6
1912	143,2	36,1	437,1	921,7	32,6	2,7	991,5	3,6	44,5	93,0
1914	1516,2	29,0	444,6	1009,6	30,3	2,7	1025,4	2,8	43,0	98,4

Աղյուսակից երևում է, որ ձիերի, շորիների, էշերի և ուղտերի քանակը 1870 թվականից մինչև 1914 թվականը համարյա մնացել է անփոփոխ, իսկ խոշոր և մանր եղջերավոր անասունների զխաքանակը, զգալի վերելք ապրելով մինչև 1904 թվականը, նորից ապրում է վայրէջք: 1914 թվականի վիճակը համեմատելով 1870 թվականի հետ, կստանանք հետևյալ պատկերը՝ խոշոր եղջերավոր անասունների զխաքանակի աճը հավասար է մոտ 162 տոկոսի, իսկ մանր եղջերավորներինը՝ 147 տոկոս:

Ինչպես տեսնում ենք, անասնապահության զարգացումը ավելի դանդաղ է ընթացել, քան հացահատիկի արտադրությունը: Բնական է, որ մեկ շնչին ընկնող անասունների զբառանակը ավելի մեծ չափով պետք է նվազեր:

Թվերը ցույց են տալիս; որ բնակչության յուրաքանչյուր հարյուր շնչին ընկնող զխաքանակը իջել է ձիերի գծով 8,9-ից 2,8-ի, խոշոր եղջերավոր անասուններինը՝ 61,6-ից 43,8-ի և մանր եղջերավորներինը՝ 154,7-ից 98,4-ի:

Այսպիսով, ակներև է գյուղատնտեսության այդ երկու հիմնական ճյուղերի դանդաղ զարգացումը և համեմատաբար հո մնալը բնակչության աճից: Անկասկած է, որ հետոեֆորմյան ժամանակաշրջանում այդ ճյուղերում նույնպես կատարվել են բեռնացում, կապիտալիստական հարաբերությունների առաջացման իմաստով: Մի կողմից, առաջ են եկել ապրանքային հաց արտադրող կուլակային տնտեսություններ և խոշոր անասնապահներ ու անասնավաճառներ (չովդարներ) և, մյուս կողմից, հողագործի և անասնագործի գյուղացիներ, որոնք վաճառել են իրենց աշխատուժը: Վերստիաձեն, որը հետազոտել է Ալեքսանդրապոլի գավառը, իր 1910 թվականի լույս ընծայած աշխատության մեջ գրում է. «Գավառում ապրող 19793 ծխերից 2839-ը կամ 14,34 տոկոսը աշխատող անասուն բուրրովին շունի»¹: Սուրմատինը, որը հետազոտել է նոր Բայազետի գավառը իր 1908 թ. լույս ընծայած հոդվածում գրում է. «7073 ծխերից 856-ը բուրրովին անասուններ

¹ Версоладзе, Обзор Александропольского податного участка, 1910 г., էջ 58:

շունեն»¹: Այդ կազմում է ընդհանուր ժխերի ավելի քան 12 տոկոսը: Նույնպիսի տեղեկություններ են տալիս նաև մյուս գավառների հետազոտողները:

Դժվար չէ այդ փաստերից եղբակացնել, որ աշխատող անասուններ շունեցող գյուղացիները շեն կարող իրենց ձեռքում պահել օգտագործվող հողաբաժինները: Նրանք այդ հողերը որպես կանոն վաճառում են, գրավ դնում պարտքերի դիմաց, կամ կիսրար տրամադրում են ունևոր գյուղացիներին, իսկ իրենք դառնում վարձու բանվորներ:

Անասնապահությունը համեմատաբար ավելի զարգացած էր Կարսի մարզում: Այստեղ յուրաքանչյուր 100 շնչին 1891 թվականին ընկնում էր խոշոր եղջերավոր անասուններ՝ 118 գլուխ, մանր եղջերավոր անասուններ՝ 205 գլուխ: Եղած տվյալները թույլ են տալիս ասելու, որ հետագա տարիներին այդտեղ էլ աստիճանաբար նվազում է անասունների գլխաքանակը: Այսպես, օրինակ, 1891 թվականին ձիերի, խոշոր ու մանր եղջերավոր անասունների քանակը կազմում էր 685074, 1892 թվականին՝ 627256 և 1893 թվականին՝ 602749 գլուխ:

Անասնապահության դանդաղ աճը և անկումը պետք է բացատրել գյուղատնտեսության ընդհանուր վիճակով:

6 Հայաստանի տնտեսական հետամնացությունը

Ցարական Ռուսաստանը իրավացիորեն համարվում էր ագրարային ինդուստրիալ երկիր: Նրա համախառն արտադրանքի ավելի քան 52 տոկոսը ստացվում էր գյուղատնտեսությունից:

Հայաստանը Ռուսաստանի ամենահետամնաց ժայռամասերից մեկն էր: Գոյություն ունեցող տվյալների համաձայն արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը արտահայտված փողով (այդ թվում նաև արհեստավորական և արհեստագործական) 1900 թվականին կազմում էր ընդհանուր

¹ Соломатин, Опыт исслед. сельской поземельной общины в Ново-Баязетском уезде *тбу* П. К. на 1908 г.

արտադրանքի միայն 5,9 տոկոսը: Մնացած արտադրանքը ստացվում էր գյուղատնտեսությունից: Այդ թվում՝ հատիկային կուլտուրաներ 55,2 տոկոս, բամբակազործությունը 13,2, անասնապահությունը 11,6, խտաբույսերը 9,3, խազողազործությունը 3,3, բանջարաբուծությունը 0,8, պտղազործությունը 0,7, մետաքսազործությունը 0,3 տոկոս, այլ աղբյուրներից ստացվող հասույթները 1,5 տոկոս¹: Եկամտաբեր աղբյուրների այդ հարաբերակցությունը շնչին փոփոխություններ պահպանվել է նաև հետագայում:

Արդյունաբերության այդ աննշան տեսակարար կշիռը ստում է այն մասին, որ Հայաստանը առանձին վերցրած չէր կարելի համարել ինդուստրիալ ազրարային երկիր, նա հետամնաց ֆեոդալական հարաբերություններով պարուրված ազրարային երկիր էր:

Հայաստանը տնտեսական դարգացման առումով ետ էր ոչ միայն Ռուսաստանից, ամբողջությամբ վերցրած, այլև համեմատած Թբիլիսիի և Բաքվի նահանգների հետ: Այդ մասին են վկայում 1913 թվականին Կիևում հրատարակված «Статистика—экономический очерк областей, губерний, городов России» տվյալները: Այդ տվյալների համաձայն մենք կազմել ենք հետևյալ աղյուսակը (էջ 168): Թվերը ցույց են տալիս, որ Երևանի նահանգը և Կարսի մարզը տնտեսական դարգացման տեսակետից ետ էին մնում Թբիլիսիի և Բաքվի նահանգներից: Հայաստանը ետ էր մնում արդյունազործության, առևտրի, տրանսպորտի և քաղաքային բնակչության աճի տեսակետից: Հայաստանի բնակչության մոտ 85 տոկոսը դրադվում էր գյուղատնտեսությամբ:

Իսկ ի՞նչ էր ներկայացնում գյուղատնտեսությունը: Անասնապահության հատիկային կուլտուրաների արտադրության վիճակը արդեն ցույց տվեց, որ տնտեսության այդ ճյուղերը դարգանում էին վերին աստիճանի դանդաղ, և այդ պատճառով բնակչության մեկ շնչին ընկնող արտադանքը տարեցտարի նվազում էր:

¹ 1902 թ. Հուլիսի 1-ին թվականի վերջին տվյալները որոշ չափով տարբերվում են, հատկապես հատիկային կուլտուրաների դեմով, միաժամանակ բաց է թողնված անասնապահությունը:

Բնակչության զբաղվածությունը և արդյունաբերությունը Բրիլիսիի, Բախվի-
Երևանի նահանգներում և Կարսի մարզում

	Ինֆլիսիի նահանգ	Բաքվի նահանգ	Երևանի նահանգ	Կարսի մարզ
Բնակչության թիվը	1145400	995600	943700	364700
Այդ թվում քաղաքում	250900	263800	93,900	41400
յուրաքանչյուր 1000 հոգուց զբաղված են՝				
գյուղատնտեսությունում	657	680	865	823
արդյունաբերության մեջ և արհեստագործությունում	85	93	33	27
Առևտրով	46	54	23	22
մասն. ծառայությունում տնային ծառայությունում և օրավարձով	53	72	22	27
Տրանսպորտում	22	37	9	5
Ֆարրիկա-գործարանային արտադրությունը				
Ֆարրիկա-գործարանային ընդ- արտադր. ուր.	7694000	28400000	2093000	741000
բանվորների թիվը	11755	28000	10148 ¹	1345

Գյուղատնտեսության, ինչպես նաև անասնապահության զարգացումն արգելակող պատճառները երկուսն էին՝ նյութա-տեխնիկական պայմանները և սոցիալական հարաբերու-թյունները: Առաջինը պայմանավորված էր երկրորդով: Չնա-յած դրան, ճիշտ կլինի սկզբում վերլուծել նյութա-տեխնի-կական պայմանները և հետո պարզարանել նրանց նպաստող կամ կաշկանդող հարաբերությունները:

Նյութա-տեխնիկական պայմանների մեջ մենք վերցնում ենք երեք հիմնական գործոններ՝ գյուղատնտեսական գործիք-ները, ոռոգման սիստեմը և արտադրության կազմակերպումը:

Վերցնենք գյուղատնտեսության տեխնիկական զինվածու-թյունը: 1914 թվականի հուլիսից տվյալներով Երևանի նա-հանգներում կար՝ 62800 արոր, 5672 փայտե դուրբան, 6552 երկաթե դուրբան, 22487 փայտյա փոցյա 3100 փայտյա փոցյա

¹ Երևանի նահանգի բանվորների բանակից 3172 հոգին ջրաղացներում աշխատողներն էին:

երկաթե ատամներով, 5852 քամհար, 245 ձիափոցիս, 68 խոտհնձիչ, 6 հնձող մեքենա, 5 ցանող մեքենա, 6 հատ քաղհանելու գործիք: Այս էր գյուղատնտեսության տխնիկական հիմքը: Միանգամայն պարզ է, որ այդ պայմաններում անհնարին էր ուսցիոնալ հողագործություն վնարել:

Նշված տվյալների համաձայն Երևանի նահանգում գյուղատնտեսության բնագավառում դրազված ծխերի քանակը հասնում էր մոտ 80 հազարի: Այդ 80 հազար տնտեսություններից միայն 6535 տնտեսություն կամ 8,1 տոկոսը երկաթե գութան ունեին: Մնացած տնտեսությունները գործադրում էին ամենապրիմիտիվ գյուղատնտեսական գործիքները: Ահա թե ինչ է արձանագրել Երևանի նահանգային ատյանը 1902 թվականին: «Գյուղի բնակչության մեծամասնության կողմից հողը մշակվում է ամենապրիմիտիվ եղանակներով, ցավոք սրբաբախաբար ուսցիոնալ տնտեսություն վարելու փորձեր չեն նկատվում»:

Ինչպես արձանագրված է գյուղատնտեսական արդյունաբերության կարիքների նահանգային կոմիտեի ամփոփագրում, գյուղացիները լավ են հասկանում գյուղատնտեսական նոր գործիքների օգտագործման նշանակությունը, բայց նրանք ի վիճակի չեն ձեռք բերելու այդ գործիքները:

Գյուղատնտեսության բարձրացման երկրորդ կարևոր գործոնը ոռոգումն է: Չնայած 1870 թվականից հետո ցանքսի տարածությունը ավելի քան կրկնապատկվել է և շրջանառության մեջ են առնվել համեմատաբար ավելի ցածրորակ հողամասեր, ոռոգման միջոցները ավելացել են շնչին շափով: Միակ խոշոր կառուցումը, որը հետոեֆորմյան շրջանում կատարվել է այդ ասպարեզում, Արազդայանի ջրանցքն էր: Այնինչ ջուրը վճռական նշանակություն ունի ուսցիոնալ գյուղատնտեսության կազմակերպելու տեսակետից: «Ոռոգման միջոցների այդ անբավարար վիճակը, — ասում է այդ հարցը հետազոտող Չերնոմորսկին, — գլխավոր և ամենակարևոր պատճառն այն բանի, որ մի կողմից, անընդհատ աճում են բոլոր կենսամիջոցների գները, իսկ մյուս կողմից, ուժեղանում է մի շարք շրջանների աղքատացումը»¹:

¹ ՀՍՍՌ ԿՊԱ, ք. 113, գ. 469, ք. 9:

Երևանի նահանգում հանդիպում են հողային մեծ տարածութուններ, որոնք անշուր և անմարդաբնակ են, ոռոգման շուր չլինելու հետևանքով, այդ նույն բանը ասվում է բազմաթիվ փաստաթղթերում:

Վերջապես գյուղատնտեսության բարձրացման երրորդ հիմնական պայմանը, ինչպես նշել ենք, արտադրության կազմակերպումն է. այն պահին, երբ արտադրությունը ասլրանքային ուղղություն է ստանում և զարգացումը կապիտալիստական տեղեկնց ունի, գյուղատնտեսությունը զարգանալ կարող է միայն տնտեսությունների խոշորացման ճանապարհով: Մանր, գաճաճ, ցածր արտադրողականություն ունեցող գյուղական տնտեսություններն անկարող են կիրառել զարգացած գյուղատնտեսական գործիքներ, կառուցել ջրանցքներ, վարել ոռոգիտնալ հողագործություն և այլն: Միայն սեփականության կապիտալիստական ձևի գոյացման և տնտեսությունների խոշորացման վրա է հնարավոր մեծացնել կուտակումները, կիրառել նորագույն տեխնիկա, արտադրությունը փոխադրել վարձու աշխատանքի, կատարել աշխատանքի բաժանում և այլն. հենց այստեղ էլ հանդես են գալիս գյուղատնտեսության զարգացման համար պահանջվող սոցիալական հարաբերությունները:

Ամբողջ խնդիրն այն է, որ ցարիզմի զաղութարարական քաղաքականության հետևանքով Հայաստանում գյուղացիական ռեֆորմը չկենսագործվեց: Հենց այդ էլ Հայաստանում անհնար դարձրեց կապիտալիստական հունով գյուղատնտեսության արագ զարգացումը: Այդ հավասարապես վերաբերում է թե՛ կալվածատիրական, և թե՛ արքունապատկան հողատիրությունը: Երկու տեղերում էլ գյուղացին չդարձավ սեփականատեր և չազատագրվեց ֆեոդալական շահագործումից: Միանգամայն սխալ պետք է համարել այն տեսակետը, որ իբր թե արքունապատկան հողերի վրա ասլրող գյուղացիները ֆեոդալական կախման մեջ չէին գտնվում, և այդ պատճառով էլ գյուղատնտեսությունը այստեղ զարգանում էր անկաշկանդ: Այդ տեսակետը հատկապես զարգացրել է Խ. Ավ-

¹ Черноморский—О водопроводах в Эриванской губ. стр. 3.

դալրեկյանը: «Մինչդեռ XIX դարի երկրորդ կեսից ի վեր Հայաստանի նստակյաց ու կիսաքոչվորական շրջաններում, ուս գյուղերում, — գրում է նա, — ծավալվում էր դաշտավարութունը... հացահատիկային դաշտերում տարեցտարի ընդարձակվում էին թանկարժեք մշակույթները, երկդաշտյան (տարեմեջ խամ թողնելու) սխտեմին փոխարինում էին ցանքափոխության, պարարտացման և ուրիշ միջոցառումները, մեծանում էր բանուժ կլանող ոռոգման աշխատանքները: սպահանջը, գալի հեղաշրջում էր կատարվում ժողովրդական տնտեսության բնագավառում և հասարակական փոխհարաբերությունների մեջ, իսկ մուլքադարական գյուղերը բռնի կերպով պահվում էին խանական կառավարման ժամանակ գոյացած և այն ժամանակվա հարաբերություններին համապատասխանող հողային, տուրքային ու աշխատանքային պայմաններում»¹: Խ. Ավդալրեկյանը կատարյալ թյուրիմացության մեջ է: Արքունատիրական հողատիրության բնագավառում ոչ մի առանձին հեղաշրջում չի կատարվել ո՛չ գյուղատնտեսության մեջ, ո՛չ էլ հասարակական հարաբերությունների ստպարեզում: Արքունապատկան հողերի վրա ապրող գյուղացիները, որոնք կազմում էին գյուղացիության բացարձակ մեծամասնությունը, գտնվում էին միևնույն ֆեոդալական հարաբերությունների պայմաններում և նրանց վիճակը էսպես ոչնչով չէր տարբերվում մասնակալածատիրական հողերի վրա ապրող գյուղացիների վիճակից:

Երկու դեպքում էլ գյուղացիները իրենց հողերի սեփականատերերը չէին, նրանք կախման մեջ էին հողատերերից և այդ պատճառով պարտավոր էին իրենց աշխատանքի արդյունքի մի մասը տալ նրանց ու նրանց համար կատարել զսնազան այլ կարգի աշխատանքներ:

Նրանց միջև գոյություն ունեցող տարբերությունն այն էր, որ արքունապատկան հողերի վրա ապրող գյուղացիները տուրքը վճարում էին փողային ձևով, իսկ մասնատիրական հողերի վրա ապրող գյուղացիները՝ բնամթերքով: Բայց

¹ Խ. Ավդալրեկյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում, Հայպետհրատ, 1959, էջ 115:

ունտայնի ձևերի փոփոխումից ֆեոդալիզմը չի դադարում ֆեոդալիզմ լինելուց: Եթե Խ. Ավդալբեկյանը խոր ուսումնասիրեք թեկուզ մեկ գյուղական հասարակութուն, որ միավորում էր մի քանի գյուղեր, սյարդ կղաղնար, որ արքունապատկան հողերի վրա ապրող գյուղացիներից դանձվող դանազան հարկերը կլանում էին նրա եկամուտների 20—35 տոկոսը և իրենց ծանրությամբ ոչնչով չէին տարբերվում մասնատիրական գյուղացիներից գանձվող պարհակներից: Եթե իրոք արքունապատկան հողատիրութունը այդպիսին լիներ, ինչպես նկարագրում է նա, այն ժամանակ Կարսի մարզը, որտեղ բացակայում էին մուլքադարական հարաբերութունները, կլիներ ավելի զարգացած մարզ, այնինչ նա Ռուսաստանի ամենահետամնաց մարզերից մեկն էր և տնտեսական զարգացման տեսակետից ետ էր մնում անգամ Երևանի հասանդից:

Այսպիսով, Հայաստանում տիրող սոցիալական հարաբերութունները, կաշկանդելով երկրի արտադրողական ուժերի զարգացումը, խափանում էին նաև տնտեսական զարգացումը:

Միայն սոցիալիստական կարգերի հաստատումը վերացրեց այդ կապանքները, լայն ասպարեզ տվեց արտադրողական ուժերի զարգացմանը, և աշխատավորներին ազատագրեց շահագործումից:


Սակայն, ինչքան էլ այդ հարաբերութունները կաշկանդեին երկրի արտադրողական ուժերի զարգացումը, նրանք չէին կարող կասեցնել այն նորի ձևավորումը և զարգացումը, որը սաղմնավորվել էր նրա ընդդեմը և, օրըստօրե ուժ առնելով, ձգտում էր ազատագրվել իրեն կաշկանդող կապանքներից:

Հայաստանը Ռուսաստանին միավորվելուց հետո, ցարական կառավարութունը բոլոր միջոցները ձեռնարկեց, որ Հայաստանում ամրապնդի ազնվականության տնտեսական դիրքերը և ուժեղացնի նրա ազդեցութունը գյուղացիության վրա: Ցարիզմի այդ ջանքերի գագաթնակետը հանդիսացավ այն, որ նա հողերի սահմանագծման ժամանակաշրջանում համայնքապատկան լավագույն հողերը կտրեց և սեփականության իրավունքով տրամադրեց կալվածատերերին: Բայց նա

դրանով իսկ կտրեց իրավական այն հնամաշ թելերը, որոնք դեռ պահպանվել էին գյուղացիների և ազնվականության միջև: Այդ թելերը մաշվել էին դեռ մինչև ռեֆորմը: Յարական կառավարութունը, ստեղծելով Հայաստանում իր վարչակառավարման սիտեմը և անվանելով բոլոր գյուղացիներին պետական գյուղացիներ, դրանով իսկ խաներին, աղալարներին, մելիքներին ու բեգերին արդեն իրավազրկել էր: Վերջիններիս և գյուղացիների փոխհարաբերութունները արդեն կարգավորվում էին այն իրավական նորմաներով, որոնք գոյութուն ունեին այդ հարաբերութուններից դուրս և կենտրոնացված էին ցարական վարչական մարմինների ձեռքում: Բայց, այնուամենայնիվ, մինչև ռեֆորմյան ժամանակաշրջանում դեռ մնացել էր որոշ իրավական կապ ֆեոդալների և գյուղացիության միջև: Գյուղացին, բացի կալվածատերերին իր եկամուտից բաժին հանելուց, պարտավոր էր վարել, ցանել և մշակել կալվածատիրոջ անձնական կարիքների համար առանձնացած հողամասը, հավաքել և փոխադրել բերքը, կատարել պահակային ծառայութուն, կատարել նրա կարգադրութունները և այլն:

Հետո ռեֆորմյան ժամանակաշրջանում, երբ կալվածատիրոջ հողը վերջնականապես և լիովին արդեն սահմանազատվել էր համայնքապատկան հողերից, գյուղացին պարտավոր էր նրան տալ միայն իր բերքի մի մասը, նրա անձնական կախման իրավական հիմքերը վերացել էին: Խնքնըստինքյան հասկանալի է, որ կապիտալիստական հարաբերութունների զարգացման պայմաններում կալվածատերը չէր կարող գյուղացու միջոցով մշակել իր սեփական հողը, իր ազդեցութունը ունենալ նրա վրա: Նա պետք է իր հողը մշակեր կապիտալիստական եղանակով, վարձու աշխատանքի միջոցով, կամ պետք է վաճառեր, իսկ գյուղացին պետք է ձգտեր փրկագրման միջոցով ազատագրվել պարհակներից: Այդ էր պատմության անողոք օրենքը:

Ցարիզմի օրոք, ինչպես նաև դաշնակցության տիրապետության ժամանակ, այդ հարցերը շլուծվեցին, ֆեոդալական հարաբերութուններին վերջ տվեց սոցիալիստական ռեուլուցիան:



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Գ Լ Ո Ւ Խ I

Գյուղացիական ռեֆորմը և ցարիզմի ագրարային
ֆաղափականությունը Հայաստանում

1. Հարցադրում	9
2. Հողային ռեֆորմը և պետական գյուղացիները	15
3. Հողային ռեֆորմը մասնավոր հողատերերի կալվածքներում	29
4. Փրկագնման գործառնություններ	45
5. Հողային ռեֆորմի տնտեսական հետևանքները	57
6. Մի քանի հետևություններ	65

Գ Լ Ո Ւ Խ II

Գյուղացիության ֆայֆայումը և կապիտալիստական
հարաբերությունների ձևավորումը

1. Նախնական դիտողություններ	66
2. Հողի, ջրի և արտադրանքների համայնական օգտագործման ձևերի քայքայում	74
3. Ապրանքափողային հարաբերությունների աճումը	88
4. Վաշխառուական կապիտալի ազդեցությունը գյուղացիների քայ- քայման վրա	100
5. Հարկերը և նրանց ազդեցությունը գյուղացիների քայքայման վրա	105
6. Կապիտալիստական վարձակալության զարգացումը	126
7. Գյուղացիության քայքայումը և պրոլետարիատի առաջացումը	133

Գ Լ Ո Ւ Խ III

Առևտրական հողագործության աճը

1. Թամբակի արտադրությունը	141
2. Խաղողագործություն	149
3. Միախոտի արտադրությունը	157
4. Շերամապահություն	160
5. Հացահատիկային կուլտուրաների և անասնապահության վիճակը Հայաստանում	162
6. Հայաստանի տնտեսական հետամնացությունը	166

ՄԻՔԱՑԵԼ ՆԻԿՈՒԱՑԻ ԵԳԱՆՑԱՆ

Հայաստանի հեռաձեփարմյան ազգային
հարաբերությունները

Խմբագիր՝ Ս. Ս. Հակոբյան
Նկարիչ՝ Հ. Հովհաննիսյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Ա. Խաղիկյան
Տեխ. խմբագիր՝ Ն. Ախիրյան
Վերստ. սրբագրիչ՝ Է. Պողոսյան

ՎՅ 09110

Պատվեր 1041


Տիրաժ 2000

Հանձնված է արտադրության 22/V 1964 թ.:

Ստորագրված է տպագրության 5/IX 1964 թ.:

Թուղթ՝ 84 X 108¹/₃₂՝ Տպագր. 11,0 մամ., = 9,02 պայմ. մամ.
հրատ. 8,2 մամ.:

ՀՍՍՐ Արտադրության նախարարության տեխնիկական կոմիտեի
Պոլիտեխնիկական գիտությունների ակադեմիայի գիտական կոմիտեի
Պոլիտեխնիկական գիտությունների ակադեմիայի գիտական կոմիտեի
Պոլիտեխնիկական գիտությունների ակադեմիայի գիտական կոմիտեի





9400 19 4.

h₂